# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

3 (113). 2022



## ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐ

## ПЕРСПЕКТИВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ПОВЫШЕНИЯ ОБОРОНОСПОСОБНОСТИ ГОСУДАРСТВА И МОЩИ ВООРУЖЕННЫХ СИЛ

## PERSPECTIVE DIRECTIONS OF IMPROVING THE NATIONAL DEFENSE CAPABILITY AND ARMED FORCES POWER

# ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ



Ֆրանսիա կատարած աշխատանքային այցի ժամանակ
Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար
Սուրեն Պապիկյանի հանդիպումը
Ֆրանսիայի Հանրապետության Պաշտպանության նախարար
Սեբաստիեն Լեկոռնյուի հետ

Փարիզ, 2022 թ. սեպտեմբերի 27



Հնդկաստան կատարած աշխատանքային այցի ժամանակ
Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար
Սուրեն Պապիկյանի հանդիպումը
Հնդկաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար
Շրի Ռաջնաթ Սինկհի հետ

Գանդինագար, 2022 թ. հոկտեմբերի 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

**3** (113). **2022**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Տավարածյան Գ. Վ.**
(նախագահ)
**Չիլինգարյան Դ. Ս.**
(գլխավոր խմբագիր)
**Այդինյան Ռ. Ա.**
**Այվազյան Լ. Գ.**
**Ասատրյան Ջ. Դ.**
(գլխ. խմբագրի տեղակալ)
**Մարտիրոսով Լ. Ա.**
**Շահնազարյան Թ. Ն.**
**Պողոսյան Ա. Մ.**
**Սարգսյան Ա. Գ.**
**Սիմոնյան Ս. Վ.**
**Ստեփանյան Հ. Լ.**
**Տեր-Գրիգորյանց Ն. Գ.**
**Քոչարյան Տ. Տ.**
**Քոչունց Կ. Գ.**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐ

*Գ. Վ. Տավարածյան,* Պաշտպանական բարեփոխումներն ու Զինված ուժերի զարգացումը ժամանակակից պատերազմների բնույթի հաշվառմամբ ........ 9
*Ա. Ս. Բաղդասարյան,* Ժամանակակից օպերացիաների վարման որոշ օրինաչափություններ և զարգացման միտումներ ........ 24
*Ա. Ս. Այդինյան,* Տարածքային պաշտպանություն՝ որպես պետության պաշտպանունակության մեծացման միջոցի կազմակերպման որոշ հարցեր ........ 36
*Մայքլ Հեյս, Բրենտ Ա. Անդերս,* ԱՄՆ-ի բանակի սերժանտական համակարգը. հաջողության լիարժեք պատկերում ........ 49
*Ա. Ա. Մինասյան,* Հայրենասիրությունը որպես պետության ռազմական հզորության ապահովման գործոն (սոցիալ-փիլիսոփայական վերլուծություն) ........ 73

### ՌԱԶՄԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

*Մ. Ա. Պետրոսյան,* Նորագույն տեխնոլոգիաների ազդեցությունը ժամանակակից պատերազմների և զինված հակամարտությունների հիբրիդային բնույթի վրա ........ 85
*Բ. Մ. Աղաջանյան, Ա. Մ. Շահվերդյան,* Հիբրիդային պատերազմը և դրա դրսևորումները Արևմուտք–Ռուսաստան առճակատման համատեքստում ........ 99

### ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

*Ս. Ա. Պարզյան, Ա. Ռ. Համբարձումյան, Լ. Գ. Հովհաննիսյան,* Լեռնային պայմաններում զինծառայությանը անձնակազմի պատրաստման որոշ առանձնահատկություններ ........ 115

**ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**
*Դ. Ս. Չիլինգարյան և ուրիշներ,* Համարի բառարան . . . . . . . . . . . . . . . . . . . 126

**ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

*Ն. Հ. Առաքելյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Գ. Ավագյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Լ. Ս. Արզումանյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, *Ս. Ա. Գալստյան,* *Ս. Գ. Գալստյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Ա. Գևորգյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Ա. Հախումյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Վ. Մ. Հարությունյան,* *Հ. Հ. Մաթևոսյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Մ. Ս. Մարգարյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Վ. Մարկոսյան,* տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ա. Հ. Մելիքյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Է. Գ. Մինասյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Վ. Գ. Սահակյան,* ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, *Հ. Յ. Սայադյան,* աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ռ. Ա. Սաֆրաստյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Վ. Վ. Սելիվանով* (ՌԴ), տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Յու. Մ. Սուվարյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Ս. Քոթանջյան,* քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), պրոֆեսոր, ՌԴ ՌԳԱ իսկական անդամ, *Տ. Տ. Քոչարյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

*Գ. Վ. Տավարածյան,* գեներալ-մայոր (նախագահ), *Տ. Տ. Քոչարյան,* գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (նախագահի տեղակալ), *Ա. Ս. Բաղդանյան,* գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, *Ա. Վ. Հայրապետյան,* գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, *Հ. Հ. Հովհաննիսյան,* գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, դոցենտ, *Դ. Մ. Մանասյան,* պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, *Մ. Ա. Պետրոսյան,* քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ, *Ս. Ա. Սուջյան,* աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, պահեստազորի գնդապետ

**«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)**

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**№ 3** (113)**. 2022**

Издается 4 раза в год

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ**

*Таварацян Г. В.* (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Айвазян Л. Г.*, *Айдинян Р. А.*, *Асатрян З. Д.* (зам. гл. редактора), *Кочарян Т. Т.*, *Кочунц К. Г.*, *Мартиросов Л. А.*, *Погосян А. М.*, *Саргсян А. Г.*, *Симонян С. В.*, *Степанян Г. Л.*, *Тер-Григорьянц Н. Г.*, *Шахназарян Т. Н.*

## СОДЕРЖАНИЕ

**ПЕРСПЕКТИВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ПОВЫШЕНИЯ ОБОРОНОСПОСОБНОСТИ ГОСУДАРСТВА И МОЩИ ВООРУЖЕННЫХ СИЛ**

*Г. В. Таварацян.* Оборонные реформы и развитие Вооруженных Сил с учетом характера современных войн . . . . . . . . . . . . 9 (22)*

*А. С. Багданян.* Некоторые закономерности ведения современных операций и тенденции их развития . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 24 (33)

*А. С. Айдинян.* Некоторые вопросы организации территориальной обороны как средства повышения обороноспособности государства . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 36 (46)

*Майкл Хейс, Брэнт А. Андерс.* Сержантская система Армии США. Полное представление успеха . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 49 (61)

*А. А. Минасян.* Патриотизм как фактор обеспечения военной мощи государства (социально-философский анализ) . . . . . . . . . . . 73 (82)

**ВОЕННАЯ СТРАТЕГИЯ**

*М. А. Петросян.* Влияние новейших технологий на гибридный характер современных войн и вооруженных конфликтов . . . . . . . 85 (110)

*Б. М. Агаджанян, А. М. Шахвердян.* Гибридная война и ее проявления в контексте конфронтации Запад – Россия . . . . . . . . . . 99 (111)

**ВОЕННАЯ МЕДИЦИНА**

*С. А. Парзян, А. Р. Амбарцумян, Л. Г. Оганнисян.* Некоторые особенности подготовки личного состава к прохождению службы в горных условиях . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 115

**ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ**

*Д. С. Чилингарян и др.* Словарь номера . . . . . . . . . . . . . . . . . 126 (128)

---

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

**НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:**

*А. Г. Авагян*, доктор исторических наук, профессор; *Н. У. Аракелян*, академик НАН РА; *Л. С. Арзуманян*, доктор филологических наук; *В. М. Арутюнян*, *А. А. Ахумян*, член-корреспондент НАН РА, доктор физико-математических наук, профессор; *С. А. Галстян*, *С. Г. Галстян*, доктор медицинских наук, профессор; *Г. А. Геворкян*, академик НАН РА; *Г. С. Котанджян*, доктор политических наук (РФ), профессор, действительный член АВН РФ; *Т. Т. Кочарян*, доктор политических наук, профессор; *М. М. Маргарян*, доктор политических наук, профессор; *М. В. Маркосян*, доктор технических наук, профессор; *Г. Г. Матевосян*, член-корреспондент НАН РА; *А. О. Меликян*, член-корреспондент НАН РА, доктор физико-математических наук, профессор; *Э. Г. Минасян*, доктор исторических наук, профессор; *В. Г. Саакян*, кандидат физико-математических наук; *Р. А. Сафрастян*, академик НАН РА; *О. Я. Саядян*, доктор географических наук, профессор; *В. В. Селиванов (РФ)*, доктор технических наук, профессор; *Ю. М. Суварян*, *академик НАН РА*

**ВОЕННО-НАУЧНЫЙ СОВЕТ:**

*Г. В. Таварацян*, генерал-майор (председатель); *Т. Т. Кочарян*, полковник, доктор политических наук, профессор (заместитель председателя); *А. В. Айрапетян*, полковник, кандидат военных наук; *А. С. Багданян*, полковник, кандидат военных наук; *Д. М. Манасян*, кандидат исторических наук, доцент; *Г. О. Оганисян*, полковник, кандидат военных наук, доцент; *М. А. Петросян*, кандидат политических наук, доцент; *С. А. Суджян*, кандидат географических наук, доцент, полковник запаса

**«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)**
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

**№ 3** (113)**. 2022**
Is published 4 times a year

**EDITORIAL BOARD**

*Tavaratsyan G. V.* (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Asatryan Z. D.* (Deputy Editor-in-Chief), *Ayvazyan L. G.*, *Idinyan R. A.*, *Kocharyan T. T.*, *Kochunts K. G.*, *Martirossov L. A.*, *Poghosyan A. M.*, *Sargsyan A. G.*, *Shahnazaryan T. N.*, *Simonyan S. V.*, *Stepanyan H. L.*, *Ter-Grigoryants N. G.*

# CONTENTS

**PERSPECTIVE DIRECTIONS OF IMPROVING THE NATIONAL DEFENSE CAPABILITY AND ARMED FORCES POWER**

*G. V. Tavaratsyan.* Defense reforms and Armed Forces development with a view on the nature of the modern warfare ............ 9 (23)*

*A. S. Baghdanyan.* Some regularities of conducting modern operations and their development trends .......................... 24 (34)

*A. S. Aydinyan.* Some questions on organizing the territorial defense as a means for improving the national defense capability ... 36 (47)

*Michael Hayes, Brent A. Anders.* The U.S. Army noncommissioned officer (NCO) system: a full understanding of success .............. 49 (62)

*A. A. Minasyan.* Patriotism as a factor for providing the military power of the state (socio-philosophical analysis) .................. 73 (83)

**MILITARY STRATEGY**

*M. A. Petrosyan.* The impact of high technologies on the hybrid character of modern wars and armed conflicts .................... 85 (112)

*B. M. Aghadjanyan, A. M. Shahverdyan.* Hybrid warfare and its manifestations in the context of the West – Russia confrontation .... 99 (113)

**MILITARY MEDICINE**

*S. A. Parzyan, A. R. Hambardzumyan, L. G. Hovhannisyan.* Some peculiarities of personnel training for military service in mountainous conditions .................................. 115

**MILITARY TERMINOLOGY**

*D. S. Chilingaryan and others.* Volume Dictionary ......... 126 (129)

---

* Numbers in brackets mean the page of the text in English.

**ACADEMIC-ADVISORY COUNCIL:**

*A. G. Avagyan*, Doctor of History, Professor; *N. H. Arakelian*, Full Member, NAS, RA; *L. S. Arzumanyan*, Doctor of Philology; *S. A. Galstyan*, *S. G. Galstyan*, Doctor of Medical Sciences, Professor; *H. A. Gevorkian*, Full Member, NAS, RA; *A. A. Hakhumyan*, Corresponding Member, NAS, RA, Doctor of Physical and Mathematical Sciences, Professor; *V. M. Harutyunyan*, *T. T. Kocharyan*, Doctor of Political Sciences, Professor; *H. S. Kotanjian*, Doctor of Political Sciences (RF), Professor, Full Member, Academy of Military Science, RF; *M. M. Margaryan*, Doctor of Political Sciences, Professor; *M. V. Markosyan*, Doctor of Technical Sciences, Professor; *H. H. Matevosyan*, Corresponding Member, NAS, RA; *A. H. Melikyan*, Corresponding Member, NAS, RA, Doctor of Physical and Mathematical Sciences, Professor; *E. G. Minasyan*, Doctor of Historical Sciences, Professor; *R. A. Safrastyan*, Full Member, NAS, RA; *V. G. Sahakyan*, PhD in Physical and Mathematical Sciences; *H. Y. Sayadyan*, Doctor of Geography, Professor; *V. V. Selivanov (RF)*, Doctor of Technical Sciences, Professor; *Yu. M. Suvaryan*, Full Member, NAS, RA

**DEFENSE-ACADEMIC COUNCIL:**

*G. V. Tavaratsyan*, MG (Chairman); *T. T. Kocharyan*, Colonel, Doctor of Political Sciences, Professor (Deputy Chairman); *A. S. Baghdanyan*, Colonel, PhD in Military Sciences; *A. V. Hayrapetyan*, Colonel, PhD in Military Sciences; *H. H. Hovhannisyan*, Colonel, PhD in Military Sciences, Associate Professor; *D. M. Manasyan*, PhD in History, Associate Professor; *M. A. Petrosyan*, PhD in Political Sciences, Associate Professor; *S. A. Sujyan*, PhD in Geography, Associate Professor, Colonel (Ret.)

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐ

# ПЕРСПЕКТИВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ПОВЫШЕНИЯ ОБОРОНОСПОСОБНОСТИ ГОСУДАРСТВА И МОЩИ ВООРУЖЕННЫХ СИЛ

# PERSPECTIVE DIRECTIONS OF IMPROVING THE NATIONAL DEFENSE CAPABILITY AND ARMED FORCES POWER

# ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՇՎԱՌՄԱՄԲ*

*Գ. Վ. ՏԱՎԱՐԱԾՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ*



ՀՀ Կառավարությունը 2021 թ. օգոստոսին ընդունել է «2021–2026 թթ. համար ծրագիր», որում, մասնավորապես, խնդիր է դրվել մշակելու ռազմական գործողությունների պլանավորման ու վարման նոր մեթոդներ, ինչպես նաև զորքերի կառավարման նոր համակարգ (ԶԿՀ)[1]: Տվյալ հանգամանքը պահանջում է զինված պայքարի վարման արդի մեթոդների ու հեռանկարում զինված ուժերի նկարագրի վրա դրանց ազդեցության լուրջ վերաիմաստավորում: Իսկ դա պարտադրում է կատարել ռազմարվեստի, առաջին հերթին՝ ռազմավարության զարգացման միտումների և ԶՈՒ-ի բարեփոխման ու արդիականացման հետ դրանց փոխներգործության օրինաչափությունների պատմական վերլուծություն:

Գիտության ու տնտեսության զարգացումը և որպես հետևանք՝ նոր սպառազինության ու տեխնիկայի մշակումն ու արտադրությունը միշտ էլ հանգեցրել են ռազմական գործում մեծ փոփոխությունների, եթե չասենք՝ հեղափոխության[2]:

Որպես արդյունք՝ 1920–1930-ական թվականներին ձևավորվեցին Վ. Ա. Տրիանդաֆիլովի «խոր օպերացիայի»[3] և մոտավորապես նույն ժամանակ Հանս ֆոն Սեկտի «բլիցկրիգի»[4] հայեցակարգերը: Դա առաջ բերեց ԶՈՒ-ի կառուցվածքում խոշոր տանկային և ավիացիոն խմբավորումների ստեղծմանն ու դրանց սերտ փոխգործության ձևավորմանը: Ընդ որում, «պատերազմելու եղանակի» վերաբերյալ հստակ պատկերացում չինելու հանգա-

---

* Հոդվածը նախնական տեսքով ներկայացվել է 15.08.2022: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 23.11.2022:

1 Տես ՀՀ Կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի մասին» հմ. 1363-Ա որոշումը (https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=155313), (02.08.2022):

2 Տես *Գ. Վ. Տավարածյան,* Պաշտպանական ոլորտում ռազմավարական պլանավորման և ռազմավարական որոշումների կայացման մեթոդաբանության որոշ հարցեր: «ՀԲ», 2021, հմ. 1, նաև՝ «Военно-экономическое развитие и безопасность». Под ред. Л. В. Панковой, О. В. Гусаровой. М., 2020:

3 Տես *В. К. Триандафиллов.* Характер операций современных армий. Изд. 3. М., 1936:

4 Տես *Karl-Heinz Frieser.* Blitzkrieg-Legende: Der Westfeldzug 1940 (Operationen des Zweiten Weltkrieges). Munchen, 1995:

մանքը ԽՍՀՄ-ում հանգեցրեց արագընթաց թեթևազրահ տանկերի (հարձակողական միջոց) ու կործանիչ ավիացիայի (պաշտպանողական դոկտրինի տարր) զարգացմանը, ինչն ուղեկցվում էր ուրիշի տարածքում պատերազմի վարման, համաշխարհային պրոլետարիատին աջակցության մասին քաղաքական հայտարարություններով, մինչդեռ Գերմանիայում շեշտը դրվեց ծանր տանկերի ու ռմբակոծիչ ավիացիայի (պաշտպանության ճեղքման միջոցներ) արտադրության վրա: Այս հայեցակարգերը մեզ հետաքրքրում են նաև այն պատճառով, որ առաջին անգամ հետևակը դադարում է օպերացիայում գլխավոր դերը խաղալուց և մղվում է հետին պլան:

1950–1980-ական թվականների տեղային պատերազմների փորձը և գերճշգրիտ զենքի (ԳՃԶ) ու զորքերի կառավարման ավտոմատացված համակարգերի մշակումն ու կիրառումը հանգեցրին տարաշարժուն ռազմական գործողությունների՝ «օդացամաքային օպերացիայի» հայեցակարգի մշակմանն ու ներդրմանը[5]: Այս հայեցակարգն առաջարկեց գեներալ Ուիլյամ Յու. Դեպյուն 1973 թ. «Դատաստանի օրվա» պատերազմի[*] փորձի ուսումնասիրության հիման վրա: Իրագործման օրինակ է «Փոթորիկ անապատում» հայտնի օպերացիան: Օդացամաքային օպերացիաները փոփոխեցին ԶՎՀ-ն. տեղի ունեցավ կառավարման կենտրոնացված համակարգից անցում դեպի ապակենտրոնացված համակարգ:

2000-ական թվականներին տեխնոլոգիաների և, որպես հետևանք, սպառազինության ու ռազմական տեխնիկայի հետագա զարգացումը հանգեցրեց ցանցակենտրոն պատերազմների հայեցակարգի մշակմանն ու ներդրմանը, ինչը, անշուշտ, բնորոշ էր տնտեսական ու ռազմական առումով զարգացած պետություններին[6]: Դրա վառ օրինակն է Իրաքի 2003 թ. պատերազմը:

Այս ուղղությանը զուգահեռաբար զարգանում էին նաև անհամաչափ ու հիբրիդային[7] պատերազմների, գերճշգրիտ ու ֆիզիկական նոր սկզբունքներով գործող զենքի տեսություններն ու պրակտիկան: Ռազմագիտական հանրությունում կա կարծիք, թե հաջորդ սերունդների պատերազմները լինելու են գիտութենակենտրոն:

Ինչպես երևում է, հենց օպերատիվ-ռազմավարական հայեցակարգերն են ուղղակիորեն ազդում զինված ուժերի զարգացման, դրանց կազմի ու

---

[5] Տես *Harold R. Winter.* Partnership and Tension: The Army and Air Force Between Vietnam and Desert Shield. “Parameters”, Spring 1996, Vol. 26, N 1; *А. А. Журавлев.* О воздушно-наземной операции. «Военная мысль», 1990, № 6:

[*] «Դատաստանի օրվա» պատերազմը 1973 թ. արաբա-իսրայելական զինված հակամարտության իսրայելական անվանումն է, որն ստացել է նաև միջազգային գործածություն:

[6] Ցանցակենտրոն պատերազմների մասին հանգամանորեն տես *Է. Վ. Սարկիսյան, Ա. Զ. Պետրոսյան,* Ցանցակենտրոն պատերազմը որպես նոր ձևի կազմակերպված և կառավարման նոր համակարգ: «ՀԲ», 2022, հմ. 1:

[7] Տես *Арсалан Билаль.* Гибридная война: новые угрозы, сложности и «доверие» как антидот. «Вестник НАТО», 30 ноября 2021 (https://www.nato.int/docu/review/ru/articles/2021/11/30/gibridnaya-vojna-novye-ugrozy-sloyonosti-i-doverie-kak-antidot/index.html), (29.07.2022):

գործողությունների ձևերի վրա, այլ ոչ թե հակառակը: Վերը բերված գործոնների և իրադարձությունների ազդեցությամբ է ստեղծվել պատերազմների ու զինված հակամարտությունների այժմյան ձևը:

Ըստ էության, սպառազինության ու ռազմական տեխնիկայի, այդ թվում՝ գերճշգրիտ զենքի, զորքերի կառավարման ավտոմատացված համակարգերի, պայքարի նոր ձևերի ու եղանակների (տեղեկատվական, կիբեռ-, անհամաչափ և այլն) ստեղծումն ու զարգացումը ժամանակակից պատերազմները դարձրել են կարճատև ու դինամիկ, հանգեցրել են որոշման ընդունման ու մարտական խնդիրների կատարման համար հատկացվող ժամանակի էական կրճատմանը, կառավարման մեթոդների ու ոճի փոփոխմանը, պատերազմի արվեստի և ընդհանուր առմամբ ռազմական գործի վերաիմաստավորմանը:

Ժամանակակից պատերազմներում «ծանրության կենտրոնը» հակառակորդի խմբավորումների ջախջախումից տեղափոխվում է դրանց բարոյական հյուծման, բարոյալքման, անզորության զգացումի ձևավորման վրա: Այլ կերպ ասած՝ այժմ «ծանրության կենտրոն» են դառնում հակառակորդի բնակչության և ԶՈՒ-ի անձնակազմի մտավոր կարողություններն ու բարոյահոգեբանական վիճակը: Դա են հաստատում արդի օպերատիվ-ռազմավարական հայեցակարգերը, ինչպիսին է, օրինակ, Ուորդենի օղակների հայեցակարգը[8]:

Ներկայիս պայմաններում էապես աճել է օդային հարձակման միջոցների, հատուկ օպերացիաների ուժերի և մեծ տարաշարժունությամբ մարտական գործողությունների դերը: Այդ պատճառով ժամանակակից պատերազմներում ջնջվում են հարձակման ու պաշտպանության միջև սահմանները, քանի որ դրանցում կիրառվող գործողությունների եղանակները որոշ բացառություններով գործնականում դառնում են նույնական:

Կառավարման ավտոմատացված համակարգերի, գերճշգրիտ զենքի երկուստեք լայն օգտագործումը, տեղեկատվական ու կիբեռպատերազմների միջոցների ակտիվ ներգործությունը, դեսանտադիվերսիոն ստորաբաժանումների լայն կիրառությունը հանգեցրին այն բանին, որ պաշտպանական բնագծի պահպանումը էլ ավելի է բարդանում՝ դառնալով մի առաջադրանք, որն այլևս չունի վճռորոշ նշանակություն, հավանաբար բացառությամբ միայն այն դեպքի, երբ բնագիծը սարքավորված է ամենաբարձր մակարդակով (երկաթբետոնային կառուցվածքներ, ստորգետնյա ուղիներ, թունելներ և այլն): Անգամ այս դեպքում էլ տվյալ խնդիրը լինելու է մարտավարական կամ առավելագույնս օպերատիվ մակարդակի, ինչպիսին էր Բրեստի ամրոցի պաշտպանությունը Հայրենական մեծ պատերազմում:

Յուրաքանչյուր պաշտպանվող կողմ պետք է պատրաստ լինի, որ այլևս չկա ռազմաճակատի հոծ գիծ, հարձակվող հակառակորդը ձեռնարկելու է

---

[8] Տես *John A. Warden (III).* Enemy as System. “Airpower Journal”, Spring 1995, N 9; նաև՝ *Գ. Վ. Տավարածյան*, Մարտական գործողությունների տեղափոխում հակառակորդի տարածք. ռազմավարական դիտարկում: «ՀԲ», 2019, հմ. 1:

մեծ թվով ճեղքումներ, իր ստորաբաժանումների ու զորամասերի շրջապատումներ: Հիմնական մարտական բեռը մեծապես բաժին է հասնելու դասակ–վաշտ և գումարտակ օղակի ստորաբաժանումներին[9]: Դա թելադրում է, որ պետական սահմանի պաշտպանության գործում, ինժեներական ամրաշինությունների կառուցումից բացի, անհրաժեշտ են նաև հավելյալ միջոցներ:

Ներկայիս տեղային պատերազմների ու զինված հակամարտությունների, այդ թվում՝ 2016 թ. Ապրիլյան մարտական գործողությունների, 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմի, ռուս-ուկրաինական օպերացիայի և այլ ռազմական հակամարտությունների փորձը ցույց է տալիս, որ սպառնալից շրջանի ու ռազմական գործողությունների ծավալմանը նախապատրաստման շրջանի տևողության կրճատման պայմաններում պետական սահմանի պաշտպանության համար միայն ինժեներական սարքավորումը բավարար չէ: Հարկավոր է առանձնակի ուշադրություն դարձնել պետական սահմանի ծածկապաշտպանության, պաշտպանությանն անցման ու դրա վարման եղանակի ճիշտ ընտրությանը, որպեսզի ստորաբաժանումները կարողանան լիարժեք կերպով կատարել իրենց մարտական խնդիրները: Պահակակետի կամ հենակետի փոքրաթիվ անձնակազմը, կտրված լինելով գլխավոր ուժերից և ենթարկվելով դասակից մինչև վաշտ ստորաբաժանման գրոհի, ի վիճակի չի լինում պաշտպանելու իր զբաղեցրած դիրքերը: Պաշտպանությանն անցնելու համար զորքերի առաջխաղացումը (տարաշարժը) կասեցվում է հակառակորդի գերճշգրիտ հարվածներով: Նման պայմաններում պաշտպանությունը դատապարտված է ծախողման: Դա ռազմական ղեկավարությունից պահանջում է կատարել պաշտպանության ռազմավարական վերանայում, ինչպես նաև մշակել մարտական հերթապահության և պաշտպանության կազմակերպման ու վարման նոր ձևեր ու եղանակներ:

Պետք է լինում նաև հաշվի առնել, որ ընդհանուր առմամբ մեծ քանակությամբ տարատեսակ գերճշգրիտ զենքերի կիրառման պայմաններում չափազանց բարդ են դառնալու ստատիկ գործողությունները:

Նպատակահարմար է առանձնակի շեշտել այն հանգամանքը, որ պատերազմներում էապես աճել են զորքերի ու զենքի կառավարման խաթարման, մարտական գործողությունների շրջանի տեղափակման, բնակչության ու ԶՈՒ-ի անձնակազմի բարոյալքման նպատակով ծեռնարկվող հատուկ օպերացիաների ուժերի, կոմանդո ստորաբաժանումների կիրառությունն ու նշանակությունը: Այդ ստորաբաժանումները թափանցում են պաշտպանության գծում եղած ճեղքերով, շրջանցում են ամրացված շրջանները, խուժում թիկունք, հարվածներ հասցնում գլխավոր ուժերին ու ենթակառուցվածքի

---

[9] Տես “Offense and Defense (ADP 3-90)”. Headquarters Department of the Army. Washington, DC, 31 July 2019 (https://irp.fas.org/doddir/army/adp3_90.pdf?fbclid=IwAR242BGiyCXZ0If7KQ6z2ZwYrVPqckfyjEOj0mdytdYaBVpfv7-bp-GIbY4), (06.08.2022); *H. Brandon Morgan.* How small units can prepare for large-scale combat operations. “Times”, 14 February 2020 (https://www.armytimes.com/2020/02/13/how-small-units-can-prepare-for-large-scale-combat-operations/?fbclid=IwAR0yFjgmcXAAphri4Iyh0Mr72 kt3JX0SmZSf8C7-Xdgzkq-9hnBhZuObMms), (03.09.2022):

օբյեկտներին՝ հակառակորդի ամբողջ տարածքը վերածելով մարտական գործողությունների գոտու, պաշտպանվող կողմի խոշոր ուժերին շեղելով գլխավոր խնդիրների կատարումից, բարոյալքելով բնակչությանն ու ԶՈՒ-ի անձնակազմին: Մոտոհետևակային զորամասերն արգելափակելու են առանձին պաշտպանվող ստորաբաժանումներին ու զորամասերին, ամրացված շրջանները, ոչնչացնելու են դրանք հրետանու և ԳՃԶ հարվածներով: Պրոբլեմը կարող է էլ՛ ավելի բարդանալ այն դեպքում, երբ չկա անհրաժեշտ ռազմավարական խորություն:

Հատուկ օպերացիաների ուժերի ստեղծումը, ՌԷՊ-ի համակարգի զարգացումը և ԳՃԶ թվաքանակի մեծացումը պետություններին հնարավորություն են տալիս կրճատելու ավանդական զորամիավորումների անձնակազմի թվաքանակը: Այդ միտքը լուսաբանենք մի օրինակով: Թուրքական բանակի ռազմատեխնիկական հիմքը հատուկ օպերացիաների ուժերի, «Կոմանդո» բրիգադների, ԳՃԶ և ՌԷՊ-ի միջոցների համատեղ կիրառությունն է: Դրա արդյունավետությունը փորձարկվել է Սիրիայում, Լիբիայում և այլ տեղերում: Տվյալ հայեցակարգի պահանջներին թուրքական Զինված ուժերի կազմակերպվածքի համապատասխանեցման նպատակով վերջին տարիներին կրճատվել են 13 մոտոհետևակային բրիգադներ և փոխարենը ձևավորվել 13 «կոմանդո» բրիգադներ, հաջողությամբ մշակվում են նոր տեսակների սպառազինություն ու ռազմական տեխնիկա[10]:

Արդի պատերազմներում հաղթանակի կարևոր պայման է դարձել ավելի որակյալ որոշումներ ընդունելու և դրանք հաջողությամբ կատարելու գործում հակառակորդին գերազանցելու կարողությունը, և այս առումով հարկ է հիշատակել «Բոյդի հանգույց» *(OODA Loop)* ամերիկյան տեսությունը[11]: Գերմանիայում կառավարման արդիական համակարգը, որը դեռ 19-րդ դարի եվրոպական պատերազմների վերլուծության հիման վրա մշակվել էր դեռ 19-րդ դարի վերջում – 20-րդ դարի սկզբում, կոչվում է «Աուֆտրագստակտիկ» *(«Auftragstatktik»)*, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում և մի շարք այլ արևմտյան պետություններում այն փոխառվել է և ստացել «առաջադրանքային կառավարում»[*] *(Mission Command)* անվանումը: Դրա էությունն է կառավարման փուլաշրջանի յուրաքանչյուր հատվածում հակառակորդից առաջ անցնելը և ավելի սեղմ ժամկետներում ավելի որակյալ որոշում ընդունելը, ինչպես նաև այդ որոշումը հակառակորդից ավելի արագ իրագործելը:

Բացի այդ, պատերազմը դիտվում է որպես երեք՝ մտային, բարոյական ու ֆիզիկական, ոլորտների միասնություն, որոնցից յուրաքանչյուրում նույն-

---

[10] Թուրքական «կոմանդո» բրիգադների մասին ավելի հանգամանորեն տես “Turkish Army” (https://www.allaboutturkey.com/army.html), (03.08.2022):

[11] Տես *Chet Richards.* Boyd’s OODA Loop. “J. Addams & Partners”, 21 March 2012; *John A. Warden (III).* Enemy as System. “Airpower Journal”, Spring 1995, N 9; *Գ. Վ. Տավարածյան*, Մարտական գործողությունների տեղափոխում հակառակորդի տարածք. ռազմավարական դիտարկում: «ՀԲ», 2019, հմ. 1:

[*] ՀՀ ԶՈՒ-ում ավելի տարածված է «հրամանատրում առաջադրանքի միջոցով» անվանումը, որը և՛ իմաստային, և՛ լեզվական առումով քննադատելի է:

պես անհրաժեշտ է գերազանցել հակառակորդին: Դրա համար պահանջվում են որոշակի բարոյական-գործարարական որակներով՝ նախաձեռնողականությամբ, ինքնուրույնությամբ, հանդգնությամբ օժտված սպաներ և, անշուշտ, սերժանտներ: Սպան, որն սպասում է լրացուցիչ հրամանների, հապաղում է՝ խուսափելով պատասխանատվությունից, փորձելով իրեն ապահովել սխալից, ժամանակակից պատերազմի բարդ իրադրությունում չի կարողանա հասնել հաջողության, կձախողի իրեն վստահված առաջադրանքի կատարումը:

Հույժ կարևոր է պատեհաժամորեն ընդունել որակյալ որոշումներ հենց ցածր մարտավարական օղակում, այսինքն՝ պահանջվում է ունենալ կատարելապես պատրաստված կրտսեր հրամանատարական կազմ: Նման կազմի անբավարարությունը կարող է հանգեցնել կենդանի ուժի և ՍՌՏ ծանր կորուստների[12]:

Համոզված ենք, որ խիստ զարգացած իշխանական ուղղաձիգով իրագործվող կառավարման համակարգերը, որոնք ճնշում են ենթակաների նախաձեռնողականությունը, չեն կարող գլուխ բերել իրենց առաջադրված խնդիրները: Միևնույն ժամանակ, կառավարման արդիական համակարգերին անհրաժեշտ սպաների պատրաստումը մեկ օրվա գործ չէ, այլ նպատակաուղղված քաղաքականություն[13]:

Այստեղ հարկ է նաև շեշտել այն փաստը, որ ներկայումս ավտոմատացված կառավարման ձյուղավորված համակարգերի կիրառումը հնարավորություն է տալիս կառավարումը պատասխանատվության աշխարհագրական գոտու ղեկավար մարմիններից փոխանցելու գործառութային հրամանատարությունների ղեկավար մարմիններին, ինչն արդեն տեղի է ունենում աշխարհի մի շարք առաջատար պետությունների զինված ուժերի բոլոր մակարդակներում: Դա ավելի է արագացնում իրադրությանը վերաբերող տվյալների հավաքումն ու վերլուծությունը և բոլոր մակարդակներում զորքերին խնդիրների առաջադրումը: Այդ իսկ պատճառով ստորաբաժանումները պետք է պատրաստ լինեն գործելու ոչ միայն առավելագույնս ինքնուրույնաբար, այլև լինեն ինքնաբավ ու ապահովված ինչպես նյութական ու տեղեկատվական, այնպես էլ իրավաբանական առումներով: Նման համատեքստում անհրաժեշտ է ավելի մանրակրկիտ ուսումնասիրել զորքերի կառավարման համակարգում բանակային կորպուսի դերն ու խնդիրները:

Քանի որ կառավարման փուլաշրջանը կրճատվել է և օպերացիան դարձել է ավելի դինամիկ, ապա նման պայմաններում կարող են հաջողությամբ

---

[12] Տես *James D. Sharpe Jr., Thomas E. Creviston.* Understanding mission command. 30 April 2015 (https://www.army.mil/article/106872/understanding_mission_command), (28.07.2022); նաև՝ *Ա. Մ. Պետրոսյան,* ԶՈւ-ի ղեկավարման միջազգային փորձը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Զինված ուժերի օրինակով: «ՀԲ», 2011, հմ. 1–2:

[13] Տես *Ն. Ն. Գոլովին,* Մարտի հետազոտություն. մարդու՝ որպես մարտիկի գործունեության և հատկությունների հետազոտություն: «ՀԲ», 1998, հմ. 1:

գործել միայն բավականաչափ բարձր աստիճանի կրթություն ունեցող սպաները, բավականաչափ լավ պատրաստականություն ունեցող շտաբները, բավականաչափ մեծ շարժառիթավորում ունեցող անձնակազմը: Որոշումների ընդունման գործընթացում պարտադիր կերպով պետք է ներգրավվի արհեստական բանականությունը[14]:

Ասվածից կարելի է հանգել այն եզրակացության, որ ժամանակակից համազորային օպերացիաների պայմաններում անհրատեսական է զորահավաքի միջոցով ձևավորված զորամասերից պահանջել մարտի բարդ տեսակներում հաջող գործողություններ, ուստի դրանք կարելի է օգտագործել միայն առանձին օժանդակ խնդիրների լուծման համար:

Ժամանակակից պատերազմներին բնորոշ է նաև այն, որ գերճշգրիտ զենքով նշանառվական հարվածի սպառնալիքի պատճառով դժվարացել են շարայուններով 20-րդ դարին բնորոշ մեթոդներով կատարվող մարտական գործողությունները (ռազմերթ, նեղ տեղամասերում ուժերի ու միջոցների կենտրոնացում, հակագրոհներ, դիրքային պաշտպանություն), ինչը հատկանշական էր նաև վերջին պատերազմում մեր զորքերի գործողությունների համար:

Բացի այդ, հետախուզության և խոցման միջոցների զարգացման հետևանքով էապես դժվարացել է խոշոր օբյեկտների (պահեստների, կառավարման կետերի, զրահատեխնիկայի շարայունների, թռիչքարանների) օգտագործումը, քանի որ դրանք բավական նկատելի են և հեշտությամբ են խոցվում: Այսինքն՝ տվյալ հանգամանքն անհրաժեշտ է հաշվի առնել զորքերի կազմակերպվածքի մշակման ժամանակ, առավել ևս, որ ներկայումս հարձակման օդային միջոցները գերազանցում են ՀՕՊ-ի միջոցների կարողությունները, ինչը նշանակում է, որ զորքերը գործելու են առանց ՕՀՄ-ից հուսալի ծածկապաշտպանության: Այդ պատճառով անիմաստ է ԶՈՒ-ի զարգացումը դիտել որպես միայն ԱԹԱ-ների* և այլ տեսակների ՍՌՏ գնում՝ առանց օպերացիաների վարման եղանակների ու ձևերի և կառավարման համակարգի փոփոխության:

---

[14] Ռազմական ոլորտում արհեստական բանականության օգտագործման որոշ հնարավորությունների և դրա հետ կապված մի շարք տարաբնույթ ռիսկերի մասին ավելի հանգամանորեն տես *Forrest E. Morgan, Benjamin Boudreaux, Andrew J. Lohn, Mark Ashby, Christian Curriden, Kelly Klima, Derek Grossman*. Military Applications of Artificial Intelligence. “RAND. Research Reports”, 2020, a short abstract (https://www.rand.org/pubs/research_reports/RR3139-1.html), (30.07.2022); *David Vergun*. Artificial Intelligence, Autonomy Will Play Crucial Role in Warfare, General Says. “DOD News” (with Appendix: “Spotlight”, “Newsroom”), 8 February 2022 (https://www.defense.gov/News/-Stories/Article/Article/2928194/artificial-intelligence-autonomy-will-play-crucial-role-in-warfare-general-says/), (30.07.2022); *Յու. Մ. Սուվարյան, Գ. Է. Հարությունյան,* Հանրային կառավարման համակարգում արհեստական բանականության կիրառության հիմնախնդիրներ: «ՀԲ», 2022, հմ 1:

* Անօդաչու թռչող ապարատ (ԱԹԱ) տերմինի փոխարեն հաճախ օգտագործվում է անօդաչու թռչող սարք արտահայտությունը (ԱԹՍ): Սակայն սարքը բառարաններում բացատրվում է որպես գործիք, հարմարանք, մինչդեռ դա ո՛չ գործիք է, ո՛չ էլ հարմարանք և կարող է կշռել մի քանի տոննա:– *Խմբ.*:

Եվս մեկ բնութագրական հատկանիշ է այն, որ նվազել է փողային հրետանու դերը (հատկապես՝ ոչ նորագույն նմուշների), քանի որ դրա արդյունավետությունն էապես զիջում է գերճշգրիտ զենքի արդյունավետությանը և՛ ժամանակի, և՛ հրաձգության դիպուկության տեսակետից:

Նոր պայմաններում նվազել է նաև տանկերի (հատկապես՝ արդիականացում չանցած նմուշների) դերը, քանի որ պայքարը հիմնականում դառնում է անշփում՝ հեռավար, իսկ տանկի նշանառվական հեռահարության գոտում խոցման օբյեկտ չի լինի:

Արդի պատերազմներում էապես աճել են տեղեկատվական ընդդիմամարտության դերը և ռազմական նշանակությունը: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ տեղեկատվական ընդդիմամարտության կարևոր նպատակներից է հակառակորդ պետության ղեկավարության ու զինված ուժերի, ինչպես նաև ամբողջ բնակչության մեջ օբյեկտիվ իրականության ձևախախտված ընկալման սերմանումը: Մեզանում տեղեկատվական ընդդիմամարտությունն ընկալվում է հիմնականում որպես ԶԼՄ-ներում ու սոցցանցերում ծավալվող հոգեբանական պայքար: Մինչդեռ, մեր կարծիքով, տվյալ գործընթացը կարող է ավելի արդյունավետ դարձնել տեղեկատվական պայքարի հետևյալ 7 հիմնական բաղկացուցիչ մասերի համալիր կիրառումը.

- իրական ժամանակի բանելակարգում լրիվ ուղղանկյուն կոորդինատների կամ նույնիսկ խոցվող օբյեկտների ամբողջական ելակետային տվյալների հավաքում, վերլուծություն և փոխանցում խոցման միջոցներին՝ առաջին կրակոցը կատարելու համար,
- ՌԳԹ-ում՝ բանակային կորպուսի գործողությունների գոտում և մարտի դաշտում ձևավորվող իրադրության մասին տեղեկույթի ճշգրտում և փոխանցում հրամանատարությանը, որպեսզի նա կարողանա ընդունել ավելի պատեհաժամ ու որակյալ մարտավարական և օպերատիվ որոշումներ ու հաջողությամբ վարել ռազմական օպերացիան,
- տեղեկույթի և տեղեկատվական համակարգերի ու ցանցերի արդյունավետ պաշտպանություն,
- ռադիոէլեկտրոնային, կիբեռ- և այլ տեսակի պայքարի միջոցներով հակառակորդի գործունեության ճնշում ու դժվարացում (նրա համար պատերազմի խութերի ստեղծում),
- հակառակորդին մոլորեցնելու նպատակով ռազմավարական, օպերատիվ ու մարտավարական մասշտաբի քողարկումային միջոցառումների իրականացում,
- հակառակորդի տեղեկատվական ներգործությունից զորքերի հուսալի պաշտպանություն,
- մեր գործադրած տեղեկատվահոգեբանական ներգործության արդյունավետության ապահովում:

Դրանից բացի, անհրաժեշտ է քաղաքական և ընդհանրապես ռազմավարական որոշումներ ընդունող անձանց զերծ պահել ԶԼՄ-ների ու սոցցանցերի հոգեբանական ներգործությունից, քանի որ այդ ժամանակ դժվարանում է կոշտ որոշումների ընդունումը, մեծանում է դրանց կայացման համար պահանջվող ժամանակը և նվազում է որոշումների որակը:

Ի՞նչ կարելի է արտածել վերը շարադրվածից.

ա) ռազմական շինարարությունը այնպիսի փոխկապված քաղաքական, տնտեսական, տեղեկատվական և բուն ռազմական միջոցառումների համալիր է, որոնք անհնար է պլանավորել և իրագործել միայն ՊՆ ու ԳՇ շրջանակներում,

բ) նպատակահարմար է թվում, որ ռազմական ռազմավարության (պատերազմավարության) մշակման ուղղությամբ աշխատանքների ալգորիթմը լինի հետևյալը. պաշտպանական ոլորտում ազգային շահերի որոշում, ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների որոշարկում, ազգային անվտանգության արդիական ռազմավարության հիմնադրույթների վրա խարսխվող ռազմական ռազմավարության մշակում, որով սահմանվեն ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների չեզոքացման ուղիները, այնուհետև՝ երկարաժամկետ պլանավորում, միջնաժամկետ պլանավորում և բյուջեավորում:

Հարկ է նշել, որ նպատակահարմար չէ մշակել մեր այնպիսի ռազմավարությունը, որով կապահովվեին հավանական հակառակորդի հետ ուժերի հաշվեկշռի պահպանումը և, հետևաբար, սպառազինությունների մրցավազքը: Միևնույն ժամանակ, մենք հետ ենք ընկնելու զարգացած պետություններից, եթե փորձենք կրկնել նրանց անցած ճանապարհը: Անհրաժեշտ է մշակել մեր շահերին համապատասխանող ուրույն ռազմական ռազմավարություն (պատերազմելու եղանակ): Իսկ դրա համար անհրաժեշտ է ազգային ռազմական գիտություն:

Մեր կարծիքով՝ ռազմական ռազմավարության մշակման համար, ավանդական հարցերից բացի, անհրաժեշտ է՝

- սահմանել հաղթանակի՝ մեզ համար ընդունելի հասկացությունը, որոշել, թե ինչ ենք ուզում. օրինակ՝ հետ մղել հակառակորդի զորքերի հարձակումը, թե փլուզել նրա պետությունը, և այլն,
- որոշել հակառակորդի (պետության և զինված ուժերի) «ծանրության կենտրոնը» և մարտական գործողություններին նրա ողեգրած ձևերն ու եղանակները,
- որոշել, թե ինչպե՛ս, ի՛նչ եղանակով ենք մենք պատրաստվում (պլանավորում) ջախջախել նրա «ծանրության կենտրոնը», ի՛նչ եղանակով ենք հետ մղելու նրա հարձակումը, ուժերի ու միջոցների մեզ համար ծայրաստիճան անբարենպաստ հարաբերակցության պայմաններում ո՛րն է լինելու մարտի դաշտում գլխավոր գործող ուժը,
- որոշել, թե ինչ զորքեր, ուժեր և սպառազինության ու ռազմական տեխնիկայի տեսականի է պետք (այսինքն՝ Զինված ուժերի կառուցվածքն ու կազմը), կառավարման ի՛նչ կարգ և զորքերի կառավարման ի՛նչ համակարգ է պետք,
- որոշել, թե ինչ պահանջներ է պետք ներկայացնել սպաների ու զինվորների բարոյահոգեբանական հատկություններին ու մասնագիտական (գործնական) որակներին, սահմանել կրթական բարեփոխումների, կադրերի պատրաստման ու սոցիալական քաղաքականության հիմնական ուղղությունները,

- որոշել ռազմավարական զսպման ու տարածքային պաշտպանության համակարգերի ձևավորման հիմնական ուղղություններն ու սկզբունքները:

Մեր կարծիքով՝ ՀՀ պաշտպանունակության, առաջին հերթին՝ ԶՈՒ-ի մարտական ներուժի բարձրացման համար այսօր առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից են.

*1) պաշտպանության ռազմավարական վերանայումը (ՊՌՎ) ու նոր ռազմավարության մշակումը*

Վերջին տարիներին տեղի ունեցած ռազմական գործողություններն ու սահմանի բազմաթիվ խախտումները վկայում են, որ անհրաժեշտ է ուսումնասիրել դրանց ընթացքը և վերլուծության արդյունքներով կատարել ՊՌՎ՝ առանձնակի ուշադրություն դարձնելով արդի պայմաններում և հակառակորդի ընտրած եղանակների հաշվառմամբ սահմանի ծածկապաշտպանության համակարգի կատարելագործման, պաշտպանության կազմակերպման ու վարման, պաշտպանությանը զորքերի անցման, մարտական հերթապահության արդյունավետության մեծացման հարցերին, հատկապես, որ Հայաստանում կա ՊՌՎ անցկացման զգալի փորձ[15]:

*2) ազգային ռազմական ռազմավարության (պատերազմավարության) ու ռազմական կանոնադրությունների մշակումը*

Ժամանակակից աշխարհում ԱՌՏ-ների արագ զարգացումը, զորքերի կառավարման ավտոմատացված համակարգերի, այդ թվում՝ արհեստական բանականությամբ, հնարավորությունների ընդլայնումն ու լիարժեք կիրառումը և պատերազմների՝ դրանցով պայմանավորված բնույթի, վարման եղանակների փոփոխությունները պահանջում են մշտապես վերանայել ինչպես ռազմավարական, օպերատիվ ու մարտավարական ղեկավար փաստաթղթերը, այնպես էլ զինվորական ծառայությունը կանոնակարգող կանոնագրքերն ու կանոնադրությունները,

*3) զինվորական կարգապահության մակարդակի բարձրացումը*

Անշուշտ, ՀՀ Զինված ուժերի հզորության և մարտունակության մեծացման համար առանցքային նշանակություն ունի զինվորական կարգապահության պատշաճ մակարդակի ապահովումը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ կարգապահության և խնդիրների կատարման արդյունավետության միջև գոյություն ունի ուղիղ կապ:

ՀՀ ԶՈՒ-ում կարգապահության ամրապնդման աշխատանքները առաջարկում ենք կազմակերպել հետևյալ ուղղություններով.

*ա) գիտակցական կարգապահության սերմանումը՝*

- անձնավորության ուղղվածության, աշխարհայացքի, արժեհամակարգի, համոզմունքների, մտածելակերպի վրա նպատակային ներգործությամբ նրա մեջ սերմանել գիտակցված կարգասիրություն, ապա այն հասցնել ենթագիտակցականի մակարդակի: Քանի որ դա հնարավոր չէ

[15] Տես «Պաշտպանության ռազմավարական վերանայում»: «ՀԲ», 2015, հմ. 3, էջ 9–76, նաև՝ «Պաշտպանության ռազմավարական վերանայում. հանրային օգտագործման համար 2011–2015» (https://www.mil.am/files/LIBRARY/HHPRV/832.pdf), (03.08.2022),

անել ծառայության երկու տարվա ընթացքում, ապա կարգապահության ձևավորումը պետք է սկսել մանկան սոցիալականացման փուլից,

*բ) կադրային քաղաքականության և պլանավորման կատարելագործումը՝*

– ներդրել և անվերապահորեն պահպանել խրախուսման ու պատժման համար արդար, թափանցիկ ու կշռադատված չափանիշների համակարգ, նոր կոչումների շնորհումն ու պաշտոնների նշանակումը կատարել միայն ըստ տվյալ անձի ծառայողական արժանիքների և նոր կոչմանը կամ պաշտոնին ներկայացվող խիստ պահանջներին լիակատար համապատասխանության դեպքում,

– ԶՈՒ-ում ներդրել սպաների ծառայության շրջափոխական (ռոտացիոն) համակարգ, ինչի շնորհիվ սահմանամերձ գոտում կամ ծանր կլիմայական պայմաններում ծառայող սպան ստիպված չի լինի ամբողջ ծառայությունն անցկացնել այնտեղ կամ ժամանակից շուտ զորացրվել,

*գ) անձնակազմի հետ տարվող աշխատանքներում ձևապաշտական մոտեցման վերացումը՝*

– անձնակազմի մարտական և օպերատիվ պատրաստման, զորավարժությունների և այլ գործնական պարապմունքների ժամանակ շեշտը դնել ոչ թե արտակարգ պատահարներից խուսափելու, այլ պլանով նախատեսվող խնդիրների (ուսումնական հարցերի) լիարժեք կատարման վրա՝ միևնույն ժամանակ խստագույնս ապահովելով մասնակիցների անվտանգությունը,

– սպաների պատրաստման ժամանակ շեշտը դնել նրանց մեջ ենթակաների նկատմամբ խիստ պահանջկոտության և հոգատարության ներդաշնակ համակցության ձևավորման վրա,

– կրճատել փաստաթղթաշրջանառությունը, քանի որ ավելորդ թղթաբանությունը ոչ միայն հրամանատարից խլում է լրացուցիչ ժամանակ, ուժ ու եռանդ, այլև, ըստ էության, ստվերում է կենդանի մարդուն՝ նրան սքողելով ձևականության շղարշով,

– հետևողականորեն ապահովել կանոնադրությունների պահանջներին շարքային և սերժանտական կազմերի փոխհարաբերությունների համապատասխանությունը, ինչպես նաև բարձրացնել նրանց մասնագիտական պատրաստման մակարդակը,

*4) սպայական կազմի կրթական մակարդակի բարձրացումը*

Ռազմական կրթության շարունակական զարգացում ապահովելու նպատակով որպես համաշխարհային առաջատար փորձ ներդրվեց եռաստիճան համակարգը, ինչը հնարավորություն է տալիս սպայական կազմին կրթություն ստանալու ինչպես մարտավարական և օպերատիվ, այնպես էլ ռազմավարական մակարդակներում: Սակայն ռազմական կրթության ոլորտում առաջատար փորձի յուրաքանչյուր ներբերում կարող է հաջողություն ունենալ միայն այն դեպքում, երբ հաշվի են առնվում ազգային յուրահատկությունները, պետության ներուժը, ընդհանուր կրթության վիճակը, ռազմական

գիտության և պրակտիկայի զարգացման համաշխարհային միտումները, հետագա ծառայության աշխարհագրական առանձնահատկությունները, տարածաշրջանային մարտահրավերներն ու սպառնալիքները, ինչպես նաև ապահովվում են ներբերումների փոխհամաձայնեցվածությունն ու համալիրությունը:

Անշուշտ, անհրաժեշտ է ըստ պատերազմի վարման մարտավարական, օպերատիվ ու ռազմավարական մակարդակների՝ հստակեցնել սպայական կադրերի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները և ոչ միայն պաշտոնական (ֆորմալ) կրթական ծրագրերի, այլև վերապատրաստումների միջոցով անընդհատ թարմացնել նրանց գիտելիքները և զարգացնել հրամանատարական հմտությունները: Լրացուցիչ կրթությունը, այդ թվում՝ վերապատրաստման դասընթացները, պարտադիր կերպով պետք է ներառի ռազմական գիտության զարգացման վերջին արդյունքները՝ սպաներին ապահովելով հավանական պատերազմի առանձնահատկությունների հարցում ճիշտ կողմնորոշվելու կարողությամբ:

Ռազմավարական մակարդակում ռազմական կրթության գլխավոր նպատակը պետք է լինի. այնպիսի սպայական կազմի ձևավորումը, որն իր ունեցած հարուստ գիտելիքների ու դրանք վարպետորեն կիրառելու ունակության շնորհիվ կարողանա ռազմաքաղաքական ու ռազմական բոլոր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվել, դաստիարակել հնուտ և հայրենասեր զինվորների ու նրանց առաջնորդել պետության պաշտպանության գործում: Այս առնչությամբ ՊԱՀՀ-ում առաջատար պետությունների գիտակրթական հաստատությունների լավագույն փորձի հաշվառմամբ խնդիր է դրված ապահովելու կրթական ու հետազոտական բաղադրիչների օրգանական միասնությունը՝ սիներգիայի սկզբունքով: Ըստ այդմ լուծվում են հետևյալ խնդիրները.

- ուսումնառողների ռազմավարական և քննադատական մտածողության ձևավորում,
- ուսումնառողներին ժամանակակից պատերազմների բնույթի և վարման եղանակների վերաբերյալ մշտապես թարմացվող գիտելիքների փոխանցում, պաշտպանությանը պետության պատրաստման հիմունքների ուսուցանում,
- ՀՀ ՊՆ և ԶՈՒ-ի ԳՇ վարչությունների, բանակային կորպուսների և ռազմավարական օղակի ապահովում համապատասխան կադրերով,
- հայրենական ռազմագիտական մտքի զարգացման և զորային կառույցում տարածման ուղղությամբ աշխատանքների շարունակական կատարում՝ առաջավոր գիտելիքի լուսաբանման և հայերենի ռազմագիտական տերմինաբանության մշակման գործում «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսին կարևոր դերի վերապահմամբ,

*5) զինվորական ծառայության գրավչության մեծացումը, ԶՈՒ-ի և իր զորատեսակի համար հպարտության ձևավորումը*

Սպայական կազմի որակի բարելավման կարևոր միջոց է զինվորականի մասնագիտության, կոնկրետ մասնագիտացման, տվյալ զորատեսակին պատկանելության ռոմանտիկայի քարոզումը: Շահախնդրությունն ու չոր

պրագմատիկությունը, ինչպես նաև զուտ սոցիալական առավելությունների շեշտադրումը կհանգեցնեն նվիրվածության և ինքնազոհության պատրաստակամության նկատմամբ նյութապաշտական վերաբերմունքի գերակայությանը, ինչը կվնասի բանակի մարտական ոգուն և ռազմական իրադրությունում կարող է հանգեցնել մարտիկի ինքնապահպանման բնազդի լիակատար տիրապետությանը և մարտից հրաժարվելու ձգտմանը[16]:

Դարձյալ վկայակոչելով ռուս ճանաչված ռազմական տեսաբան գեներալ Ն. Ն. Գոլովինին՝ նշենք, որ մարտիկի ինքնապահպանման բնազդի դեմ պայքարի լավագույն միջոցը նրա ենթագիտակցականում հայրենասիրության և արիության մասին պատկերացումների սերմանումն է, ինչը պահանջում է նպատակային աշխատանք մի քանի սերնդի հետ[17]:

Անշուշտ, զինվորական ծառայության սոցիալական գրավչության աստիճանի բարձրացման ուղղությամբ Հայաստանում ձեռնարկվում են գործնական քայլեր: Օրինակ՝ ընդունվել է օրենք, որի համաձայն նախատեսվում է 2022 թվականի հուլիսի 1-ից հետո ռազմաուսումնական հաստատություններ ընդունված, ավարտած և սպայական ծառայության անցած զինծառայողներին անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել բնակարաններ, այդ թվում՝ նաև բնակարանը վարձակալությամբ տրամադրելու իրավունք[18]: Իհարկե, դա կարևոր քայլ է, սակայն չի կարող բավարար լինել, եթե չի ամրապնդվում հայրենիքի պաշտպանության նկատմամբ մեծ անհատական պատասխանատվության գաղափարով:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով՝ պաշտպանական բարեփոխումների և զինված ուժերի զարգացման ապահովումը պահանջում են նախապես որոշել այն կերպարանքը, որը պետք է ստանա պետության ռազմական կազմակերպությունը, իսկ դա իր հերթին պահանջում է որոշել, թե ինչ պատերազմի վարմանը պետք է այն պատրաստ լինի: Սակայն պարզ է, որ ընդհանուր առմամբ զինված ուժերը պետք է լինեն սպառազինված արդիական զենքով, տարաշարժուն, գրագետ ու ժամանակակից պատերազմների վարմանը պատրաստ անձնակազմով, հմուտ, կրթված և առաջնորդական հատկանիշներով օժտված սպայական ու սերժանտական կազմով, կարգապահ, բարձր բարոյահոգեբանական հատկություններով, հայրենասիրությամբ տոգորված, ինքնազոհության պատրաստ զորքերով: Իսկ դա պահանջում է խաղաղ ժամանակ այդ ուղղությամբ վարել նպատակասլաց հետևողական գիտակրթական ու դաստիարակչական աշխատանք, մշտապես վերլուծել պատերազմավարության տեսության զարգացման միտումները և ըստ այդմ պատրաստման պլաններում կատարել անհրաժեշտ ճշգրտումներ:

---

[16] Տես *Ն. Ն. Գոլովին*, Նշ. աշխ.: «ՀԲ», 1997, հմ. 1–2:

[17] Տես նույն տեղում: «ՀԲ», 1997, հմ. 3:

[18] Տես ՀՀ 2017 թ. նոյեմբերի 15-ի «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՕ-195-Ն օրենքը, հոդ 65, կետ 2.1 (https://www.arlis.am/documentview.aspx?docid=166134), (15.09.2022):

# ОБОРОННЫЕ РЕФОРМЫ И РАЗВИТИЕ ВООРУЖЕННЫХ СИЛ С УЧЕТОМ ХАРАКТЕРА СОВРЕМЕННЫХ ВОЙН

*Г. В. ТАВАРАЦЯН, генерал-майор, Начальник Национального исследовательского университета обороны МО РА*

РЕЗЮМЕ

В результате создания новых видов вооружения и военной техники и совершенствования имеющихся, в том числе сверхточного оружия, автоматизированных систем управления войсками и оружием, новых форм и способов ведения борьбы (информационных, кибер-, асимметричных и т. д.) современные войны стали в основном кратковременными и динамичными, значительно сократилось время, отводимое на принятие решений и выполнение боевых задач, изменились методы и стиль управления, произошло переосмысление военного искусства и военного дела в целом. С учетом этого представляется целесообразным следующий алгоритм работ по разработке военной стратегии: определение национальных интересов, распознавание угроз национальной безопасности, разработка «Стратегии национальной безопасности», разработка такой военной стратегии, которая определяла бы пути нейтрализации угроз национальной безопасности, затем долгосрочное планирование, среднесрочное планирование и составление бюджета.

К числу задач, требующих первоочередного решения, относятся стратегический пересмотр обороны, повышение уровня дисциплины личного состава, повышение образовательного уровня офицерского состава, разработка национальной военной стратегии (ведения войны) и воинских уставов, повышение привлекательности военной службы.

Таким образом, планирование развития вооруженных сил и оборонных реформ требует предварительного определения облика, который должна принять военная организация государства, а это, в свою очередь, требует определения, к ведению какого характера войны она должна быть готова. В то же время ясно, что в целом вооруженные силы должны быть вооружены современным оружием, иметь мобильный, грамотный и готовый к ведению современных войн личный состав, умелый, образованный и с лидерскими качествами офицерский и сержантский состав, дисциплинированные, с высокими морально-психологическими качествами, проникнутые патриотизмом, готовые к самопожертвованию войска. А для этого необходимо вести целенаправленную, последовательную научно-образовательную и воспитательную работу в этом направлении в мирное время, постоянно анализировать тенденции развития теории ведения войны и в соответствии с этим вносить необходимые коррективы в планы подготовки.

# DEFENSE REFORMS AND ARMED FORCES DEVELOPMENT WITH A VIEW ON THE NATURE OF THE MODERN WARFARE

*G. V. TAVARATSYAN, Major General, Head, National Defense Research University, MOD, RA*

SUMMARY

By reason of production of new types of armaments and military equipment and improvement of the existing ones, including high-precision weapons, C4I systems, new forms and modes of warfare (information, cyber, asymmetric and etc.), the modern wars have generally become short-run and dynamic, the decision-making and combat mission completion time has significantly reduced, the management methods and style have changed, a rethinking of the military art and the military affairs, as a whole, has occurred. With a view on this, the following operating procedures on the development of military strategy seem appropriate – designation of national interests, identification of threats to the national security, development of the National Security Strategy, development of such a military strategy which would define the ways of neutralizing the national security threats, subsequently long-term planning, mid-term planning and budgeting.

Among priority tasks are the defense strategic review, improvement of personnel discipline, increase in the officers' educational level, development of the national military strategy (of waging wars) and military regulations, increasing the attractiveness of military service.

Hence, the planning of armed forces development and defense reforms requires preliminary definition of the image that the state's military organization should obtain, and this in its turn requires defining the nature of the war it should be prepared to wage. However, it is clear that on the whole the armed forces should be equipped with modern armaments, have military personnel that should be mobile, competent and prepared to conduct modern warfare, commissioned and non-commissioned staff who are skilled, educated and have strong leadership, troops with discipline, high moral and psychological qualities, imbued with patriotism and ready to self-sacrifice. To achieve that, it is necessary to conduct a goal-oriented, consistent academic and educational work in this direction in peacetime, constantly analyze the trends in the warfare theory and, accordingly, make necessary adjustments in the training plan.

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՕՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՈՐՈՇ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ*

*Ա. Ս. ԲԱՂԴԱՆՅԱՆ, գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Օպերատիվ արվեստի հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս*



Ժամանակակից պատերազմների և զինված հակամարտությունների փորձի վերլուծությունը և այդ վերլուծության հիման վրա կատարված եզրակացությունները հնարավորություն են տալիս առանձնացնելու ժամանակակից ռազմական գործողությունների (օպերացիաների) վարման ձևերի ու եղանակների որոշ բնութագրիչներ, օրինաչափություններ ու զարգացման միտումներ: Այսպես. ուժերի ու միջոցների անբավարարության պայմաններում հնարավոր չէ կանոնադրություններով հրահանգվող ավանդական եղանակներով հաջողությամբ վարել ոչ միայն հարձակողական, այլև պաշտպանողական գործողություններ կամ պատերազմել հակառակորդի բազմակի գերազանցող ուժերի և միջոցների դեմ: Հետևաբար անհրաժեշտ է ընտրել գործողությունների վարման այնպիսի եղանակներ, որոնց շնորհիվ կչեզոքացվի ավանդական եղանակներով գործող հակառակորդի գերազանցությունը և յուրային զորքերի համար կստեղծվեն մարտում նախաձեռնությանը տիրելու պայմաններ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ նման եղանակներ գերճշգրիտ զենքի, ՌԷՊ-ի միջոցների, զորքերի և զենքի կառավարման ավտոմատացված համակարգերի ու նորագույն տեխնոլոգիաների լայն կիրառման շնորհիվ ապահովում են անհամաչափ, հիբրիդային, ցանցակենտրոն, տեղեկատվական պատերազմները, որոնք նաև բարենպաստ պայմաններ են ստեղծում մարտական գործողությունները հակառակորդի տարածք փոխադրելու և նրա թիկունքում ակտիվ ռազմաճակատ ստեղծելու համար[1]:

Ինչպես հայտնի է, զուտ պասիվ պաշտպանողական գործողությունները բնութագրվում են ծայրահեղ անշահավետությամբ[2], ուստի ներկայումս ռազմական օպերացիաներում գերակշռում է ակտիվ ու վճռական գործողությունների սկզբունքը: Զորքերի գործողությունները հիմնվում են տարա-

---

* Հոդվածը նախնական տեսքով ներկայացվել է 22.08.2022: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 08.11.2022:

[1] Տես *Գ. Վ. Տավարածյան*, Մարտական գործողությունների տեղափոխում հակառակորդի տարածք. ռազմավարական դիտարկում: «ՀԲ», 2019, հմ. 1:

[2] Տես *Карл фон Клаузевиц.* Принципы ведения войны. Часть VI: «Оборона», гл. 4: «Понятие обороны». М., 2009, с. 102:

շարժուն (մանևրային) խմբերի մարտավարության վրա, որը ներառում է լայնածավալ մարտարշավներ (ռեյդային գործողություններ), խուսափում ճակատային գրոհներից, ձգտում դուրս գալու թշնամու թևեր ու թիկունք: Հակառակորդի տեղաբաշխման ամբողջ խորությամբ հասցվում են կրակային և ռադիոէլեկտրոնային հարվածներ, որոնց նպատակն է ոչնչացնել հակառակորդի կրակային միջոցները, շարքից հանել կարևոր տնտեսական օբյեկտները, առաջին հերթին՝ էներգետիկ ենթակառուցվածքը, կոտրել հակառակորդի դիմադրելու կամքը: Դրանից հետո կիրառվում են օդային դեսանտներ, ծավալվում են հատուկ նախանշանակման ստորաբաժանումների գործողություններ, որոնց հաջողությունը ապահովում է ցամաքային ուժերի արագ առաջխաղացումը[3]:

Օպերատիվ-մարտավարական մակարդակում դիտվում է գործողությունների վարման հետևյալ օրինաչափությունը. զորքերը գործում են առանձին շարժունակ մարտական խմբերով՝ առաջադրված խնդիրները կատարելու համար օպերատիվ կերպով կենտրոնանալով նախորոշված շրջաններում, իսկ կատարելուց հետո արագորեն տեղափոխվում են այլ շրջաններ: Ընդ-սմին մարտական խնդիրները կատարվում են հիմնականում դասակների ու վաշտերի, ավելի սակավ՝ գումարտակի ուժերով: Այդ խմբերի գործողությունները բնութագրվում են գլխավոր ուժերից կտրվածությամբ, ինքնուրույնությամբ և նմանվում հատուկ նախանշանակման ուժերի գործողություններին: Տվյալ խմբի անդամները զինված են լինում թեթև արդիական հրազենով, կապի և հետախուզության անհատական միջոցներով (յուրաքանչյուր զինվոր ապահովվում է ԿԱՀ-ով օժտված պլանշետով, ինչը հնարավորություն է տալիս օպերատիվորեն կողմնորոշվելու տվյալ մարտական իրադրությունում և արագորեն արձագանքելու դրան), ինչպես նաև գիշերային տեսանելիության սարքերով: Ժամանակակից ռազմական տեխնիկան և նորամուծական տեխնոլոգիաները մարտական գործողությունների շրջանում գտնվող յուրաքանչյուր զինվորի հնարավորություն են տալիս դառնալու մարտական միավոր: Առաջատար պետությունների բանակներում առանձնակի կարևորություն է տրվում կենդանի ուժի բարձր մակարդակի ֆիզիկական ու հոգեկան տոկունության և պաշտպանվածության ապահովմանը, յուրաքանչյուր զինվոր ապահովվում է արդիական հանդերձանքով, արտակմախքով (էկզոսկելետով), անհատական պաշտպանության միջոցներով, թեթև ու փոքր, սակայն անհրաժեշտ մարտավարատեխնիկական բնութագրեր ունեցող զենքով:

Փոքր մարտական խմբերի գործողությունների հիմնական տարբերակիչ հատկանիշներն են.

- կենտրոնացված (միասնական) ռազմավարություն, սակայն գործողությունների ապակենտրոնացված (բազմապիսի, անկանխատեսելի) մարտավարություն,

[3] Տես *В. Горбунов.* Вооруженная борьба будущего. Некоторые характерные черты ее содержания. «Российское военное обозрение», январь 2009, № 1:

– ինքնուրույն կամ կիսաինքնուրույն խմբեր (ստորաբաժանումներ), որոնք գործում են գերազանցապես ինքնաբավության սկզբունքով,
– բոլոր ուղղություններից ծեռնարկվող անկանոն (ամորֆ), բայց լավ համադասված գործողություն (հարձակում),
– բոլոր ստորաբաժանումների գործողություններ՝ ուղղված ընդդեմ միևնույն նշանակետի,
– «ճակատի» հասկացության բացակայություն,
– կառավարման, հետախուզության, տեղեկատվության և համակարգչային ապահովման կատարյալ համակարգ,
– գործողություններ հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում, ինչպես նաև նրանից մեծ հեռվության վրա,
– գլխավոր ջանքերի կենտրոնացում հակառակորդի համախմբվածության խախտման վրա[4]:

Ժամանակակից պատերազմներում զինված պայքարը, որպես կանոն, առանձնանում է արագընթացությամբ, ռազմական գործողությունների ծավալունությամբ՝ բոլոր ոլորտների (ցամաք, ծով, տիեզերական ու կիբեռտարածություններ) ընդգրկմամբ, «որտեղ էլեկտրոնային, տնտեսական, հոգեբանական, տեղեկատվական և ուժային ներգործությունները տեղի կունենան ժամանակի ու տարածության մեջ աճող ինտենսիվությամբ, ինչը ամենակարճ ժամանակում հնարավորություն կտա հակառակորդին նախաձեռնությունից ու տարաշարժ կատարելու ազատությունից զրկելու գործում հասնելու վճռական արդյունքի»[5]: Ընդսմին պատերազմի վարման կանոնները կթելադրի այն կողմը, որն ավելի լավ պատրաստ կլինի գործնականում իրացնելու ռազմական ոլորտում ձեռք բերած տեխնիկատեխնոլոգիական նորմուծական նվաճումները:

Օպերացիայի հաջող ելքը կանխորոշող գործոններ են կառավարման համակարգի արագագործությունը և ներդաշնակությունը: Զորքերի կառավարման հիմնական սկզբունքներից են իրավիճակի վերաբերյալ պատեհաժամ իրազեկության ապահովումը և իրավիճակի փոփոխություններին արագ արձագանքումը որոշումների ընդունման գերծում հակառակորդին գերազանցելու նպատակով[6]: Որոշումների արագ ընդունումը և ենթակա զորքերին ու դրանց կառավարման մարմիններին հաղորդումը բոլոր մակարդակներում ապահովում են կառավարման փուլաշրջանի կրճատում, ինչն էլ մարտի դաշտում վերածվում է օպերատիվ առավելության[7]: Ընդ որում, կառավարումը կատարվում է ապակենտրոնացման եղանակով և այն պարտա-

[4] Տես *И. Попов.* «Боевые стаи» выходят на тропу войны. «Независимое военное обозрение», 23.01.2004 (https://nvo.ng.ru/wars/2004-01-23/2_tropa.html):

[5] Տես *Վ. Գորբունով,* Նշ. աշխ.:

[6] Տես *С. И. Макаренко, М. С. Иванов.* Сетецентрическая война – принципы, технологии, примеры и перспективы, монография. СПб., 2018:

[7] Տես *Է. Կ. Սարկիսյան, Ա. Զ. Պետրոսյան,* Ցանցակենտրոն պատերազմը որպես նոր ձևի կազմակերպվածք և կառավարման նոր համակարգ: «ՀԲ», 2022, հմ. 1:

դիր պայմանով, որ բոլոր մակարդակների հրամանատարները միասնաբար ընբռնեն օպերացիայի մտահղացումը: Դա հնարավորություն է տալիս բոլոր մակարդակներում ապահովելու գործողությունների վարման ներդաշնակությունն ու անընդհատությունը՝ անգամ կապի երկարատև խափանման պայմաններում:

Զորքերի կառավարման ժամանակակից համակարգն օժտված է մեծ ծավալով տարաբնույթ տեղեկույթ կառուցավորելու և մշակելու կարողությամբ: Դա նպաստում է տեղեկատվական գերազանցության ձեռքբերմանը և ճշգրիտ որոշումների արագ կայացման շնորհիվ մարտական հզորության մեծացմանը:

Զորքերի ու զենքի կառավարման արդյունավետությունը մեծացնելու համար թվային տեխնոլոգիաներով հագեցած միասնական տեղեկատվահաղորդակցային տարածությունում գործող կապը կազմակերպվում է ցանցային սկզբունքով, ինչն ապահովում է կառավարման ավտոմատացված համակարգերի աշխատանքի համար նախատեսված կապուղիների անհրաժեշտ թողունակությունն ու արագագործությունը:

Կապի աշխատանքի հուսալիության ապահովման արդյունավետ միջոցներից է կապի հենակետային ցանցի ստեղծումը՝ դաշտային կապի համակարգի հետ համակցման հնարավորությամբ, մարտավարական օղակում կիրառվում են նաև հաճախականությունների թռիչքային փոփոխություններով աշխատող, բջջային կառուցվածքով, ինքնակազմակերպվող, լայնաշերտ ռադիոկայաններ, տարբեր բազավորմամբ վերահաղորդիչ կայաններ[8]: Կապի համար կիրառվում են մեխանիկական (ցանցային), ռադիո-, գերբարձր հաճախականային, լուսային ալիքները, որպես տարածման միջավայր (փոխանցող կապուղիներ) օգտագործվում են մետաղական և օպտիկաթելքային մալուխները, գազային միջավայրերը (ներքնոլորտ), անօդ տարածությունը (երկնամերձ տարածություն) և այլն: Այժմ առանձնակի կարևորություն է ստացել արբանյակային կապը, որն օգտագործվում է ինչպես տեղեկույթի հաղորդման (փոխանցման) համար, այնպես էլ ուղեվարային համակարգերում[9]:

Ժամանակակից կապը ապահովվում է տարբեր միջավայրերում, տարբեր ֆիզիկական սկզբունքներով ու տարբեր հաճախականային տիրույթներում գործող միջոցներով: Առաջատար պետությունների պաշտպանական համակարգերի զարգացման ծրագրերի ու դրանց գիտական հիմնավորմանը նվիրված հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայիս զինված պայքարի ընթացքն ու ելքը մեծապես պայմանավորված են տեղեկատվա-

[8] Տես *В. Г. Иванов, В. Н. Лукьянчик.* Об эволюции теории и практики построения систем связи военного назначения на основе создания мультиконвергентной системы связи группировки войск (сил) на театре военных действий. «Военная мысль» («ВМ»), 2021, № 1:

[9] Զինված ուժերում կապի կազմակերպման ու գործունեության մասին ավելի հանգամանորեն տես *Х. Арсланов.* Система связи и управления в Вооружённых Силах Российской Федерации строится на основе последних достижений науки и техники (https://function.mil.ru/news_page/country/more.htm?id=12200524%40cmsArticle):

հեռահաղորդակցային տարածությունում հակառակորդի զորքերի և զենքի կառավարման համակարգերի դեմ վարվող պայքարի՝ դրանց քայքայման և գործունեության խաթարման արդյունքներով: Եվ այդ պայքարի դերը միտում ունի անընդհատ աճելու: Ըստ այդմ կարելի է առանձնացնել ռադիոէլեկտրոնային պայքարի զարգացման հետևյալ հեռանկարային ուղղությունները.

– ռադիոէլեկտրոնային պայքարի և ռադիոէլեկտրոնային հետախուզության միջոցների համատեղ կիրառումը միասնական տեղեկատվական դաշտում՝ դրանց տեղեկատվատեխնիկական համատեղելիության ապահովմամբ և արհեստական բանականության լայն կիրառմամբ[10],
– հակառակորդի երկակի նախանշանակման արբանյակային կապի ուղեվարաժամանակային ապահովման համակարգի դեմ ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցների կատարելագործումը ՌէՊ-ի օբյեկտների (այդ թվում՝ տիեզերական բազավորմամբ) անվանացանկի ընդլայնման, ՌէՊ-ի միջոցների տեսականու կրճատման, միօրինակացման, գերճշգրիտ զենքից պաշտպանվածության մակարդակի բարձրացման և շարժունակության ու արդիականացման հնարավորությունների մեծացման ուղղությամբ,
– հակառակորդի ռադիոէլեկտրոնային միջոցների վրա էլեկտրամագնիսական ազդեցության հզորացումը՝ նոր ֆիզիկական սկզբունքների ու եղանակների կիրառմամբ, այդ թվում՝ հատուկ ծրագրային ներգործության տեխնիկայի մշակմամբ ու գործադրմամբ,
– ռադիոէլեկտրոնային իրադրության նմանարկման և հակառակորդի զորքերի ու զենքի կառավարման համակարգերի մեջ ապատեղեկույթի ներմուծման միջոցների մշակումն ու կատարելագործումը,
– ՌէՊ-ի կառավարման մարմինների ու կետերի տեղեկատվական ապահովման մակարդակի բարձրացումը,
– ԱԹԱ-ների և հակառակորդի թիկունքում խանգարումների արտադիր հաղորդիչների միջոցով նրա տարածքում ստեղծվող ռադիոխանգարումների կառավարելի դաշտերի կիրառումը[11]:

Ժամանակակից օպերացիաներում հակառակորդի կրակային հարվածների հզորության և ճշգրտության մեծացման, ինչպես նաև տեղեկատվական պայքարի բաղադրիչի ուժեղացման պայմաններում է՛լ ավելի է մեծանում օպերացիաները կամ մարտական գործողությունները պլանավորելիս որոշման մեջ *զորքերի պաշտպանության* վերաբերյալ համընդգրկուն կետի՝ որպես միջոցառումների համալիրի նախատեսումը: Այդ կետում պետք է ընդգրկվեն օդային հարձակման միջոցներից պաշտպանությունը, քողարկումը, ինժեներական ապահովումը, մարտունակության վերականգնումը, տեղեկատվական ընդդիմամարտության միջոցառումները և այլն:

---

[10] Տես *О. А. Иванов.* Перспективы развития оборонно-промышленного комплекса подотрасли РЭБ (http://federalbook.ru/files/OPK/Soderjanie/OPK-6/III/Ivanov.pdf):

[11] Տես *А. А. Лахин, А. С. Коробейников.* Состояние и перспективы развития войск радиоэлектронной борьбы Вооружённых Сил Российской Федерации. «Радиоэлектронная борьба в Вооруженных Силах Российской Федерации – 2016» (https://studylib.ru/doc/2567028/sostoyanie-i-perspektivy-razvitiya-vojsk-radioe-lektronnoj):

ժամանակակից օպերացիաները բնութագրվում են հակառակորդի օբյեկտների վրա շարունակական ներգործությամբ՝ ճշգրիտ և ինտենսիվ հեռահար կրակային հարվածների կիրառմամբ, որոնց նպատակը ոչ միայն հակառակորդին մեծաթիվ անդառնալի կորուստներ պատճառելն է, այլև նրա բարոյական ոգու և կամքի ճնշումը: Կրակային խոցման այս միտումը նպատակ ունի հակառակորդին զրկելու հետագա դիմակայության ձգտումից այն պայմաններում, երբ չկա իրավիճակին հարմարվելու, դրան արդյունավետ կերպով արձագանքելու և ուժերը վերականգնելու համար ժամանակ:

Օպերացիաներում հակառակորդի կրակային խոցման խնդիրը արդյունավետորեն կատարելու նպատակով ձևավորվում է կրակային խոցման գործառութային հրամանատարություն, որի հիմնական գործառույթը միջտեսակային հետախուզախոցող համակարգի կառավարումն ու կիրառումն է: Միջտեսակային հետախուզախոցող համակարգի գործադրումը ապահովում է ռազմարվեստի հիմնական սկզբունքներից մեկի իրագործումը, այն է՝ հակառակորդին առաջանցել գործողություններում և նրանից խլել նախաձեռնությունը: Այս համակարգը նաև ապահովում է ԶՈՒ-ի ՍՈՏ կարողությունների համապատասխանեցումը ժամանակակից օպերացիայի պահանջներին[12]:

Այսպիսով՝ հետախուզախոցող համակարգով հակառակորդի կրակային խոցումը հնարավորություն է տալիս.

- ձեռնարկելու կառավարման օպերատիվ կենտրոնացում («զորամիավորման (միավորման) շտաբ – կրակային միջոց» սխեմայով),
- մշտազննելու իրավիճակը և օպերատիվ կերպով ճշգրտելու նախկինում ընդունված որոշումները,
- կազմակերպելու տարատեսակ և տարաբնույթ միջոցներով ստացված հետախուզական տվյալների կենտրոնացված հավաքում և մշակում,
- խոցելու հակառակորդի բացահայտված օբյեկտը հաստիքային կրակային այն միջոցով, որի խոցման գոտում տվյալ օբյեկտը գտնվում է՝ կրակային խոցման համար նշանակված միջոցների թվի նվազարկմամբ՝ առանց ժամանակավոր հրետանային խմբի ստեղծման,
- նշանակետի հայտնաբերման և կրակի բացման (կրակային միջոցի արձագանքման) ժամանակի կրճատման շնորհիվ ավելի արագ կրակ բացելու և, որպես արդյունք, նախաձեռնությանը տիրելու,
- ապահովելու նշանակետերի խոցման ընտրողականությունը (ըստ նշանակետի կարևորության և վտանգավորության), ճշգրտությունը (ռազմական օբյեկտից մոտ գտնվող քաղաքացիական օբյեկտին չհարվածելու համար) և բաժնաչափությունը (դասավորվածությունը),
- ապահովելու նշանակետերի խմբում մեկ առանձին նշանակետի խոցումը՝ շնորհիվ կրակի ճշգրտման համակարգի և անօդաչու թռչող ապարատների համալիր կիրառման,

[12] Տես *О. В. Саяпин, О. В. Тиханычев, Н. А. Чернов.* Создание межвидовой разведывательно-поражающей системы как основы повышения эффективности огневого поражения. «ВМ», 2017, № 6:

- տարբեր զինամթերքների խելամիտ համակցմամբ՝ ապահովելու նշանակետերի վրա սիներգետիկ կրակային ներգործությունը*:

Ժամանակակից օպերացիաներում (ռազմական գործողություններում) զինված պայքարի միջոցների կիրառման վերլուծությունը հուշում է, որ ապագա պատերազմները կդառնան գերճշգրիտ զենքի «կարկուտ» և ըստ այդմ արմատապես կփոխվեն պատերազմի նկատմամբ ներկայիս մոտեցումները, դրանց վարման եղանակներն ու միջոցները: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, ավանդական տեսքով զրահատեխնիկայի կիրառությանը: Տանկերը և այլ տեսակի զրահատեխնիկան ներկայիս մակարդակի պաշտպանության դեպքում պարզապես չեն կարողանա գոյատևել ԳՃԶ զանգվածային կիրառման պայմաններում, տանկերն անգամ չեն հասնի իրենց կիրառման բնագիծ: Ուստի անհրաժեշտ է տանկերը և այլ զրահապատ տեխնիկան կիրառել միայն ակտիվ պաշտպանության համալիրով հանդերձավորելու և կառավարման միասնական համակարգին ինտեգրելու դեպքում: Բացի այդ, կարևոր միջոցներ են համարվում տանկի օժտումը նշանակետերի որոնման ու կրակի կառավարման այնպիսի համակարգով, որն աշխատեր էլեկտրամագնիսական ալիքների օպտիկական, ջերմային (ինֆրակարմիր) և ռադիոալիքային տիրույթներում մեծ հեռավորությունների վրա, կրակային հզորության ու հեռահարության մեծացումը մինչև 3-5 կմ, կրակի դիպուկության մակարդակի բարձրացումը (W>0,85) և այլ տեխնիկական նորամուծությունների ներդրումը, հորինվածքի և ստորաբաժանումների կազմակերպվածքի կատարելագործումը[13]:

1982 թ. ԱՄՆ-ի բանակի Դոկտրինում *("FM 100-5")* ձևակերպվեց նոր հայեցակարգ՝ «Օդացամաքային օպերացիա» *("AirLand Battle"):* Դրանով հիմք դրվեց ապագա օպերացիաներում ծանրության կենտրոնի տեղափոխմանը դեպի օդային տարածություն[14]:

Ըստ այդմ գործողությունները աստիճանաբար տեղափոխվում են օդատիեզերական տարածություն: Ավիացիայի և օդային հարձակման անօդաչու միջոցների լայնամասշտաբ կիրառումը նպաստում է արագընթաց պատերազմների վարմանը: Կանխատեսվում է, որ ապագայի օպերացիաներում զանգվածայնորեն կիրառվելու են արհեստական բանականությամբ օժտված, «պարսի» կազմով գործող և փոքրաչափ ԱԹՍ-ներ, սավառնող զինամթերք ու մարտավարական, օպերատիվ-մարտավարական հրթիռներ: Դրանք հնարավորություն կտան հետախուզելու և մեծ ճշգրտությամբ խոցելու հակառակորդի օբյեկտները ժամանակի իրական մասշտաբում: Դա, իր հերթին,

---

* Սույն ցանկը կազմված է գերազանցապես *О. В. Саяпин, О. В. Тиханычев, Н. А. Чернов.* Создание межвидовой разведывательно-поражающей системы как основы повышения эффективности огневого поражения. «ВМ», 2017, № 6 հոդվածից, ինչպես նաև մի շարք ռուսալեզու և անգլիալեզու աղբյուրներից քաղված տեղեկույթի ընդհանրացմամբ:

13 Տես *О. А. Лосик, О. Н. Брилев.* Имеют ли танки будущее? «Техника и вооружение», 2006, № 1:

14 Տես *John L. Romjue.* From active defense to AirLand Battle: the development of Army doctrine, 1973–1982. Fort Monroe, Virginia, 1984:

կառաջացնի օդային իրադրության բարդացում, կդժվարացնի ծածկապաշտպանվող օբյեկտների հուսալի պաշտպանության խնդրի լուծումը: ՀՕՊ-ի համակարգը պետք է կարողանա պայքարել գերձայնային հրթիռների, անօդաչու թռչող ապարատների «պարսերի» դեմ:

Ներկայիս արագընթաց պատերազմներում զորքերի, հատկապես՝ փոքր մարտական խմբերի ու տարածքային պաշտպանության ջոկատների ապահովման խնդիրների լուծումը առաջադրում է արագության, ճկունության ու հուսալիության առնչությամբ նոր պահանջներ: Ըստ այդմ, նպատակահարմար է դառնում պահեստները տեղաբաշխել օպերատիվ ուղղությունների ամբողջ տարածքում՝ ապակենտրոնացված և հուսալիորեն պաշտպանված[15]:

Սպառազինության համակարգերի զարգացման ժամանակակից հայեցակարգը հիմնված է քիչ ծախսատար պատերազմների վարման սկզբունքի վրա: Ռուսի պետությունները սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով ԶՈՒ-ի ապահովման իրենց քաղաքականությունը (ռազմատեխնիկական քաղաքականություն[16]) կառուցելիս շեշտը դնում են նվազ մարդկային և տեխնիկական ռեսուրսներով մարտական խնդիրների արդյունավետ կատարման գաղափարի վրա: Դա ենթադրում է ՍՌՏ-ում նանոտեխնոլոգիաների, փոքրաչափ ռոբոտների, միկրոէլեկտրոնիկայի, կառավարման և ուղղորդման անհարթակ համակարգերի և բարձրտեխնոլոգիական այլ միջոցների լայն ներդրում[17]:

Ժամանակակից սպառազինության բարդ համակարգերի ստեղծման փորձի վերլուծությունը հնարավորություն է տալիս ձևակերպելու սպառազինության համակարգերին ներկայացվող հետևյալ պահանջները.

- բարդ մարտական իրավիճակներում գործունեության անընդհատության և կայունության պահպանում,
- հետախուզակրակային համակարգերի մեծ օպերատիվություն,
- հակառակորդին նախորոշված աստիճանի վնաս հասցնելու կարողություն,
- ՍՌՏ ստանդարտացման ու միօրինականացման, տեղեկատվական և էլեկտրամագնիսական համատեղելիության ապահովվածություն,
- խոցվելուց հետո վերականգնելիություն, այսինքն՝ գործելու կամ մարտունակությունը վերականգնելու կարողություն*:

---

[15] Տես “NATO. Logistics Handbook”. Brussels, November 2012:

[16] Ռազմատեխնիկական քաղաքականության մասին տես *Մ. Ն. Կարապետյան, Ա. Պ. Պետրոսյան,* Ռազմատեխնիկական քաղաքականությունը որպես ռազմական արդյունաբերության զարգացման ուղեցույց: «ՀԲ», 2022, հմ. 2:

[17] Տես, օրինակ, *Владимир Дерновой.* Нанотехнологии в военном деле. Невидимые роботы совершат революцию. «Новости ВПН», 26.03.2008 (https://vpk.name/news/15069_nanotehnologii_v_voennom_dele_nevidimye_roboty_sovershat_revolyuciyu.html); *С. И. Макаренко.* Робототехнические комплексы военного назначения – современное состояние и перспективы развития. «Системы управления, связи и безопасности», 2016, № 2 (https://sccs.intelgr.com/archive/2016-02/04-Makarenko.pdf):

* Առաջավոր փորձը ցույց է տալիս, որ նորոգումային աշխատանքները տեղափոխվում

Ինչպես ժամանակակից, այնպես էլ նախորդ դարի հակամարտություններում լայնորեն կիրառվել է աշխարհազորը, ինչը պետության պաշտպանությանը հաղորդել է համընդհանուր, համաժողովրդական բնույթ: Աշխարհազորը զինված հարձակման, դրա անմիջական վտանգի կամ ռազմական գործողությունների պայմաններում պետության զինված պաշտպանությանը կամավորության սկզբունքով քաղաքացիների մասնակցության համակարգ է[18]:

Արդի պատերազմների վերլուծությունը ցույց է տալիս, որ «աշխարհազորը» չի կարող համազորային միավորումների և զորամասերի խնդիրներ լուծել, հետևապես այն կիրառվում է այնպիսի օժանդակ խնդիրների կատարման համար, ինչպիսիք են՝ պարետային ծառայությունը, դիրքերի և կարևոր օբյեկտների սարքավորումը, կարևոր օբյեկտների ու հաղորդակցության ուղիների պահպանությունը և պաշտպանությունը, դիվերսիոն-հետախուզական խմբերի դեմ պայքարը, հակառակորդի զենքի կիրառմամբ պատճառած վնասների (հետևանքների) վերացումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ պարտիզանական պատերազմի վարումը և այլն:

Պահեստազորում ռազմաուսուցանված ռեսուրսների կուտակման և հետագայում նպատակային օգտագործման նպատակով պահեստազորայինների, հատկապես՝ նեղ զինվորական մասնագիտություն ունեցողների համար պարբերաբար կազմակերպվում են պատրաստման և վերապատրաստման վարժական հավաքներ, ընդ որում, առանձնակի ուշադրություն է դարձվում կրտսեր սպայական ու սերժանտական կազմերի ուսումնավարժեցմանը: Հարկ է նշել, որ մի շարք երկրներում այդ կարգախմբում կամավորության սկզբունքով ներառված են նաև կանայք:

Մի շարք պետություններում նախատեսվում է պաշտպանողական օպերացիաներում նաև տարածքային պաշտպանության ուժերի կիրառումը[19]: Նրանք, ենթարկելով տվյալ շրջանի համար պատասխանատու համազորային հրամանատարին, կատարում են մի շարք կարևոր խնդիրներ, ինչպիսիք են՝ մասնակցությունը պետական սահմանի հատվածների, կարևոր օբյեկտների ու հաղորդակցման ուղիների և բնակչության պաշտպանությանը, հակառակորդի դեսանտագրոհային, օդադեսանտային, հատուկ օպերացիաների (գործողությունների) կանխմանը (ձախողմանը), նրա դիվերսիոն և զորային խմբավորումների ջախջախմանը, ռազմաճակատը ճեղքած ուժերի առաջխաղացման կասեցմանը, ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանը: Դրանք պետք է ունակ լինեն ինքնուրույնաբար վարելու մարտական գործողություններ, ապահոված լինեն անհրաժեշտ նյութա-

---

են մարտական գործողությունների շրջանին հնարավորինս մոտ, ինչի համար մարտական ստորաբաժանումներում ստեղծվում են նորոգումային ծառայություններ (խմբեր, ստորաբաժանումներ):

[18] Տես Հայաստանի Հանրապետության 2020 թվականի հոկտեմբերի 28-ի ««Պաշտպանության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» հմ. ՀՕ-466-Ն օրենքը, հոդ. 29, կետ 1 (https://www.arlis.am/documentview.aspx?docid=147113):

[19] Տես *Յու. Գ. Խաչատուրով,* Պաշտպանությանը պետության և նրա Զինված ուժերի պատրաստման որոշ հարցեր: «ՀԲ», 2009, հմ. 3:

տեխնիկական ռեսուրսներով, առաջին հերթին՝ թեթև զենքի ու զինամթերքի պաշարներով[20]:

* * *

Այսպիսով՝ ժամանակակից օպերացիաների վարման վերը նշված օրինաչափությունների և զարգացման միտումների համակողմանի ուսումնասիրությունն ու հաշվառումը հնարավորություն են տալիս մշակելու ԶՈՒ-ի մարտական ներուժի և ընդհանրապես պետության պաշտպանունակության զարգացման արդյունավետ ռազմավարական պլաններ: Այս բանի իմացությունն անհրաժեշտ է առաջին օպերացիայի պլանավորման ու դրա իրագործմանը ԶՈՒ-ի պատրաստման, պետության ու ԶՈՒ-ի մոբիլիզացիոն ներուժի պլանաչափ ու խելամիտ զարգացման համար, ինչը հատկապես կարևոր է պայթյունավտանգ տարածաշրջանում գտնվող, սուղ մարդկային ու նյութական ռեսուրսների տիրապետող փոքր պետությունների համար, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը:

---

[20] Տես նույն տեղում, նաև՝ *Հ. Մ. Քոթանջյան,* Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով: «ՀՔ», 2009, հմ. 3:

# НЕКОТОРЫЕ ЗАКОНОМЕРНОСТИ ВЕДЕНИЯ СОВРЕМЕННЫХ ОПЕРАЦИЙ И ТЕНДЕНЦИИ ИХ РАЗВИТИЯ

*А. С. БАГДАНЯН, полковник, кандидат военных наук, старший преподаватель Центра исследований оперативного искусства НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Анализ теоретических разработок и концепций современных войн и вооруженных конфликтов, а также опыта их применения на практике позволяет выделить некоторые характеристики, закономерности и тенденции развития форм и способов ведения военных действий (операций).

Современные операции проводятся стремительно и исключительно целенаправленно, чему способствует широкомасштабное применение высокоточного оружия и боеприпасов, авиации и беспилотных средств воздушного нападения. Тенденция развития СВН дает основание прогнозировать массовое применение малогабаритных БПЛА, оснащенных искусственным интеллектом и действующих в составе «роев», парящих боеприпасов и тактических, оперативно-тактических ракет. Они позволят разведывать и поражать объекты противника с большой точностью в реальном масштабе времени. При этом подобные разработки коренным образом изменят нынешние подходы к войне, способы и средства ее ведения. В частности, это приведет к окончательному исчезновению понятия фронта, а стратегически важные военные и гражданские объекты будут поражаться

практически одновременно по всей территории противника. При этом операция (война) начнется с массированных воздушных ударов по системе ПВО противника с целью ее полного уничтожения или снижения до минимума ее боевых возможностей, складам с горючим и энергетике, культурно-духовным, промышленным и управляющим центрам в сопровождении информационно-психологического воздействия на руководство, личный состав ВС и все население в целях их деморализации и лишения воли к сопротивлению.

В непосредственно военной сфере важное внимание уделяется и будет и в дальнейшем уделяться совершенствованию управления войсками путем развития средств связи, современных систем автоматизированного управления войсками и оружием и РЭБ, в частности, путем внедрения искусственного интеллекта, эффективности и точности огневого поражения противника с сокращением требуемого до этого времени, использованием разведывательно-поражающих комплексов и ужесточением соответствующих требований к системам вооружения.

Всестороннее изучение и выявление закономерностей ведения современных операций и тенденций их развития дают возможность разрабатывать эффективные стратегические планы развития боевого потенциала ВС и обороноспособности государства в целом. Это позволит с достаточной достоверностью определить тип и параметры будущей войны, облик ВС, необходимый для ведения этой войны, эффективно осуществлять планирование военных реформ, нацеленных на развитие системы обороны государства, первых и последующих операций и подготовки ВС к их осуществлению, планомерного и разумного развития мобилизационного потенциала государства и ВС, что особенно важно для находящихся во взрывоопасном регионе малых государств, имеющих ограниченные людские и материальные ресурсы, каковой является Республика Армения.

## SOME REGULARITIES OF CONDUCTING MODERN OPERATIONS AND THEIR DEVELOPMENT TRENDS

*A. S. BAGHDANYAN, Colonel, PhD in Military Sciences, Senior Lecturer, Center for Research on Operational Art, NDRU, MOD, RA*

SUMMARY

The analysis of theoretical developments and concepts of the modern wars and armed conflicts, as well as of the experience of their application in practice, enables to highlight some characteristics, regularities and development trends of forms and ways of conducting military actions (operations).

Modern operations are conducted in a swift and exclusively task-specific manner, due to the wide-scale application of high-precision weapons and ammunitions, aviation and unmanned vehicles of air attack. The development trends of the air attack weapons provide ground for the foresight of wide use of small-sized UAVs, equipped with Artificial Intelligence and acting in *swarms,* floating ammunition, short-range and mid-range missiles. These enable to recon and hit adversary's targets with higher precision in real time. In addition such designs will drastically change the contemporary approaches to warfare, the ways and means of waging war. Particularly, this will cause absolute disappearance of the notion of front-line with the strategically significant military and civil targets being hit virtually simultaneously across the adversary's whole territory. With this, the operation (war) will start with massive air strikes against adversary's Air Defense System to completely destroy it or minimize its combat capabilities, against fuel storages and energy sector, cultural and spiritual, industrial and management centers, accompanied by information and psychological impact on the authorities, armed forces' personnel and population at large with the purpose of demoralization and deprival of willingness to resist.

Straightforwardly in the military sphere significant attention is paid and will further on be paid to the improvement of C2 through the development of communications equipments, modern C4ISR and electronic warfare systems, in particular by implementing Artificial Intelligence, the sufficiency and precision of fire for effect by reducing its timing, applying reconnaissance destruction complexes and toughening the corresponding requirements towards the armament systems.

The comprehensive study and identification of regularities of both conducting modern operations and their development trends enable to design effective strategic plans for the development of armed forces combat potential and national defense capability. This will enable to accurately determine the type and parameters of the future war, the image of the armed forces, necessary to wage such a war, to effectively carry out the planning of military reforms aimed at the development of the state's defense, of the first and subsequent operations and the preparation of the armed forces to conduct them, of the orderly and rational development of the state's and armed forces' mobilization potential, which is particularly important for the minor states with limited human and material resources, located in a powder-keg region, such as the Republic of Armenia.

# ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ*

*Ա. Ս. ԱՅԴԻՆՅԱՆ, պահեստազորի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի օպերատիվ արվեստի հետազոտությունների կենտրոնի գիտական-վերլուծաբան*



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհաքաղաքական և տարածաշրջանային անվտանգային ու ռազմաքաղաքական զարգացումների, մասնավորապես՝ 44-օրյա պատերազմի հետևանքների հաշվառմամբ, Հայաստանի համար կենսական անհրաժեշտություն պետք է համարել կարճ ժամանակում այնպիսի արդյունավետ ու ճկուն պաշտպանական համակարգի ստեղծումը, որն ունակ լինի հուսալի կերպով ապահովելու պետության ռազմական անվտանգությունը: Այդ խնդիրը էապես բարդանում է մարդկային, նյութական, առաջին հերթին՝ ֆինանսատնտեսական ու հումքային, ռեսուրսների սղության պատճառով: Դրան գումարվում է նաև այն հանգամանքը, որ ռազմական գիտությունը, այդ թվում՝ պատերազմավարության, ինչպես նաև պաշտպանությանը պետության պատրաստման տեսություններն ու հայեցակարգերը, հիմնականում զարգանում են մեծ պետություններում, և հարմար չեն մեզ, թեկուզ այն պարզ պատճառով, որ Հայաստանն իր տարածքի փոքրության բերումով չի կարող ապահովել պաշտպանության ոչ միայն ռազմավարական, այլև անգամ օպերատիվ խորություն: Ուստի անհրաժեշտ է մշակել մի այնպիսի տարբերակ, որն ապահովեր պետության երաշխավորված պաշտպանությունը նշված գործոնների առկայության պայմաններում: Նման տարբերակ, մեր կարծիքով, կարող է լինել տարածքային պաշտպանության համակարգի զարգացումը[1]:

---

* Հոդվածը նախնական տեսքով ներկայացվել է 22.09.2021: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 23.11.2022:

[1] Տարածքային պաշտպանության կազմակերպման նկատմամբ տարբեր մոտեցումները հանգամանորեն տես *Елизавета Морозова, Роман Крецул*. На защиту становись: как будет организована тероборона регионов России. «Известия», 21.10.2022 (https://iz.ru/1413518/elizaveta-morozova-roman-kretcul/na-zashchitu-stanovis-kak-budet-organizovana-teroborona-regionov-rossii); *Александра Худякова*. Силы территориальной обороны: чем будут заниматься и как туда попасть. «Слово: Діло», 19 января 2022 (https://ru.slovoidilo.ua/2022/01/19/statja/obshhestvo/sily-territorialnoj-oborony-chem-budut-zanimatsya-i-kak-tuda-popast), *Руслан Муздубаев, Мухтар Серапаев*. Развитие территориальной обороны: зарубежный опыт. «SARBAZ», 16.

## ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Տարածքային պաշտպանությունը սահմանվում է որպես ռազմական և համապետական այն միջոցառումների բաղկացուցիչ մաս, «որոնք իրականացվում են յուրային տարածքում գտնվող օբյեկտներն ու հաղորդակցության ուղիները հակառակորդի գործողություններից, նրա դիվերսիոն ու ահաբեկչական ձեռնարկումներից պաշտպանելու, ինչպես նաև ռազմական դրության ռեժիմի հաստատմանն ու պահպանմանն աջակցելու համար»[2]: Տվյալ սահմանման մեջ կա որոշակի անորոշություն, թե ո՛վ պետք է ծրագրի և իրականացնի այդ միջոցառումները, ի՛նչ կազմակերպվածք պետք է ունենան պաշտպանական ուժերն ու կոնկրետ ի՛նչ խնդիրներ կատարեն: Կարծում ենք, որ այդ անորոշությունները պայմանավորված են տարբեր պետություններում տարածքային պաշտպանության (ՏՊ) մասին եղած պատկերացումների տարբերությունները հարթելու և ինչ-որ ընդհանրական ձևակերպում տալու անհրաժեշտությամբ: Այն, որ տարբեր պետություններում ՏՊ-ի նկատմամբ կիրառվում են տարբեր մոտեցումներ, հաստատվում է դրանց փորձի հետ անգամ թռուցիկ ծանոթությամբ: Սա մեզ ևս մեկ անգամ հուշում է, որ չի կարելի պարզապես մեխանիկական եղանակով ընդօրինակել որևէ մի պետության կիրառած կազմակերպական սկզբունքներն ու կառուցվածքը, այլ պետք է գործել խելամիտ կերպով՝ ընտրազատելով ու մերժելով այն ամենը, ինչ հարիր չէ մեր ազգի հոգեկերտվածքին և ավանդույթներին, մեր պետության սահմանակարգին և կառուցվածքային սկզբունքներին: Կարծում ենք, որ մենք նաև իրավունք չունենք մոռացության մատնելու ինքնապաշտպանական մարտերի մեր հարուստ ազգային փորձը, որի փայլուն օրինակներ են տվել և՛ արևմտահայությունը, և՛ արևելահայությունը՝ արցախահայության իր հատվածով:

Այս սկզբունքով առաջնորդվելով՝ փորձենք ուրվագծել այն ընդհանուր պատկերացումը, որն ստորև կաշխատենք կոնկրետացնել առանձին մոտեցումների, հարցերի, ուղղությունների ու սկզբունքների առնչությամբ: Մեր պատկերացմամբ՝ տարածքային պաշտպանությունն ըստ իր խնդիրների ու կատարման եղանակների կարելի է ներկայացնել որպես այնպիսի փոխկապված պետական միջոցառումների համալիր, որոնք իրականացվում են աշխարհազորի՝ տարածքային-գոտիական սկզբունքով արագ կազմավորվող ստորաբաժանումների ուժերով, իսկ հավանական հակառակորդի հնա-

10.2017 (https://sarbaz.kz/analytics/razvitie-territorialnoy-oborony-zarubegnyy-opyt-172842123/); *L. Wojciech*. Poland's Territorial Defense Force – 3 Years On From the Creation. "OVD", 19 June 2020 (https://www.overtdefense.com/2020/06/19/polands-territorial-defense-force-3-years-on-from-its-creation/); *Յու. Գ. Խաչատուրով,* Պաշտպանությանը պետության և նրա Զինված ուժերի պատրաստման որոշ հարցեր: «ՀԲ», 2009, հմ. 3:

[2] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան*, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 482:

րավոր հարձակման գլխավոր ուղղություններում ապահովվում են ռազմականացված բնակավայրերի միջոցով: Ընդ որում, տարածքային պաշտպանության ստորաբաժանումները պետք է օժտված լինեն մարտական առաջադրանքները (գործողությունները) ինքնավար կերպով կատարելու կարողությամբ և անհրաժեշտ ռազմական սպառազինությամբ, զինամթերքով և այլ նյութատեխնիկական միջոցներով ապահովման համար ունենան մշտապես թարմացվող պահեստների ցանց: Այստեղ պետք է նշել, որ ՏՊ զորքերի անձնակազմի հիմնական առավելություններից են տեղանքին լավ ծանոթ լինելը և մեծ շարժառիթավորումը՝ պայմանավորված իր օջախը պաշտպանելու անհրաժեշտության գիտակցմամբ:

Նշենք նաև, որ տարածքային պաշտպանության պատմական և արդի փորձի ուսումնասիրությունն ու վերլուծության արդյունքները հնարավորություն են տալիս «տարածքային պաշտպանությունն առանձնացնելու որպես ռազմական գործունեության ինքնուրույն ոլորտի, որը ենթարկվում է որոշակի օրինաչափությունների, իրագործվում է հատուկ սկզբունքներին համապատասխան, որոշակի պահանջներ է ներկայացնում ուժերի և միջոցների կազմին ու կառուցվածքին, դրանց կիրառման ձևերին ու գործողությունների եղանակներին»[3]:

Ընդհանուր առմամբ, կարող ենք նշել, որ մասնավորապես ռուսաստանյան պատկերացումներով ՏՊ ստորաբաժանումները նախանշանակվում են ռազմաճակատը ճեղքած հակառակորդի ուժերի առաջխաղացման կասեցման կամ դրանց ջախջախման, նրա դեսանտային (դիվերսիոն) խմբերի վնասազերծման, տվյալ տարածքում եղած կարևոր ռազմական, քաղաքացիական ու բնակչության կենսապահովման օբյեկտների, հաղորդակցային, էներգետիկ և այլ կարևոր ուղիների ու ցանցերի պաշտպանության, պետական սահմանի հարակից հատվածի ծածկապաշտպանության գործողություններին ակտիվ կերպով մասնակցելու, ռազմական դրության ռեժիմի պահպանման համար[4]: Այդ ստորաբաժանումները պետք է պատրաստ լինեն տվյալ տարածքի բռնազավթման դեպքում արագորեն կերպափոխվելու անհամաչափ զինված պայքարի մեթոդների կիրառմամբ պարտիզանական դիմադրության ուժերի[5]:

Իսկ ԱՄՆ-ում ազգային գվարդիայի վրա դրված են հստակորեն արտահայտված իրավապաշտպանական խնդիրներ, ինչպես, օրինակ, մասնակցությունն այն բոլոր միջոցառումներին ու միջոցներին, որոնք կառավարությունը ձեռնարկում է հասարակությանը քայքայիչ գործունեությունից, ապօրինությունից և պատասխանատվությունից պաշտպանելու համար, ընդսմին այդ

[3] Տես *Д. Таненя, А. Кондрашов, М. Юршин.* Территориальная оборона. «Армейский сборник», 06.06.2022 (https://army.ric.mil.ru/Stati/item/409277/):

[4] Տես «Территориальная оборона». «Энциклопедия» МО РФ (https://encyclopedia.mil.ru/encyclopedia/dictionary/details.htm?id=14102@morfDictionary):

[5] Տես *Հ. Մ. Քրթանջյան,* Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով: «ՀՔ», 2009, հմ. 3:

միջոցառումների ուժային բաղադրիչում կարող է ներգրավվել նաև բանակը[6]: Միևնույն ժամանակ, ազգային գվարդիան կարող է մարտական գործողություններ վարել նաև ԱՄՆ-ի սահմաններից դուրս, երբ ներքին վտանգը անմիջականորեն առնչվում է արտասահմանյան աղբյուրի հետ: Այսինքն՝ ՏՊ կազմակերպման շնորհիվ բանակն ազատվում է իր անմիջական գործառույթների սահմաններից դուրս գտնվող մի շարք այնպիսի առաջադրանքներից, որոնք պետք է պարտադիր կերպով կատարվեն ռազմական դրության և ռազմական գործողությունների ժամանակ: Ըստ այդմ ՏՊ զորքերը չեն փոխարինում զինված ուժերին՝ կատարելով դրանց դերը պետության պաշտպանության՝ ներքին անվտանգության ապահովման ասպարեզում, այլ գործում են «ոչ թե փոխարեն, այլ՝ միասին» բանաձևով:

## ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻՑ

Նախ. նշենք, որ ՏՊ համակարգեր ունեն բավական թվով պետություններ, մասնավորապես՝ ԱՄՆ-ը, Ավստրիան, Բելառուսը, Բելգիան, Գերմանիան, Դանիան, Էստոնիան, Իսրայելը, Իտալիան, Լատվիան, Լիտվան, Լեհաստանը, Մեծ Բրիտանիան, Նիդեռլանդները, Նորվեգիան, Շվեդիան, Ռուսաստանը, Ուկրաինան, Ֆինլանդիան, Ֆրանսիան և այլ երկրներ: Նպատակահարմար ենք համարում ավելի հանգամանորեն ներկայացնել դրանցից մի քանիսի ՏՊ համակարգի որոշ առանձնահատկություններ, որոնք կարող են օգտակար լինել մեր ազգային տարածքային պաշտպանության կազմակերպման համար:

**Իսրայելի Պետություն:** ժամանակակից հրեական պետության տարածքային ինքնապաշտպանության ավանդույթներն սկսել են ձևավորվել դեռ նախքան դրա ստեղծումը՝ 1941–1942 թթ., երբ Պաղեստինի տարածքում գտնվող արաբական և հրեական բնակավայրերի շփման գծի երկայնքով տեղաբաշխված կիբուցներին[*] կցվեցին «Պալմախի»[**] ստորաբաժանումներ[7]: Թշնամական պետություններով շրջապատված լինելու, պաշտպանական խորություն չունենալու պայմաններում Իսրայելը 1970-ական թվականների երկրորդ կեսին ծեռնամուխ եղավ պաղեստինյան արաբների և հրեա-

[6] *Տես Դ. Տանենյա, Ա. Կոնդրաշով, Մ. Յուրշին,* Նշ. աշխ.:

[*] Կիբուցը իսրայելական գյուղատնտեսական-արդյունաբերական համայնք է, սոցիալտնտեսական համակարգ՝ հիմնված սոցիալական արդարության, համատեղ սեփականության, հավասարության, փոխօգնության վրա (տես “The Kibbutz & Moshav: History & Overview”. “Jewish Virtual Library” (https://www.jewishvirtuallibrary.org/history-and-overview-of-the-kibbutz-movement), նաև՝ *Հ. Ս. Քոթանջյան,* Նշ. աշխ.):

[**] «Պալմախը» Իսրայելի Պետության Պաշտպանության բանակի հիմք դարձած «Հագանահ» ընդհատակյա բանակի հարվածային ընտրյալ ջոկատ է (տես “Jewish Defense Organizations: The Palmach (May 19, 1941)”. “Jewish Virtual Library” (https://www.jewishvirtuallibrary.org/the-palmach)):

[7] Այս մասին ավելի հանգամանորեն տես “The Origins of the Israel Defense Forces”. “Israel Defense Forces”, 26.05.2021 (https://www.idf.il/en/articles/ 2021/the-origins-of-the-israel-defense-forces/), նաև *Հ. Ս. Քոթանջյան,* Նշ. աշխ.:

ների բնակավայրերի դասավորության փոփոխման ռազմավարական պլանի մշակմանն ու իրագործմանը: Այդ պլանով նախատեսվում էր որպես պաշտպանության ռազմավարական ռեսուրս ստեղծել նոր հրեական բնակավայրեր, որոնք պետք է տարածքային եղանակով ամրապնդեին հրեա և արաբ բնակչության շփման գծի պաշտպանությունը ինչպես պետական սահմանի, այդ թվում՝ ծովեզրի, գոտում, այնպես էլ երկրի ներսում, ներառյալ՝ Իսրայելի ազգային անվտանգության համար առանձնակի կարևորություն ներկայացնող հաղորդակցման ենթակառուցվածքներն ու այլ օբյեկտներ: Հրեական բնակավայրերի ծավալման նոր ռազմավարությունը հետևողականորեն կյանքի կոչվեց 1977 թ., երբ գեներալ Ա. Շարոնի ղեկավարությամբ մշակվեց և ձևավորվեց Իսրայելի տարածքային պաշտպանության նոր համալիրը, արմատապես վերափոխվեց և ամրապնդվեց հրեական պաշտպանական-աշխատանքային բնակավայրերի ու Պաշտպանության բանակի (ՑԱՀԱL) փոխգործության արդյունավետ համակարգը: Այսպիսով՝ Իսրայելի ազգային անվտանգության ապահովման գերակա ուղղություններից մեկը դարձավ տարածքային պաշտպանության ամրապնդումը՝ նոր հրեական բնակավայրերի կառուցման և զենքով ու զինամթերքով ապահոված, պաշտպանողական մարտական գործողությունների վարմանը պատրաստ հայրենասեր երիտասարդներով դրանց բնակեցման միջոցով[8]:

**Բելառուսի Հանրապետության** տարածքային պաշտպանության համակարգն «սկսել է ստեղծվել 10 տարի առաջ: Դա այն համարձակ փորձերի, գիտական հետազոտությունների և վարժանքների շրջանն էր, որոնք հնարավորություն տվեցին հիմնավորելու ռազմական շինարարության, երկրի պաշտպանունակության ամրապնդման առավել հեռանկարային ուղղությունները, այդ թվում՝ տարածքային պաշտպանության սկզբունքորեն նոր համակարգի ստեղծումը»[9]: Ինչպես հայտնի է, Բելառուսում տարածքային պաշտպանությունը ակտիվորեն կիրառվել է Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ ֆաշիստական Գերմանիան բռնազավթել էր Բելոռուսական ԽՍՀ ամբողջ տարածքը: Խորհրդային Միությունը կարողացել է տեղի բնակչության ակտիվ ներգրավմամբ ծավալել արդյունավետ պարտիզանական պայքար, որը տարածքային պաշտպանության հիմնական տարրերից մեկն է:

«Բելառուսի Հանրապետության տարածքային պաշտպանության կանոնադրությունը հաստատելու մասին» Նախագահի 2011 թվականի փետրվարի 1-ի հրամանագրով ստեղծված տարածքային պաշտպանությունը դարձել է պետության անվտանգության ապահովման համակարգի կարևոր բաղադրիչ[10]: Այն բաղկացած է յոթ գոտիներից, որոնցից վեցը ներկայացնում են մարզերը, իսկ մեկը՝ մայրաքաղաք Մինսկը: Յուրաքանչյուր մարզային

[8] Տես “The Origins of the Israel Defense Forces”:

[9] «Территориальная оборона в системе национальной безопасности». МО Республики Беларусь (https://www.mil.by/ru/newpress_center/publications/8489/):

[10] Տես *Л. С. Мальцев.* Территориальная оборона в системе национальной безопасности. «Беларуская Думка», 2011, № 12 (https://beldumka.belta.by/isfiles/000167_148424.pdf):

պաշտպանական գոտի իր հերթին բաժանվում է շրջանների, ընդ որում, տարածքային պաշտպանության գոտու (շրջանի) պատասխանատուն է տվյալ վարչական միավորի գործադիր կոմիտեի նախագահը (շրջանի ինքնակառավարման մարմնի ղեկավարը), որը պատերազմի ժամանակ գլխավորելու է իր ենթակա տարածքի պաշտպանության խորհուրդը, իսկ շտաբի պետ – գոտու պետի տեղակալ լինելու է այդտեղի զինվորական կոմիսարը:

Տարածքային պաշտպանության ուժերը ենթարկվում են ԶՈՒ-ի ԳՇ պետին, մինչդեռ նրանց ապահովման խնդիրը դրվում է տեղական իշխանության մարմինների վրա: Պաշտպանության ուժերի համալրումը կատարվում է տվյալ վարչատարածքային միավորի՝ զինվորական ծառայությանը պիտանի բնակիչների թվից: Տարածքի մի մասի բռնազավթման դեպքում ՏՊ զորքերն սկսում են զինված պայքար՝ հակառակորդի վերահսկողության տակ գտնվող հատվածներում ծեռնարկելով դիվերսիաներ, ասպատակումներ, ոչնչացնելով նրա կենդանի ուժը և հայթայթելով հետախուզական տվյալներ: ՏՊ զորքերն ունակ են ամենակարճ ժամկետներում ստեղծելու հարյուրավոր պարտիզանական ջոկատներ և կաշկանդելու հակառակորդի կանոնավոր զորքի գործողությունները[11]:

Բելառուսում նախատեսվում է տարածքային պաշտպանության զորքերը ծավալել իրական ռազմական սպառնալիքի դեպքում, ընդ որում, դրանց մարտական առաքելությունն իրականացվելու է իրենց շրջանում:

**Մերձբալթյան հանրապետություններ:** Հարկ է հիշել, որ հաղթանակած Խորհրդային բանակը և ներքին ուժերը պատերազմից հետո գրեթե տասը տարի շարունակ չէին կարողանում այստեղ վերջնականապես վերացնել «անտառային եղբայրներ» անվանումը կրող պարտիզանական ջոկատները:

Ներկայիս Մերձբալթյան հանրապետություններն իրենց տարածքային պաշտպանության ուժերն ստեղծվել են այդ պարտիզանական ջոկատների օրինակով: Լիտվայի «Ազգային պաշտպանության կամավորական ուժեր» *(“Krašto Apsaugos Savanorių pajėgos”)*, Լատվիայի «Երկրի պահապան» *(“Zemessardze”)* և Էստոնիայի «Պաշտպանության լիգա» *(“Kaitseliit”)* կազմավորումները տարածքային պաշտպանության կամավորական ուժեր են և կազմում են տվյալ հանրապետության զինված ուժերի կարևոր բաղադրիչ մասը: Ռազմական գործողությունների սկսման դեպքում նրանց հիմնական խնդիրն է հակառակորդի ներխուժած զորքերի դեմ կազմակերպել պարտիզանական դիմադրություն և հյուծել դրանց, իսկ խաղաղ ժամանակ ապահովել բնակչության ռազմական պատրաստումը, ինչպես նաև մասնակցել արտակարգ իրավիճակների հետևանքների վերացմանը և հասարակական կարգի պահպանմանը, իրականացնել նաև խաղաղարարական առաքելություն[12]:

Մերձբալթյան հանրապետություններում մեծ կարևորություն է տրվում

---

[11] Տես «Войска территориальной обороны (ТерО) Республики Беларусь». «Современная армия». 14.06.2012 (http://www.modernarmy.ru/article/176):

[12] Տես *И. Полонский.* О сильных сторонах прибалтийских армий: как защитят себя Латвия, Литва и Эстония. «Военно-политическое обозрение», 08.06.2020 (https://www.belvpo.com/113094.html/):

տարածքային պաշտպանության ուժերի մասնագիտական պատրաստմանը: Դրանք համալրված են լավ սպառազինված և գաղափարապես շարժառիթավորված հազարավոր մարտիկներով, որոնք կանոնավոր կերպով անցնում են ուսումնամարզական հավաքներ և ձեռք են բերում բարձր մակարդակի մարտական պատրաստականություն: Այսպիսով՝ Մերձբալթյան հանրապետությունների զինված ուժերը տարածքային պաշտպանության արդյունավետ համակարգի ներդրմամբ ձգտում են համակշռելու իրենց երկրների բնակչության փոքր թվաքանակը[13]:

Ինչ վերաբերում է տարածքային պաշտպանության զորքերի համալրման հարցին, ապա հարկ է նշել, որ մեծ թվով պետություններում, մասնավորապես՝ բալթյան պետություններում, այն կատարվում է կամավորության սկզբունքով: Այս հիմնարար սկզբունքի կիրառումը հնարավորություն է տալիս ձևավորելու ՏՊ զորքերի՝ բարձր բարոյահոգեբանական որակներով օժտված անձնակազմ: Պատերազմի ժամանակ ՏՊ զորքերը դառնում են պետության զինված պաշտպանության հիմնական անհամաչափ բաղադրիչ[14]:

**Լեհաստանի Հանրապետություն:** Ուշագրավ է այն, որ որոշ պետություններում տարածքային պաշտպանության զորքերի ստեղծման հետ կապված եղել են որոշ բարդություններ: Օրինակ՝ Լեհաստանում տարածքային պաշտպանության զորքերում ներառվել են պահեստազորայիններ, կամավորներ և հրամանով տեղափոխված զինծառայողներ: Քանի որ որոշումը ոչ թե բուն ռազմական, այլ քաղաքական բնույթի էր, Զինված ուժերում տարածվեց այն մտավախությունը, թե ՏՊ զորքերն ի հաշիվ ԶՈՒ-ի կդառնան «սիրելի զավակ»: Սակայն շուտով այս կասկածը փարատվեց, և բանակի ու տարածքային պաշտպանության զորքերի միջև հաստատվեց սերտ համագործակցություն[15]: Ներկայումս Լեհաստանի Տարածքային պաշտպանության ուժերը *(Wojska Obrony Terytorialnej)* Լեհաստանի ԶՈՒ-ի հինգ առանձին ծառայություններից մեկն է: Հակառակորդի ագրեսիվ գործողությունների դեպքում ՏՊ ուժերը ձեռնարկում են ռազմական օպերացիաներ, վարում անհամաչափ և հիբրիդային մարտական գործողություններ, ճգնաժամների կառավարման օպերացիաներ, կատարում բնակչության շրջանում ռազմահայրենասիրական արժեքների դաստիարակման աշխատանքներ[16]: ՏՊ ստորաբաժանումների ուսումնավարժեցման խնդիրը դրված է արհեստավարժ զինվորականների, ռազմական կառավարման տեղական մարմինների

[13] Տես նույն տեղում:

[14] Տես *О. Н. Любочко.* Территориальная оборона как инструмент обеспечения военной безопасности государства. «Вестник Военной Академии Республики Беларусь», 28 июня 2017, № 2 (https://varb.mil.by/nauka/vestnik/PDF/Vestnik_2-2017.pdf); *M. Fornusek.* Modern Army for Modern Times or aPrivate Paramilitary? Polish Territorial Defence Force, 2020 (https://is.muni.cz/th/uscj8/Plny_text_prace.pdf):

[15] Այս մասին ավելի հանգամանորեն տես *Լ. Կոյցեխ*, Նշ. աշխ.:

[16] Տես «Territorial Defence Forces». «gov.pl» (https://www.gov.pl/web/national-defence/territorial-defence-forces#:~:text=Territorial%20Defence%20Forces%20(TDF)%20(,Poland's%20defence%20and%20deterrence%20potential):

րի, ռազմական ակադեմիաների, ինքնապաշտպանական խմբերի վրա: ՏՊ ուժերը պատրաստվում են նաև դաշնակից միացյալ ուժերի հետ համատեղ գործողությունների[*]: Տարածքային պաշտպանության սպառազինությունում հիմնականում թեթև զենք է (դիպուկահարական հրացան, ձեռքի գնդացիր, նռնականետ,ականանետ), հետևակային դասի սպառազինություն, հակատանկային, հակաօդային համակարգեր, կապի միջոցներ և այլն:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀՀ-ում տարածքային պաշտպանության համակարգի զարգացման, ինչպես նաև պետության պաշտպանության կազմակերպման աշխատանքներում յուրաքանչյուր քաղաքացու ներուժի լիարժեք օգտագործման նպատակով 2020 թ. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում կատարվեց լրացում, որը իրավական հիմք է ստեղծել աշխարհազորի համակարգի ներդրման համար: Ըստ այդ օրենքի՝ «Աշխարհազորը Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում Հայաստանի Հանրապետության զինված պաշտպանությանը կամավորության սկզբունքով քաղաքացիների մասնակցության համակարգ է»[17]:

Ըստ այդ օրենքի՝

«...4. Աշխարհազորի համակարգը գործում է տարածքային սկզբունքով և ըստ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման՝ պայմանականորեն բաղկացած է զորամիավորումներից և դրանց ենթակա բրիգադներից ու գումարտակներից: Աշխարհազորի կառուցվածքը, պատրաստության և կիրառման պլանները հաստատվում են Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի Գլխավոր շտաբի պետի հրամանով:

5. Աշխարհազորի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի Գլխավոր շտաբի պետը՝ Զինված ուժերի պատրաստության գլխավոր վարչությունում ձևավորված աշխարհազորային շտաբի միջոցով:

6. Աշխարհազորային զորամիավորման ղեկավարը (հրամանատարը) խաղաղ և պատերազմի ժամանակ համապատասխան տարածքային կառավարման մարմնի ղեկավարի տեղակալն է, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետի տեղակալը»[18]:

Միևնույն ժամանակ, արտասահմանյան առաջավոր փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ պետության տարածքային պաշտպանության համա-

---

[*] Օրինակ՝ ՆԱՏՕ-ի «Անակոնդա-2016» և «Անակոնդա-2018» զորավարժություններում ներգրավված էին նաև Լեհաստանի ՏՊ ուժերը (տես նույն տեղում):

[17] Տես ՀՀ 2020 թ. հոկտեմբերի 28-ի ««Պաշտպանության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքը, հոդ. 29.1 (https://www.arlis.am/documentview.aspx?docid=147113):

[18] Տես նույն տեղում:

կարգի արդյունավետության մեծացման համար անհրաժեշտ է կարգավորել որոշակի պրոբլեմային հարցեր:

Այս առումով նպատակահարմար է մշակել և ««Պաշտպանության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացման կարգով ներառել «ազգային դիմադրության հիմքերի մասին» դրույթը, որը ոչ միայն կլրացնի աշխարհազորի հայեցակարգը, այլև լրացուցիչ ուղենիշներ կնտցնի այս համակարգի կառուցվածքի, կազմակերպման, նպատակների, գործառույթների տարաբաժանման և այլ մասերով:

Կառուցվածքային ու կազմակերպական առումով տարածքային պաշտպանությանը բնակչության պատրաստման համար պահանջվում է համապատասխան ենթակառուցվածքների ճկուն ու տրամաբանական համակարգի ստեղծում, և այս ուղղությամբ կատարվելիք մեծ ծավալով աշխատանքներում էական դեր պետք է խաղան տեղական ինքնակառավարման մարմինները: ԶՈՒ-ի և տեղական ինքնակառավարման մարմինների յուրահատուկ ինտեգրման արդյունավետությունը մեծացնելու համար անհրաժեշտ է թվում դրանց համագործակցությունը ոչ միայն տարաբնույթ հոգևոր-մշակութային միջոցառումների կազմակերպման, զինծառայողների կենցաղային պայմանների բարելավման ասպարեզներում, այլև պետության տվյալ տարածքի պաշտպանության ամրապնդման գործում՝ նրանց միջև պատասխանատվության ոլորտների, գործառույթների և պարտականությունների հստակ ու տրամաբանական սահմանազատման շնորհիվ դրանց համատեղելիության ու փոխլրացումայնության ապահովմամբ:

Կարելի է ասել, որ տարածքային պաշտպանության համակարգը պետք է ներառի միմյանց հետ ներդաշնակված երեք բաղադրիչ՝ ռազմական, քաղաքացիական և միավորված ռազմաքաղաքացիական ոլորտներ:

Հայաստանի Հանրապետության տարածքային պաշտպանության, կամ նորացված աշխարհազորի, ռազմական բաղադրիչը կազմում են ռազմական կառավարման մարմինները, տարածքային կամավորական կազմավորումներն ուսումնավարժեցնող կանոնավոր ստորաբաժանումները և ռազմական պատրաստման ենթակառուցվածքները, տրանսպորտային միջոցները և զինապահեստները:

Քաղաքացիական բաղադրիչը ներառում է պետական հաստատությունները, տարածքային՝ մարզային և համայնքային, կառավարման մարմինները, որոնք ներգրավվում են տարածքային պաշտպանության գործում:

Ռազմաքաղաքացիական բաղադրիչը համատեղում է այդ երկու բաղադրիչները՝ ներառելով բուն աշխարհազորի կամավորական մարտական կազմավորումները, որոնք ձևավորվում են կոնկրետ մարզային կամ համայնքային տարածքներում, ինչպես նաև դրանց շտաբներն ու մատակարարման քաղաքացիական ենթակառուցվածքները:

ՀՀ պահեստազորում հաշվառված և տարածքային սկզբունքով տարածքային պաշտպանության ստորաբաժանումների կազմավորման համար մարդկային ռեսուրսի սղության պատճառով նպատակահարմար է տարածքային պաշտպանության գործում ներգրավել նաև համապատասխան հա-

մայնքներում (Երևան քաղաքում՝ ըստ վարչական շրջանների) հաշվառված այն քաղաքացիներին, որոնք պահեստազորում գտնվելու սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ հանվել են զինվորական հաշվառումից, սակայն չունեն առողջական խնդիրներ և ի վիճակի են պատշաճ կերպով կատարելու իրենց տրվող առաջադրանքները, ինչպես նաև ծառայության անցնելու ցանկություն հայտնած կանանց: Նշված անձանց հետ անհրաժեշտ է կնքել պայմանագիր, որում ամրագրված լինեն նրանց իրավունքներն ու պարտականությունները:

Անձնակազմին զենքի ամրակցման և պահպանման կարգը (տարածքային առանձնահատկությունների հաշվառմամբ) և կնքվող պայմանագրի օրինակելի ձևը պետք է սահմանվեն Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարի հրամանով:

Կարծում ենք նաև, որ նպատակահարմար կլիներ այն անձանց կարգախմբում, որոնց հետ «Պաշտպանության մասին» օրենքով պայմանագիր կնքելն արգելվում է, ներառել նաև այն անձանց, որոնք ենթակա են հետևյալ կետի պահանջին.

«...4) որը զորակոչային և զորահավաքային համալրման տարածքային ստորաբաժանումների որոշմամբ կցագրված է զորքերը պատերազմական հաստիքներով լրահամալրելու համար»:

Գործող օրենքով նաև սահմանվել է, որ որպես կազմավորվող աշխարհազորի (ՏՊ զորքերի, ուժերի) հրամանատարներ նախատեսվում են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների տեղակալները: Տվյալ զորքերի նպատակների ու դրանց առաջադրվող խնդիրների կարևորության հաշվառմամբ անհրաժեշտ ենք համարում ուշադրություն հրավիրել հետևյալ հարցերի վրա.

– ի՞նչ ծառայողական կամ մարտական ուղի են անցել այդ անձինք և արդյոք ունակ են ղեկավարելու իրենց վստահված կազմավորումն ու կատարելու առաջադրված մարտական խնդիրները,
– որքանո՞վ են նրանք ունակ անձնակազմում հաստատելու ներքին կարգուկանոն, առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, ապահովելու զենքի կրման և պահման պարտադիր կարգի կատարումը, և այլն:

Ըստ այդմ, առաջարկում ենք ՏՊ ստորաբաժանումների ղեկավար (հրամանատար) նշանակելիս հաշվի առնել նրա գիտելիքների, ունակությունների ու հմտությունների համապատասխանությունն այդ պաշտոնին ներկայացվող խիստ պահանջներին:

Կարծում ենք նաև, որ ՏՊ կազմակերպելու համար նպատակահարմար է աշխարհազորային կրտսեր հրամանատարական (ինչպես սպայական, այնպես էլ ավագ և կրտսեր ենթասպայական ու սերժանտական) կազմի ներկայացուցիչների համար ստեղծել հատուկ պատրաստման համակարգ, ապա նրանց օժտել լայն լիազորություններով, ինչը վերադաս հրամանատարությանը հնարավորություն կտա խնդիրն առաջադրելու ընդհանուր գծերով՝ առանց հետագա անընդհատ վերահսկողության, իսկ կրտսեր հրամանատարներին՝ գործելու ընդհանուր նպատակների և մտահղացումների շրջանակում՝ ցուցաբերելով ճկունություն և օպերատիվություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Տարածքային զորքերը (ուժերը, ստորաբաժանումները) հանդես են գալիս որպես զինված ուժերի երկրորդ շարակարգ, որը նախատեսված է արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ հիմնական ուժերի ուժեղացման, մարտական առաջադրանքների և արտակարգ իրավիճակներին առնչվող խնդիրների կատարման համար:
2. Տարածքային պաշտպանության համակարգի առավելությունն այն է, որ պատերազմի դեպքում աշխարհազորային ստորաբաժանումները ձևավորվում են երկրի ամբողջ տարածքում՝ գերազանցապես գործելով իրենց բնակության շրջանում, ինչով ապահովվում է տեղանքի լավ իմացությունը և իր օջախը, իր ընտանիքը պաշտպանելու գաղափարով սնուցվող բարձր բարոյամարտական ոգին: Յուրաքանչյուր մարզ, համայնք ունի տարածքային պաշտպանության իր աշխարհազորային ստորաբաժանումը և ապահովման ենթակառուցվածքը, ընդսմին տվյալ ստորաբաժանումները լավ կազմակերպված և ուսումնավարժեցված, ԶՈՒ-ի հետ ներդաշնակ գործող և մեկ համընդհանուր համակարգով կառավարվող, իր առաջադրանքը արագ և արդյունավետ կերպով կատարելու պատրաստ ռազմականացված կազմավորումներ են: Ըստ էության, տվյալ համակարգը ստեղծում է իրենց առօրյա կյանքով ապրող, համապատասխան գիտելիքներ ու հմտություններ ունեցող քաղաքացիների ներդաշնակ ցանց, ինչը նրանց հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում կազմելու մարտական ստորաբաժանում ու վարելու ոչ կանոնավոր մարտ և դրա ընթացքում կիրառելու ժամանակակից զենք, մարտական տեխնիկա, կապի միջոցներ:

## НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ОРГАНИЗАЦИИ ТЕРРИТОРИАЛЬНОЙ ОБОРОНЫ КАК СРЕДСТВА ПОВЫШЕНИЯ ОБОРОНОСПОСОБНОСТИ ГОСУДАРСТВА

*А. С. АЙДИНЯН, полковник запаса, ученый-аналитик Центра исследований оперативного искусства НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Во многих государствах мира, таких, как Австрия, Беларусь, Бельгия, Великобритания, Германия, Дания, Израиль, Италия, Латвия, Литва, Нидерланды, Норвегия, Польша, Россия, США, Украина, Финляндия, Франция, Швеция, Эстония и т. д., в системе обороны государства созданы войска территориальной обороны. В каждом государстве, в соответствии с требованиями конституции, особенностями национального менталитета и психологии и с духовно-культурными традициями, сложился свой индивидуальный подход к комплектованию и задачам этих войск, к их взаимоотношениям с вооруженными силами и гражданскими властями.

Основными требованиями к системе территориальной обороны (ТО) являются ее гибкость, маневренность и эффективность, высокая мобилизационная готовность, интероперабельность с другими войсками. На эту систему возлагаются в основном задачи: в военное время – по участию в пресечении дальнейшего продвижения прорвавшихся войск противника, в борьбе с его разведывательно-диверсионными и десантными группами и отрядами, по охране важных военных и гражданских объектов на отведенной им территории, коммуникационных, энергетических и иных линий и сетей жизнеобеспечения населения, зачистке местности, организации на оккупированных территориях асимметричной вооруженной борьбы в форме партизанской войны, прикрытию стратегического развертывания ВС, прикрытию соответствующих участков государственной границы; в мирное время – по подготовке военно-обученных резервов, поддержанию режимов чрезвычайного и военного положения, участию в ликвидации последствий ЧС.

С учетом геополитической и региональной безопасности и военно-политической обстановки на Южном Кавказе, в особенности последствий 44-дневной войны, для РА насущной необходимостью яляется создание эффективной и гибкой системы обороны, которая была бы способна надежно обеспечивать военную безопасность государства. В этом аспекте представляется актуальным развитие системы территориальной обороны РА. При этом всестороннее изучение международного опыта организации системы ТО с его адаптацией к местным условиям в РА и традиций формирования отрядов национальной самообороны и ополчения позволит оптимальным образом определить структуру, цели и функции системы ТО РА. Для формирования и развития системы ТО в РА важной правовой основой является Закон РА «Об обороне» с дополнениями, внесенными в 2020 году и предусматривающими формирование системы ополчения.

## SOME QUESTIONS ON ORGANIZING THE TERRITORIAL DEFENSE AS A MEANS FOR IMPROVING THE NATIONAL DEFENSE CAPABILITY

*A. S. AYDINYAN, Colonel (Ret.), Research Fellow, Center for Research on Operational Art, NDRU, MOD, RA*

SUMMARY

In many states of the world, namely Austria, Belarus, Belgium, Denmark, Estonia, Finland, France, Germany, Great Britain, Israel, Italy, Latvia, Lithuania, the Netherlands, Norway, Poland, Russia, Sweden, Ukraine, the USA, and etc., defense territorial forces are formed within the

state defense system. Each state, pursuant to the requirements by the Constitution, peculiarities of the national mentality and psychology, and spiritual-cultural traditions, has developed its own individual approach towards the manning and mission of these forces, their interaction with the Armed Forces and civilian authorities.

The main requirements for the territorial defense (TD) system are its flexibility, maneuverability and efficiency, high mobilization readiness, and interoperability with other troops. This system is mainly assigned the following tasks: in wartime – to participate in preventing the further advance of the enemy troops that have broken through; in combating their commando and landing groups and detachments: to protect key military and civilian facilities in the allotted territory, communications, energy and other lines and life support networks for the population; to clean up the area; to organize guerrilla-type asymmetric armed struggle in the occupied territories; to cover the strategic deployment of the armed forces; to cover the concerned sections of the state border; in peacetime – to prepare military trained reserve; to maintain states of emergency and martial law; to participate in eliminating the consequences of emergencies.

With a view on the geopolitical and regional security and the military-political environment in the South Caucasus, especially the aftermaths of the 44-Day War, it is of vital importance for the RA to create an efficient and flexible defense system, capable of reliably ensuring the military security of the state. In this sense, the development of the RA national territorial defense system is considered relevant. With that, a comprehensive study of international experience in organizing the TD system with its localization in the RA and traditions of formation of national self-defense detachments and militia will allow to efficiently identify the structure, objectives and functions of the RA TD system. The RA Law «On Defense» with the amendments made in 2020 and anticipating the establishment of the system of the TD is a key legal framework for the establishment and development of the RA TD system.

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՈՒՄ




«ՀՀ տարածքային պաշտպանության համակարգը և արդի խնդիրները» թեմայով կլոր սեղան-քննարկում ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում

Երևան, 2022 թ. հոկտեմբերի 20



Հայաստանում «ՆԱՏՕ-ի պաշտպանական կրթության զարգացման ծրագրի» ներկայացուցիչների մասնակցությամբ կլոր սեղան-քննարկում ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում

Երևան, 2022 թ. նոյեմբերի 24

# ՈՒՍՈՒՄՆԱՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ



Հրաձգություն հակաօդային պաշտպանության 9Կ33 «Օսա-ԱԿՄ» զենիթահրթիռային համալիրով



Դրվագ քաղաքացիական անձանց համար
ՀՀ ՊՆ կազմակերպած հրաձգության դասընթացից

2022 թ. նոյեմբերի 5

## ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԳՈՐԾՈՆ



Հայկ և Բել («Հին հայկական վիպասանքից և առասպելներից» ալբոմից: Ե., 1939 թ.): Նկարիչ՝ Յոզեֆ Ռոտտեր



Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը օրհնում է կամավորներին Սբ. Էջմիածնի Մայր տաճարի առջև, 1914 թ.



Դրվագ Վանի ինքնապաշտպանական մարտերից, 1915 թ. (պատճենահանված է ՀՀ պատմության թանգարանի նյութերից)



Դրվագ երդման արարողությունից
«Եռաբլուր» պանթեոնում



Դրվագ նախնական զինվորական պատրաստման դասընթացի
հանրապետական օլիմպիադայից



Ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցառում
Երևանի նախադպրոցական հաստատություններից մեկում

# ԱՄՆ-Ի ԲԱՆԱԿԻ ՍԵՐԺԱՆՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԼԻԱՐԺԵՔ ՊԱՏԿԵՐՈՒՄ*

*Մայքլ ՀԵՅՍ, ԱՄՆ-ի Բանակի մայոր, Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանության երկկողմ հարցերով սպա, Բրենտ Ա. ԱՆԴԵՐՍ, գլխավոր սերժանտ (պաշտոնաթող), մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստանի ամերիկյան համալսարանի հաստատութենական հետազոտությունների ու գնահատման գրասենյակի տնօրեն*




> «Սերժանտական կորպուսը վերջին տասնամյակում ենթարկվել է հեղափոխական փոփոխությունների և շարունակում է իր զարգացումը, որպեսզի կարողանանք հաղթահարել այն նորանոր սպառնալիքները, որոնք առաջացնում են մեր թշնամիները: Հիմնվելով մեր Պետությանը Երդման, ինչպես նաև մեր հարուստ պատմության ու ժառանգության վրա՝ Սերժանտական կորպուսը առաջատարն է անձնակազմի, զինախմբի, ջոկի, կիսադասակի ու դասակի** մակարդակով զինվորներին առաջնորդելու և վարժեցնելու գործում: Ծանր, իրատեսական մարտական պատրաստման հիմունքների շեշտադրումը կերաշխավորի, որ ցամաքային մարտական գործողությունների բովից մեր զինվորները դուրս գան հաղթանակած» [18, պար. 1]:

*Սերժանտական կազմի ծառայողների ուղեցույցի* առաջաբանից մեջբերված այս բացատրությունը շատ տպավորիչ կերպով ներկայացնում է, թե ով է Սերժանտական կազմի ծառայողը, և ինչ է պահանջվում Բանակի այս հույժ կարևոր բաղադրիչը զարգացնելու համար: ԱՄՆ-ի Բանակի (Ցամաքային զորքերի) Սերժանտական համակարգի հաջողությունը պայմանավորված է նրա կրթության զարգացման համակարգի վճռորոշ գործոններով, կոչումների (պարտականությունների) յուրահատուկ մակարդակներով, այդ համակարգի շարունակական զարգացմամբ՝ էվոլյուցիայով, ինչպես նաև պարտքի կատարման ու կատարելագործման մշակույթով:

---

* Հոդվածը նախնական տեսքով ներկայացվել է 19.08.2022: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 17.11.2022:

** ԱՄՆ-ի Բանակում գործող նշված կազմակերպական միավորների բացատրությունը բերված է հոդվածի վերջում:– *Ծ. թ.:*

### *Սերժանտական կազմի ծառայողների մասնագիտական զարգացման համակարգ*

ԱՄՆ-ի Բանակի կազմավորումից ի վեր կարևոր դեր է ունեցել Սերժանտական կազմի զինվորական կրթությունը: Պրուսական բանակի՝ բարձր որակավորում ունեցող նախկին սպա բարոն ֆոն Շտոյբենը, որին նշանակել էր Ջորջ Վաշինգտոնը, մշակեց ու հատուկ ընտրված զինվորներին անմիջականորեն սովորեցրեց զինվորական վարժանքների, կարգապահության, առաջնորդության, ինչպես նաև մյուս զինվորներին պատշաճ կերպով վարժեցնելու արվեստն ու գիտությունը: Դրանով դրվեց ժամանակակից Սերժանտական համակարգի հիմքը [20]: 1778 թվականին ԱՄՆ-ի Բանակը հրատարակեց բարոն ֆոն Շտոյբենի հրահանգագիրը որպես միասնական ղեկավար կանոնագիրք՝ «Միացյալ Նահանգների զորքերում կարգուկանոնի և կարգապահության վերաբերյալ կանոնակարգ» վերնագրով (հայտնի է նաև «Կապույտ գիրք» անունով) [18]:

18-րդ դարից հետո ժամանակներն ու առաջադրանքների կատարման միջավայրը շարունակաբար փոխվել են այնպես, ինչպես փոխվել են նաև Սերժանտական կազմի զինվորականի դերն ու կիրառումը: «Սերժանտական կազմի զինվորականի և սպայի փոխհարաբերությունները ցույց տվեցին, որ այս իրավիճակում ունեն արժեքավոր դեր և ձևավորում են միասնության, պրոֆեսիոնալիզմի ու նպատակասլացության զգացում» [18, էջ 1-6]: Ձեռնարկում զետեղված կրթական պահանջներն ու համակարգերը երկար ուղի են անցել և զարգանալով հասել այն կետին, որ այժմ Բանակում հիմնվում են հետազոտական ու հատուկ գիտակրթական սկզբունքների վրա, մասնավորապես՝ Բանակի ուսուցման հայեցակարգի (Բանակի ուսուցման մոդելի) վրա [1, 19]: Այդ սկզբունքները կոչված են զարգացնելու 21-րդ դարի սերժանտական կազմը: Դա հնարավորություն է տալիս զինվորներին ոչ միայն գերազանցության հասնելու ԱՄՆ-ի Բանակում, այլև առավելագույնս արդյունավետ կերպով փոխգործելու դաշնակիցների ու գործընկերների հետ ամբողջ աշխարհում [3, 13]:

Սերժանտական կազմի ներկայիս կրթական համակարգը Սերժանտական կազմի զինվորականների կրթական ու մասնագիտական զարգացման համընդգրկուն համակարգ է: Այստեղ հիմնական ջանքերն ուղղված են զարգացմանը (առաջավարական հմտությունների ու ինքնազարգացման), կադրային ներուժի կառավարմանը (հանձնարարությունների (փորձի) շրջանակների ընդլայնում) և մասնագիտության հոգաբարձությանը (օրինակ ծառայել էթիկայի և համազգեստի պատիվը պահելու հարցում): Ներկայիս Սերժանտական կազմի կրթական ու մասնագիտական զարգացման համակարգը բաղկացած է հինգ հիմնական դպրոցներից, որոնք իրենց կարիերայի ընթացքում անցնում են Սերժանտական կազմի ծառայողները. Առաջավարի հիմնական դասընթաց, Առաջավարի խորացված դասընթաց, Ավագ առաջավարի դասընթաց, Առաջավարի մագիստրոսական դասընթաց և Գլխավոր սերժանտների դասընթաց: Բացի այդ, սերժանտները այդ հինգ հիմնական դպրոցների միջև առանձին անցնում են հատուկ առցանց դասընթացներ, որոնք իրենք ևս պետք է ավարտեն (տես Նկ. 1-1):

Սերժանտների կրթական ու մասնագիտական զարգացման համակարգը ներկայումս պարբերաբար և համալիր կերպով այնպես է զարգացնում Սերժանտներին, որ «նրանք լինեն ճկուն, հարմարվող, որակավորված, ունենան իրենց ինքնության կայուն գիտակցումն ու հոգեկերտվածքը, ինչպես նաև ունակ լինեն պայքարելու բազմաթիվ իրավիճակներում ու բազմաբնույթ միջավայրներում ծագող մարտահրավերների դեմ» [18, էջ 1-20]: Կարևոր է նշել, որ ոչ բոլոր զինվորներին է թույլատրվում սովորել խորացված ուսուցմամբ այս սերժանտական դպրոցներում: Բանակում ծառայության ընթացքում ստացած անհրաժեշտ աստիճանն ու ծառայության ժամկետն ունենալուց բացի, զինվորները պետք է նաև համապատասխանեն հասակի և քաշի պահանջներին, ֆիզիկական պատրաստվածության ստուգման ժամանակ ցուցաբերեն լավ ցուցանիշներ, ունենան պարբերական ստուգումների ժամանակ ստացած բավարար գնահատականներ և ընտրվեն ըստ իրենց ղեկավարության կազմած ատեստացիոն թերթիկի: Մրցակցությունը սերժանտ դառնալու կարևոր բաղադրիչն է, հետևաբար բոլորը պետք է աշխատեն լավագույնը լինելու համար:

Բացի սերժանտների կրթական ու մասնագիտական զարգացումից, մեծապես խրախուսվում է նրանց քաղաքացիական կրթությունը: Զինվորները բազմաթիվ շարժառիթներ են ունենում, ինչպես, օրինակ, ՋիԱյ Բիլը (*GI Bill-ը*)* ուսման ծախսերի հատուցման, քոլեջի անվճար ավարտական քննությունների, նախանգի մակարդակով ուսման ծախսերի հարցում աջակցության ցուցաբերման և այլ ծրագրեր, որոնց շնորհիվ զինվորները կարող են ստանալ դիպլոմ [10, 11]: Բացի կրթական մակարդակի բարձրացումից, քննադատական մտածողության հմտությունների զարգացումից և զինվորական ծառայությունից հետո անձի զբաղվածության հնարավորությունների ընդլայնումից, քաղաքացիական կրթությունը նաև սերժանտներին հնարավորություն է տալիս ավելի արագ առաջխաղացում ունենալու [5]: Դա նաև նպաստում է, որ սերժանտները ամբողջ կյանքի ընթացքում սովորեն, ինչը մեծապես կօգնի նրանց այն առումով, որ ներկայիս սերժանտներից պահանջվում է ավելի շատ պարտականությունների կատարում և ավելի մեծ չափի քննադատական մտածողություն:

### *Սերժանտների կոչումներն ու պարտականությունները*

ԱՄՆ-ի Բանակում սերժանտական կոչումները ձևավորվել են ժամանակի ընթացքում՝ ձեռք բերելով այսօրվա կառուցվածքը: Դա ԱՄՆ-ի Բանակի սերժանտական համակարգի մեկ այլ կարևոր գործոն է, քանի որ այդ կարգախմբի ցանկացած կոչում ունեցող ծառայողը ջանում է աջակցել սպային, ստորաբաժանմանը և ընդհանուր առմամբ Բանակին: Ահա թե ինչու են սերժանտական համակարգն անվանում «բանակի ողնաշար»: Յուրաքանչյուր կոչում յուրահատուկ է, պատշաճ կերպով վաստակած (ոչ թե պարզապես ստացված), յուրաքանչյուր կոչման համար տարորոշված են պահանջներն ու պարտականությունները:

* Զինծառայողների զորացրումից հետո նրանց վերաինտեգրման մասին օրենք:– *Թարգմ.:*

**Կապրալ**



**Նկարագիրը՝** կրտսեր սերժանտական կազմ, ցուցաբերում է առաջավարության մեծ հմտություններ:
**Կոչման համար անհրաժեշտ ստաժը՝** 24 ամիս:
**Տվյալ կոչումով ծառայության ժամկետը՝** 6 ամիս:
**Պարտականությունները՝** հաշվետու է սերժանտին, օգնում է զինվորների շրջանում կարգուկանոնի հաստատման ու պատրաստության ապահովման գործում:

**Սերժանտ**



**Նկարագիրը՝** գործում է որպես ջոկի հրամանատար, պատասխանատու է 5 զինվորի համար:
**Կոչման համար անհրաժեշտ ստաժը՝** 36 ամիս:
**Տվյալ կոչումով ծառայության ժամկետը՝** 8 ամիս:
**Պարտականությունները՝** վերահսկում է առօրյա խնդիրների կատարումը, օրինակ է ծառայում, հետևում է կարգապահությանը:

**Շտաբային սերժանտ**



**Նկարագիրը՝** գործում է որպես հիմնականում երկու խմբից բաղկացած ջոկի հրամանատար, պատասխանատու է 9-10 զինվորի համար:
**Կոչման համար անհրաժեշտ ստաժը՝** 72 ամիս:
**Տվյալ կոչումով ծառայության ժամկետը՝** 10 ամիս:
**Պարտականությունները՝** մշտապես հետևում է նորմերի պահպանմանը, կատարում է ջոկով տարաշարժեր, զարգացնում ու սովորեցնում է զինվորներին զինհաշվառումային մասնագիտական հմտություններ, որ վերջիններս կարողանան հաջողությամբ կատարել իրենց ստորաբաժանումներին տրված առաջադրանքները:

**Առաջին դասի սերժանտ**



**Նկարագիրը՝** հիմնականում 4-5 ջոկից կազմված դասակի սերժանտ:
**Կոչման համար անհրաժեշտ ստաժը՝** 6 տարի:
**Տվյալ կոչումով ծառայության ժամկետը՝** 36 ամիս:
**Պարտականությունները՝** իր փորձառությամբ պայմանավորված՝ աշխատում է անմիջականորեն դասակի ղեկավարի (սպայի) հետ, սովորեցնում նրան և խորհուրդներ տալիս: Պատասխանատու է զինվորների առողջության, բարեկեցության, ուսումնավարժեցման և զարգացման համար: Ներդրում է ունենում ստորաբաժանման հիմնական առաջադրանքների ցանկի կազմման գործում:

**Ավագ սերժանտ**



**Նկարագիրը՝** գումարտակի կամ ավելի բարձր մակարդակի ստորաբաժանումներում շտաբի շարքային ու կրտսեր հրամանատարական կազմի կարևոր անդամ:
**Կոչման համար անհրաժեշտ ստաժը՝** 12 տարի:
**Տվյալ կոչումով ծառայության ժամկետը՝** 36 ամիս:

**Պարտականությունները**՝ փորձառության բարձր մակարդակով պայմանավորված՝ ծառայում է որպես շտաբի արժեքավոր անդամ քաղաքականության մշակման, ուսումնավարժեցման կատարելագործման և կազմակերպական ստանդարտների (կարգապահության) ուժեղացման հարցերում:



**Առաջին սերժանտ**

**Նկարագիրը**՝ վաշտի (4–5 դասակ) սերժանտական կազմի ավագ զինծառայող:

**Կոչման համար անհրաժեշտ ստաժը**՝ 12 տարի:

**Տվյալ կոչումով ծառայության ժամկետը**՝ 36 ամիս:

**Պարտականությունները**՝ վաշտի հրամանատարի ավագ խորհրդական՝ շարքային ու կրտսեր հրամանատարական կազմից: Օրինակ է ծառայում վաշտի անձնակազմի համար, հոգ է տանում, որ ստանդարտները պահպանվեն կամ ապահովվեն, ուսումնավարժեցման նպատակներն իրականանան, պատասխանատու է զինվորների կատարելագործման, բոլոր վարչական գործառույթների, ինչպես նաև ստորաբաժանման մեջ ընդգրկված զինվորականների ու նրանց ընտանիքների առողջության, բարեկեցության ու բարոյական ոգու ապահովման համար:

**Գլխավոր Սերժանտ**



**Նկարագիրը**՝ գումարտակի կամ ավելի բարձր միավորի մակարդակով շտաբային կարևոր անդամ:

**Կոչման համար անհրաժեշտ ստաժը**՝17 տարի:

**Տվյալ կոչումով ծառայության ժամկետը**՝ 36 ամիս:

**Պարտականությունները**՝ զորամասի հրամանատարի վարչական գծով գլխավոր օգնական, ապահովում է անձնակազմի ուսուցումը՝ պատրաստ լինելով անհրաժեշտության դեպքում ստանձնելու Ավագ գլխավոր սերժանտի պարտականությունները:



**Ավագ գլխավոր սերժանտ**

**Նկարագիրը**՝ գումարտակի (4 կամ 6 վաշտից բաղկացած) կամ ավելի բարձր մակարդակի ստորաբաժանման սերժանտական կազմի ավագ զինծառայող:

**Կոչման համար անհրաժեշտ ստաժը**՝ 17 տարի:

**Տվյալ կոչումով ծառայության ժամկետը**՝ 36 ամիս:

**Պարտականությունները**՝ ապահովում է հիմնական սկզբունքների (չափանիշների) պահպանումը և խորհուրդներ է տալիս հրամանատարին շարքային զինվորների արդյունարարության, ուսումնավարժեցման, արտաքին տեսքի և վարքի վերաբերյալ:

**Բանակի գլխավոր սերժանտ**



**Նկարագիրը**՝ բանակում սերժանտական ամենաբարձր պաշտոնը (միայն մեկն է): Վերահսկում է բոլոր սերժանտներին:

**Կոչման համար անհրաժեշտ ստաժը**՝ 17 տարի:

**Տվյալ կոչումով ծառայության ժամկետը**՝ 36 ամիս:

**Պարտականությունները**՝ գործում է որպես Բանակի շտաբի պետի՝

ոչ սպայական կազմից ավագ խորհրդական և խորհրդատու շարքային ու սերժանտական կազմի հարցերով:

Թվարկված սերժանտական կոչումներով զինծառայողների պարտավորությունների ու պարտականությունների կարևոր հատկանիշն այն է, որ յուրաքանչյուր սերժանտ անմիջականորեն (կա՛մ որպես մենտոր, կա՛մ որպես խորհրդատու) առնչվում է սպայի հետ՝ որոշումների կայացման գործում նրան օգնելու, ինչպես նաև խնդիրը հաջողությամբ ավարտին հասցնելու նպատակով բոլոր հրամանների լիարժեք կատարումը վերահսկելու համար:

### *Շարունակական փոփոխություն և հետևողական զարգացում*

Բանակը մի դինամիկ կազմակերպություն է, որը պետք է մշտապես փոփոխվի, որպեսզի կարողանա *համապատասխան* կերպով դիմակայել այն փոփոխվող սպառնալիքներին, որոնք ծագում են պետության անվտանգության համար և մեր երկրի թե՛ ներսում, թե՛ դրսում շահերը առաջ մղելիս… Դրա համար պահանջվում են շարունակական արդիականացում ու զարգացում, որոնք պետք է տեղի ունենան Բանակի Դոկտրինում, կազմակերպվածքում, ուսումնավարժեցման, նյութատեխնիկական ապահովման, առաջավորության ու կրթության, անձնակազմի և նյութական բազայի տիրույթներում: Որպես այս *համապատասխանության* ապահովման ապացույց կարող է ծառայել «Բանակի ապագա հրամանատարություն» նախաձեռնության ստեղծումը, մի հրամանատարություն, որն ապագայում կգլխավորի Բանակի, զորամասերի ու զորամիավորումների *արդիականացման* գործը [15, էջ 1-1]:

Այս բառերը վկայում են, թե որքան կարևոր է մշտապես *համապատասխանել* ու *փոփոխվել*, որպեսզի հնարավոր լինի բավարարել այժմեական ու ապագա կարիքները: Սերժանտական համակարգը և Բանակը արդյունավետ չէին լինի, եթե այդ մշտական համապատասխանեցումը հիմնված չլիներ ապագա հնարավորությունների շարունակական հետազոտությունների, ինչպես նաև քաղած դասերի վրա: Այսպես. Վիետնամի պատերազմից հետո սերժանտական համակարգում կատարվեցին փոփոխություններ՝ կապված կոչումների կառուցվածքի հետ (հրաժարվեցին «տեխնիկ-սերժանտների»* համակարգից), և սկսվեց ամբողջ սերժանտական կրթական համակարգերի վերափոխումը: Գործընթացների ու ընթացակարգերի շարունակական վերանայումներ ու փոփոխություններ տեղի են ունեցել ամեն մի ճակատամարտից կամ այնպիսի կարևոր իրադարձությունից հետո, ինչպիսիք են, օրինակ, առաջին ու երկրորդ համաշխարհային պատերազմները, սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը, Կոսովոյի և Միջին Արևելքի հակամարտությունները և այլն [4, 18]: Որպես մեկ այլ օրինակ՝ սերժանտական կազմի հիմնական ձեռնարկը՝ «Սերժանտական կազմի զինծառայողների ուղեցույց»-ը, բազմիցս թարմացվել է միջավայրերի, գերակայությունների, մեթոդների և գործընթացների զարգացմանը զուգընթաց:

---

* Համարժեք է ՀՀ ԶՈՒ-ում վաշտի հրամանատարի՝ սպառազինության (տեխնիկական մասի) գծով ավագ տեխնիկին: – *Թարգմ.:*

Այդուհանդերձ, փոփոխությունները դժվարությունների հետ են կապված՝ իրագործման ժամանակ հաճախ հանդիպելով դիմադրության ու խոչընդոտների: Դրանք հաղթահարելու համար Բանակում ձեռնարկվում են գործուն միջոցներ, որոնց նպատակն է օգնել պատկերացում կազմելու այն մասին, թե ինչ է պետք փոխել և ինչպես արձագանքել այդ փոփոխություններին:

ԱՄՆ-ի Բանակում ձգտում են այդ գործում անմիջականորեն ներգրավելու զինվորներին և դրա համար կիրառում են բազմապիսի միջոցներ, օրինակ, նրանց պատկերացումները ներկայացնում են «Բանակայինների գաղափարները նորամուծական ծրագրի» շրջանակներում [12] պարբերական հետազոտությունների միջոցով [9], ինչպես նաև առաջարկություններ անելու վերաբերյալ հրահանգներով, որոնք զետեղված են ամեն մի զինվորական ձեռնարկում:

Բացի այդ, Բանակում սերժանտներից ու սպաներից հատուկ պահանջվում է ամեն մի գործողությունից հետո կատարել արդյունքների վերլուծություն, ներկայացնել հաշվետվություն տեղի ունեցած միջադեպերի մասին, ինչպես նաև բազմաթիվ այլ զեկույցներ, ինչը հնարավորություն է տալիս մշտապես հետևելու ռազմական օպերացիաներին ու զարգացումներին և հասկանալու դրանք: ԱՄՆ-ի պաշտպանական գերատեսչությունը նաև ֆինանսավորում է հետազոտական կորպորացիաներին ռազմական գործընթացների և օպերացիաների տարբեր ոլորտներում շարունակական գիտահետազոտական աշխատանքներ կատարելու համար, որ որոշվեն այն փոփոխությունները, որոնք անհրաժեշտ է կատարել [14]: Դրա հետ մեկտեղ գիտական ուսումնասիրություններ են կատարվում նաև ԱՄՆ-ի Բանակի գիտահետազոտական ինստիտուտում [6]: Եվ վերջապես, Բանակում նաև մշակվել և կիրառվում է «Բանակի քաղած դասերի յուրացման ծրագիրը», որով պահանջվում և կազմակերպվում են Բանակի բոլոր ստորաբաժանումներից հաշվետվությունների, արձագանքների և այլ տեղեկությունների հավաքումը, ինչի նպատակն է սովորելը, հասկանալը, զարգանալն ու կատարելագործվելը [2]:

Փոփոխություններն ու համապատասխանեցումն անիմաստ են, եթե դրանք արդյունավետ կերպով չեն կատարվում: ԱՄՆ-ի Բանակում բավական շատ ժամանակ ու ռեսուրսներ են հատկացվում տեղեկությունների տարածման համար, ինչն արվում է կատարելագործված ձեռնարկների, ամսագրերի, գրքերի, վեբկայքերի, հավելվածների, ուսուցողական տեսանյութերի մշակմամբ և սովորական փոստի, էլեկտրոնային փոստի ու սոցիալական հարթակների տրամադրած անհատական կապի միջոցների կիրառմամբ: Այդուհանդերձ, թեև այս բոլոր ռեսուրսներն էլ օգտակար են, սակայն դրանցից ոչ մեկն այնքան արդյունավետ չէ, որքան սերժանտական համակարգի ճիշտ զարգացումն ու կիրառումը: Բանակում սերժանտների գործունեության նպատակն է փոփոխություններին հասնել կարգապահության մակարդակի բարձրացման, զինվորների ճիշտ ուսումնավարժեցման և իրենց ղեկավարների օրինական հրամանների ճշգրիտ կատարման միջոցով: Հենց սերժանտներն են փոփոխություններ կատարողները: Այսպես. եթե Բանակում

գտնվի զորքի քողարկման և տարաշարժի ավելի լավ միջոց, ապա պարզապես չեն հայտնի ստորին կոչումներով զինվորներին, այլ առաջինը տեղյակ կպահվեն սերժանտին, որը հետագայում նպատակաուղղված կերպով կվարժեցնի զինվորներին ու կվերահսկի ճշտորեն կատարելագործված գործընթացների իրականացումը: Այս կերպ սերժանտական համակարգը նպաստում է, որ ԱՄՆ-ի Բանակը հաջողությամբ կատարի իր բոլոր խնդիրները:

*Պարտքի կատարման ու կատարելագործման մշակույթ*

«Սերժանտները Բանակի ողնաշարն են: Մենք պրոֆեսիոնալների կորպուս ենք, որն արտացոլում է Ամերիկայի բազմազանությունը և ներկայացնում դարերով սրբացված այն արժեքները, որոնց հիմքի վրա կառուցվել է մեր պետությունը. տքնաջան աշխատանք, պարտքի զգացում, անձնվիրություն, վճռականություն, պատիվ և կարեկցանք» [7, էջ 1]:

ԱՄՆ-ի Բանակի սերժանտական համակարգի հաջողությունը անհնարին կլիներ, եթե հիմնված լիներ զուտ քաղաքական մոտեցումների ու գործընթացների համակարգի վրա: Կատարելագործման ներքին մղումի և Բանակի հաջողությունն ապահովելու պարտքի մշակույթ պետք է ձևավորվի և պահպանվի: Այդ մշակույթը զինվորի մեջ ձևավորվում է նույնիսկ նախքան նրա սերժանտ դառնալը: Այն, ինչ առաջին հերթին մտապահում է զինվորը Բանակում զինվորական ծառայության անցնելիս, Բանակում ընդունված արժեքներն են՝ Հավատարմություն, Պատասխանատվություն, Հարգանք, Անձնուրաց ծառայություն, Պատիվ, Ազնվություն և Անձնական քաջություն [17, էջ 3-5]: Դա համախմբում է զինվորներին՝ նրանց ցույց տալով, որ մենք պետք է պահպանենք ընդհանուր բարոյականությունը և պատասխանատվությունը: Եվ երկրորդը, որ զինվորները մտապահում են, Զինվորի հավատամքն է, որը ներառում է Ռազմիկի վարքականոնը:

**«Զինվորի հավատամքը**

Ես ամերիկացի զինվոր եմ:
Ես ռազմիկ եմ ու թիմի անդամ:
Ես ծառայում եմ Ամերիկայի Միացյալ Նահանգների ժողովրդին և ապրում եմ ըստ Բանակի արժեքների:
**Ես միշտ առաջին տեղում եմ դնում իմ առաքելությունը:**
**Ես երբեք չեմ համակերպվի պարտության հետ:**
**Ես երբեք չեմ թողնի իմ գործը:**
**Ես երբեք չեմ լքի մարտում ընկած իմ ընկերոջը:**
Ես կարգապահ եմ, ֆիզիկապես և հոգեպես ամուր, զինվորական առաջադրանքների և վարժանքների կատարման գործում՝ վարժ և հմուտ:
Ես միշտ հոգ եմ տանում իմ զենքի, իմ հանդերձանքի և իմ մասին:
Ես գիտուն եմ և պրոֆեսիոնալ:
Ես միշտ պատրաստ եմ լինում մեկնելու, մարտի բռնվելու և մերձամարտում ոչնչացնելու Ամերիկայի Միացյալ Նահանգների թշնամիներին:
Ես պահապանն եմ ազատության և ամերիկյան կենսակերպի:
Ես ամերիկացի զինվոր եմ»:

Այս վարքականոնն ու հավատամքը ծառայում են որպես մի հզոր միջոց, որը զինվորներին օգնում է հասկանալու, որ իրենք երկրի մի կարևոր մասն են, որ իրենք պրոֆեսիոնալներ են և որ պարտավոր են կատարելու իրենց առաքելությունը: Այն զինվորները, որոնք լիարժեք կերպով հասկանում են այս վարքականոնն ու հավատամքը, նաև գիտակցում են, որ պետք է իրենց հնարավորությունների սահմաններում ամեն ինչ անեն սերժանտ դառնալու համար, որպեսզի ապրեն այդ վարքականոնի և նոր կենսակերպի համաձայն: Զինվորի հավատամքի ու Ռազմիկի վարքականոնի հետ մեկտեղ զինվորները անգիր են սովորում նաև Բանակի օրհներգը [17, էջ vii], ինչը նպաստում է նրանց նոր մասնագիտական մտածողության ամրապնդմանը՝ նրանց մղելով կատարելագործվելու և լավագույնը դառնալու:

**Բանակի օրհներգը: «Բանակն առաջ է շարժվում»,**
հեղ.՝ *Էդմունդ Գրուբեր* (1908)

Քայլենք միասին, երգենք մեր երգը ազատության Բանակի հետ:
Հաշվենք քաջերին, հաշվենք նվիրյալներին, որ կռվով հասան հաղթանակի:
Մենք Բանա՛կն ենք ու հպարտ ենք մեր անունով:
Մենք Բանակն ենք և հպարտությամբ հայտարարում ենք.

Նախ, նետվել մարտի՝ հանուն արդարության,
Հանուն մեր ազգի հզորության կերտման,
Ու Բանակն առաջ է շարժվում՝
Հպարտ այն ամենով, ինչ արել ենք,
Կռվելով մինչև մարտի հաղթական ավարտը:
Ու Բանակն առաջ է շարժվում:

*Կրկներգ.*
Իսկ հետո հե՜յ, հե՜յ, հե՜յ,
Բանակն արդեն ճամփին է:
Հաշվեք ուժեղ ու բարձր,
Ուր էլ որ գնալու լինենք:
Դուք միշտ կիմանաք,
Որ Բանակն առաջ է շարժվում:

Այս երգը, որն ավելի քան 100 տարեկան է, օգնում է զարգացնելու ավանդույթի ու պարտքի, անձնուրաց ծառայության մշակույթը և հանդես է գալիս որպես շարժառիթ թիմի անդամ դառնալու համար, ինչը կօգնի պայքարելու և «մինչև մարտի հաղթական ավարտը» կերտելու ազգի հզորությունը: Դա նպաստում է նաև այն բանին, որ զինվորը ցանկանա անել ավելին, ավելի լավ ծառայել Բանակին ու պետությանը՝ շարունակելով կատարելագործվել ու դառնալ սերժանտ:

Զինվորը, դառնալով սերժանտ, յուրացնում է նոր հավատամք՝ հզոր ու ազդեցիկ.

## Սերժանտների հավատամքը

«Ոչ ոք ինձնից ավելի պրոֆեսիոնալ չէ: Ես սերժանտ եմ՝ Զինվորների առաջնորդը: Որպես սերժանտ ես հասկանում եմ, որ անդամ եմ դարերով սրբագնացած մի անձնակազմի, որը համարվում է «Բանակի ողնաշարը»: Ես հպարտանում եմ սերժանտական անձնակազմով և մշտապես կվարվեմ այնպես, որ պատիվ բերեմ իմ ծառայակիցներին, սերժանտական անձնակազմին և իմ երկրին՝ անկախ այն իրավիճակից, որում կհայտնվեմ: Ես չեմ օգտագործում իմ աստիճանը կամ դիրքը բարեհաճություն, օգուտ կամ անձնական անվտանգություն ձեռք բերելու համար:

Չեռնիասությունն իմ կարգախոսն է: Իմ մտքում մշտապես առաջնահերթ կլինեն իմ երկու հիմնական պատասխանատվությունները՝ խնդրի կատարման և զինվորի բարօրության համար: Ես կձգտեմ պահպանելու թե՛ տեխնիկական, թե՛ մարտավարական հմտությունները: Ես գիտակցում եմ իմ դերը որպես սերժանտի: Ես կկատարեմ այդ դերին բնորոշ պարտականություններս: Բոլոր զինվորներն իրավունք ունեն արտակարգ առաջնորդ ունենալու. ես կլինեմ այդ առաջնորդը: Ես գիտեմ իմ զինվորներին և միշտ նրանց կարիքները վեր կդասեմ իմից: Ես միշտ կշփվեմ իմ զինվորների հետ, չեմ թողնի նրանց անտեղյակ: Ես կլինեմ արդար ու անաչառ և՛ պարգևատրելիս, և՛ պատժելիս:

Իմ ստորաբաժանման սպաները հնարավորինս շատ ժամանակ կունենան իրենց պարտականությունները կատարելու համար, նրանք ստիպված չեն լինի իմ գործը կատարել: Ես կվաստակեմ ինչպես նրանց, այնպես էլ իմ զինվորների վստահությունն ու հարգանքը: Ես նույնչափ հավատարիմ կմնամ նրանց, ում ծառայում եմ՝ ավագներին, աստիճանով ինձ հավասար իմ ծառայակիցներին, իմ ենթականերին: Հրահանգի բացակայության դեպքում ես նախաձեռնողականություն կդրսևորեմ և կձեռնարկեմ անհրաժեշտ քայլեր: Ես հարցականի տակ չեմ դնի իմ ազնվությունը և ոչ էլ ոգու կորովը: Ես ինքս չեմ մոռանա և իմ ծառայակից ընկերներին էլ թույլ չեմ տա մոռանալ, որ մենք մեր գործի գիտակներն ենք, սերժանտներ, մենք առաջնորդներ ենք»:

Այս հույժ ազդեցիկ հավատամքը [18, էջ vii] դառնում է այն կողմնորոշիչը, որով պետք է առաջնորդվի սերժանտը՝ որոշումներ կայացնելով միաժամանակ թե՛ որպես առաջնորդ, թե՛ որպես վարժեցնող, ընդսմին երկու դեպքում էլ դա կարող է իրենց զինվորների համար ճակատագրական նշանակություն ունենալ: Երբ այդ զինվորները հանդիսավոր կերպով դառնում են սերժանտներ, նրանք նաև ստորագրում են մի շատ կարևոր փաստաթուղթ.

«Նորանշանակ սերժանտի պարտականությունները

Ես ուշադիր ու ջանասիրաբար կկատարեմ այն կարգախմբի պարտականությունները, որին ինձ առաջ են քաշել, և կպահպանեմ Բանակում ընդունված ավանդույթներն ու ստանդարտները:

Ես հասկանում եմ, որ ավելի ցածր կոչումով զինվորները պետք է ենթարկվեն իմ օրինական հրամաններին: Հետևաբար ես ստանձնում

եմ նրանց գործողությունների համար պատասխանատվությունը: Որպես սերժանտ ես ստանձնում եմ Բանակում կարգապահությունը կարգավորող օրենքների, հոդվածների ու կանոնների համաձայն գործող վերադասների հրամաններն ու կարգադրությունները կատարելու և դրանց հետևելու պարտականությունը, ես կշտկեմ այն վիճակները, որոնք խաթարում են Բանակում կարգապահությունը: Այդ կերպ վարվելով՝ ես կկատարեմ իմ մեծագույն պարտքը՝ որպես առաջնորդ, ինչով հաստատում եմ իմ՝ որպես սերժանտի կարգավիճակը»:

Սերժանտական կազմի այս պարտավորությունը [18, էջ viii], որ նոր առաջ քաշված զինվորն ստորագրում է մնացած բոլոր զինվորների ներկայությամբ, ծառայում է որպես ֆիզիկական գործողություն, որը զինծառայողն ընտրում է հոժարակամորեն: Այս նորընծա սերժանտը, գիտակցելով իրենից պահանջվող աննահանջ անձնուրացությունը և լրացուցիչ պատասխանատվությունը, որը հարկ կլինի ստանձնել, կամովին ստորագրում է «Սերժանտի պարտավորությունները», որպեսզի օգնի, որ Բանակն ու պետությունն անեն ամեն անհրաժեշտը հաջողության հասնելու համար: Որպես կանոն, կա սերժանտի կոչում շնորհելու հատուկ արարողություն [18, էջ 6-11]: Այդ արարողության վերջում նորընծա սերժանտը քայլելով անցնում է Սերժանտների կամարի տակով:




Սերժանտի կոչում շնորհելու արարողությունը* [16]
Noncommissioned Officer Induction Ceremony [16]

Այս գործողությունը շատ խորհրդանշական քայլ է, որը սերժանտը կիհշի իր ամբողջ կյանքի ընթացքում: Ֆիզիկապես անցնելով այդ կամարի տակով՝ նրանք, ասես, հետևում են թողնում ավելի ցածր կոչումներն ու մուտք գործում Սերժանտական կազմի շարքեր՝ փոխակերպվելով ու դառնալով ավելի հզոր ռազմիկ: Նրանք ոտք են դնում շատ ավելի հեղինակավոր մի եղբայրություն ու ստանձնում ավելի մեծ պատասխանատվություն:

### Ինչու՞ դառնալ սերժանտ և ոչ թե սպա

Ի պատասխան այն հարցին, թե ինչու պետք է զինվորը սպա դառնալու փոխարեն այդքան ջանք գործադրի, այդքան պարապի ու սովորի և որպես սերժանտ ստանձնի նման պատասխանատվություն, եթե կարող է ձեռք բե-

* Հոդվածում զետեղված լուսանկարները բերված են հեղինակների արխիվից:

րել ավելի մեծ հեղինակություն և ստանալ ավելի բարձր դրամական բավարարում, հարկ է նշել անձնուրաց ծառայությունը: Թեպետ որոշ սերժանտներ կայացնում են սպա դառնալու որոշում, այդուհանդերձ, մեծ մասը մնում է սերժանտի կոչումով: Ճիշտ այնպես, ինչպես մեզ պետք են լավ սպաներ, այնպես էլ պետք են նաև լավ ավագ սերժանտներ, որոնք կաշխատեն սպաների հետ ու ճիշտ կուղղորդեն զինվորականներին: Սերժանտն ավելի սերտորեն է աշխատում զինվորների հետ, քան սպան: Դա ունի բազմաթիվ նկատառումներ, որոնք կապված են այն կարևոր պատասխանատվության ու դժվարին ընտրությունների հետ, որոնք հարկավոր է կայացնել մարտի դաշտում: Այդուհանդերձ, ինչպես ամրագրված է Սերժանտի հավատամքում, նա հավերժ նվիրված է լինելու «Իմ մտքում մշտապես առաջնահերթ կլինեն իմ երկու հիմնական պատասխանատվությունները՝ խնդրի կատարման և զինվորի բարօրության համար» կարգախոսին: Այս առանձնահատուկ պատասխանատվությունը՝ միաժամանակ որպես առաջնորդի և վարժեցնողի (իր զինվորներին ճիշտ պատրաստելու համար), սերժանտական կազմի եղբայրության մի յուրօրինակ հատկանիշ է, առանձնահատուկ ու յուրօրինակ հատկանիշ, որից շատ սերժանտներ երբեք չեն հրաժարվի, անգամ ավելի հեղինակավոր սպայական կոչում ստանալու համար:

## ԱՄՓՈՓՈՒՄ

«Սերժանտների ուղեցույցի» նախաբանի մեկ այլ բաժնում էլ խոսվում է այն անմիջական ուղերձի մասին, որը մեզ կօգնի պարզել, թե ինչով է պայմանավորված ԱՄՆ-ի Բանակի Սերժանտական կազմի հաջողությունը: Ուղերձում ասվում է. «Մեր մարդկանց ուսումնավարժեցման գործում և մարտի դաշտում հաջողությամբ առաջնորդելու համար մենք պետք է ճանաչենք նրանց, ջանքեր ներդնենք նրանց կատարելագործման մեջ և կառավարենք նրանց կարողություններն այնպես, որ ստանանք ուժեղ ու համախմբված թիմեր, որոնք անհրաժեշտ են մեր Բանակի հաղթանակների համար» [18, պար. 2]: ԱՄՆ-ի Բանակն առանձնանում է նրանով, որ այնտեղ սերժանտներին դիտում են ոչ թե որպես պարզապես զինվորների կամ թվաքանակ, այլ նրանց վերաբերվում են որպես ռեալ «մարդկանց», և նրանց ուսումնավարժեցումն ու կատարելագործումը համարում «ներդրում»: Մեր սերժանտներին պատշաճ կերպով որպես ռեալ մարդիկ դիտելու և նրանց մասնագիտական կրթական զարգացման համակարգում ներդրում կատարելու, ճիշտ բաշխված պարտականություններով կազմակերպված աստիճանակարգային կառուցվածք ստեղծելու, շարունակական զարգացումն ու կատարելագործումը ողջունելու, ինչպես նաև պարտքի ու զարգացման մշակույթ ձևավորելու միջոցով ԱՄՆ-ի Բանակի սերժանտական համակարգը կշարունակի հաջողություններ ունենալ և մյուսների համար օրինակ ծառայել:

---

* Անգլերենից թարգմանությունը՝ *Անի Մարտիրոսյանի:*

Սույն հոդվածում գործածված որոշ տերմինների բացատրություն.

- անձնակազմ *(crew)*՝ որևէ մարտական մեքենային (հարթակին) կցված և այն շահագործող հաստիքային կազմը,
- զինախումբ *(team)*՝ 3-5 հոգուց բաղկացած մշտական մարտական միավոր,
- ջոկ *(squad)*՝ 2 զինախմբից կազմված մարտական միավոր՝ 6-12 հոգի անձնակազմով,
- կիսադասակ *(section)*՝ 2 ջոկից կազմված ստորաբաժանում,
- դասակ *(platoon)* ԱՄՆ-ի ԶՈւ-ում սովորաբար 3 կիսադասակից (20-50 հոգի) բաղկացած ստորաբաժանում:

Կազմեց ***Անի Մարտիրոսյանը***

## СЕРЖАНТСКАЯ СИСТЕМА АРМИИ США. ПОЛНОЕ ПРЕДСТАВЛЕНИЕ УСПЕХА

*МАЙКЛ ХЕЙС, майор Армии США, офицер по двустороннему сотрудничеству Посольства США в Армении, БРЭНТ А. АНДЕРС, главный сержант (в отставке), кандидат педагогических наук, доцент, Директор офиса институциональных исследований и оценки Американского университета Армении*

РЕЗЮМЕ

В армии США (Сухопутных войсках) особую роль играет сержантский состав, считающийся «хребтом армии». За последнее десятилетие эта система претерпела революционные изменения и продолжает свое развитие, нацеленное на преодоление новых вызовов и трудностей, непрерывно возникающих в военном деле. Важность роли сержанта обусловлена главным образом тем обстоятельством, что именно он стоит ближе всего к рядовому составу, больше всего времени общается с солдатами, поэтому для развития этого очень важного компонента Армии был разработан ряд образовательных программ, учебно-методических пособий и инструкций. Успех Сержантской системы Армии США обусловлен решающими факторами системы развития ее образования, уровнями рангов и обязанностей, непрерывным развитием этой системы, а также культурой выполнения долга и самосовершенствования.

Сержантские звания в Армии США формировались десятилетиями, приобретая сегодняшнюю структуру. Каждый сержант стремится поддержать офицера, подразделение и Армию в целом. Вот почему сержантскую систему называют «хребтом армии». Каждое сержантское звание присваивается не просто за выслугу лет, а присуждается за заслуги. Существует четко определенная связь между сержантскими званиями и соответствующими должностными обязанностями. В общем сержанты, помимо поддержки своего командира-офицера и

предоставления ему советов, опираясь на приобретенный за долгие годы службы большой опыт, несут ответственность за обучение своих подчиненных, установление и поддержание дружеских отношений и атмосферы сотрудничества между ними.

«Սահմանադրական հայրենասիրության» հայեցակարգը, ընդհուպ մոտենալով աշխարհաքաղաքացիության տեսությանը, չի նույնանում դրա հետ: Եթե աշխարհաքաղաքացիությունը, ելնելով աշխարհի, մարդկության միասնությունից և անհատի՝ համաշխարհային քաղաքացիության սկզբունքից, մարդկության շահերը վեր է դասում առանձին ազգի, պետության կամ ցանկացած այլ հանրույթի շահերից, ապա «սահմանադրական հայրենասիրության» հայեցակարգը կարևորում է նվիրվածությունը սահմանադրական (ժողովրդավարական) սկզբունքներին, որոնք, ունենալով համամարդկային, վերազգային բնույթ, միևնույն ժամանակ չեն հակասում ազգային արժեքներին:

Ամփոփելով հայրենասիրության վերաբերյալ փիլիսոփայական վերլուծությունը՝ փորձենք ձևակերպել հայրենասիրության այն տեսլականը, որը կարող է տեղին և պահանջված լինել Հայաստանի Հանրապետության ներկայիս իրավիճակում: Բանն այն է, որ Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմը՝ իր ծանր ռազմաքաղաքական հետևանքներով հանդերձ, հայ հասարակական գիտակցության մեջ առաջացրել է նաև որոշակի արժեքային փոփոխություններ և բարոյահոգեբանական խնդիրներ, հետևաբար՝ ազգային ինքնության նոր իմաստավորումների անհրաժեշտություն:

Նախ, փաստենք, որ պատերազմից հետո հայ հասարակությանը համակել են որոշ հոռետեսական տրամադրություններ, իր ուժերի նկատմամբ անվստահություն, թերարժեքության բարդույթ և այլն: Սրանք շատ լուրջ սոցիալ-

---

[15] Նույն տեղում, էջ 130:

[16] Տես *И. Н. Барциц.* Конституционный патриотизм: четыре европейские реинкарнации и российская версия. М., 2018, сс. 28–29:

հոգեբանական խնդիրներ են, և եթե հասարակության բարոյահոգեբանական ոգին բարձրացնելու ուղղությամբ վճռորոշ գործնական քայլեր չձեռնարկվեն, ապա արտագաղթի, արտաքին և ներքին սպառնալիքներին դիմագրավելու պատրաստակամության (տոկունության) թուլացման, զիջողական տրամադրությունների տեսքով բացասական հետևանքներն իրենց ուշացնել չեն տա:

Գործնական քայլեր ասելով հասկացվում է զանգվածային տեղեկատվության միջոցներով (և ոչ միայն) վերջին պատերազմում մեր կորուստները ներկայացնելուց և բազմակողմանի քննարկումներ ծավալելուց զատ բավարար չափով ուշադրություն հատկացնել Արցախի համար մղված վերջին պատերազմում անձնային և խմբային մակարդակով ցուցաբերված հերոսականության դրվագների և անցքերի, ընդհանրապես՝ հայ ժողովրդի բազմադարյան հերոսական անցյալի ու հարուստ մշակութային ժառանգության ներկայացմանն ու վերաիմաստավորմանը: Ներկայիս իրավիճակում խիստ կարևորվում է հասարակության մեջ հեղինակություն վայելող մտավորականների սթափեցնող, իր ուժերի նկատմամբ հավատ ներշնչող, ոգևորող խոսքը:

Տեսական առումով կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ մեզանում առավել տարածված է հայրենասիրությունը հայրենի երկրի, նախնիների ավանդույթների, ազգային մշակութային արժեքների՝ լեզվի, գրավոր ժառանգության, եկեղեցու, արվեստի և քաղաքակրթական ձեռքբերումների պահպանման ու պաշտպանության բարոյական պարտավորվածության ձևով՝ հիմնված «հայրենիքի» հուզական, զգացմունքային ընկալման վրա: Յուրաքանչյուր հայ մարդ իրեն իրավամբ գիտակցում է որպես հին, պատմական մշակույթ և քաղաքակրթական արժեքներ կրող ազգի ներկայացուցիչ և մի յուրատեսակ բարոյական պարտք է զգում նախնիներից ստացած հարուստ մշակութային ժառանգությունը պահպանելու ու գալիք սերունդներին փոխանցելու առումով: Այսինքն. **զգացականորեն ընկալված հայրենասիրությունը՝ որպես ներքին բարոյական պարտքի գիտակցում**, մշտապես հատուկ է եղել հայության հանրային տրամադրություններին, որը ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս հիմնված է **ազգային պատմամշակութային արժեքների** վրա: Հայրենասիրական գաղափարների արմատավորման և դաստիարակության գործում այս կարևորագույն գործոնները մեր ժամանակներում ևս պետական և հանրային պատշաճ ուշադրության և հոգածության կարիք ունեն:

Եթե նախքան պետական անկախության և ինքնիշխանության ձեռքբերումը հայրենասիրությունն արտահայտում էր հայ մարդու նվիրվածությունը ազգին և ազգային արժեքներին (լեզու, կրոն, մշակույթ), ապա Հայաստանի Հանրապետության ինքնիշխան պետական ներկայիս կարգավիճակը պահանջում է հայրենասիրության այս ավանդական ընկալման թարմացում, նոր, կարևոր շեշտադրումների հավելում: Խոսքը ազգային արժեհամակարգը **պետականության, քաղաքացիականության** սոցիալ-իրավական արժեքներով համալրելու մասին է: ՀՀ ներկայիս քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական,

սոցիալական, իրավական պետություն է», որտեղ «յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը»[17]:

ՀՀ իշխանությունները, ժողովրդավարությունը հայտարարելով պետության բարձրագույն արժեք և նպատակ, պարտավոր են խթանել որոշումների ընդունման գործընթացում (համայնքային և համապետական մակարդակներում) քաղաքացիների ոչ միայն ներգրավվածությունն ու մասնակցությունը, այլև նրանց ազդեցությունն այդ որոշումների[*] վրա: Այդկերպ Հայաստանի և Արցախի համար այս բախտորոշ ժամանակաշրջանում ՀՀ քաղաքացիները, որոշակի մասնակցություն ունենալով պետության ռազմավարական որոշումների կայացման գործում, կարողանալով ազդել իշխանությունների գործողությունների վրա, նաև լոյալություն կդրսևորեն պետական քաղաքականության նկատմամբ և պատասխանատու կլինեն ոչ միայն դրա իրականացման, այլև հետևանքների համար: Հենց նման մոտեցման պարագայում կարելի է հույս ունենալ, որ ՀՀ անվտանգային սպառնալիքի դեպքում ՀՀ քաղաքացիները, հանդես գալով որպես պետության վարած քաղաքականության համախոհ-մասնակիցներ, իրենց քաղաքացիական պարտքը կհամարեն գործուն մասնակցությունը հայրենիքի՝ պետության ու պետականության զինված պաշտպանությանը:

[17] Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն»: Ընդունվել է 06.12. 2015, հոդ. 1 և հոդ. 14, կետ 3 (https://www.president.am/hy/constitution-2015/):

* Այսպես. 2021 թ. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի՝ Հայաստանում անցկացված «Կովկասյան բարոմետր» սոցիոլոգիական հարցումներով պարզվել է, որ հարցման մասնակիցների 80 %-ը համարում է, թե իրենք «իրավունք ունեն ազատ ասելու այն, ինչ մտածում են», սակայն, միևնույն ժամանակ, հարցվածների շուրջ 66 %-ը կարծում է, որ «չունի ձայն կառավարության գործողությունների վրա ազդելու համար» (տես «Կովկասյան բարոմետր 2021–2022»: Ե., հունիս 2022, սլայդ 26, 27 (https://www.crrc.am/wp-content/uploads/2022/06/Բարոմետր-2021_pptx_Final_13.06.22-2.pdf)):

## ПАТРИОТИЗМ КАК ФАКТОР ОБЕСПЕЧЕНИЯ ВОЕННОЙ МОЩИ ГОСУДАРСТВА (СОЦИАЛЬНО-ФИЛОСОФСКИЙ АНАЛИЗ)

*А. А. МИНАСЯН, подполковник запаса, кандидат философских наук, доцент, начальник Центра исследований военно-гуманитарных наук НИУО МО РА*

РЕЗЮМЕ

В современном мире человеческий фактор продолжает оставаться одним из основополагающих компонентов обеспечения военной мощи и обороноспособности государства. В нашу высокотехнологичную эпоху сохраняют свое значение как безоговорочное стремление военных защитить Родину и своих соотечественников, победить в войне, так и готовность и решимость всего народа противостоять угрозам безопасности государства.

С целью разработки эффективной в современных для нашего государства и нации условиях политики формирования патриотизма, воспитания граждан РА, в частности военных, в патриотическом духе в статье исследуется сущность феномена патриотизма, освещаются современные подходы и философские концепции этого понятия.

В философской литературе в силу многослойности феномена патриотизма выделяют ряд аспектов его восприятия и осмысления, которые тесно взаимосвязаны друг с другом и каждый из которых в большей или меньшей степени характеризуется *моральным измерением*, поскольку патриотизм так или иначе предполагает осознание морального долга и ответственности.

В статье представлены *эмоционально-нравственные*, *культурно-ценностные*, *социально-нравственные*, *государственные (этатические)* аспекты восприятия патриотизма, в рамках которых рассматриваются *«националистическая»*, *«гражданская»*, *«конституционная»* и другие концепции патриотизма.

По мнению автора, отправной точкой формирования современного видения патриотизма в нашей стране должен стать эмоционально-нравственный аспект восприятия патриотизма, который зиждется на осознании нравственного долга перед Отечеством и соотечественниками, преданности национальным ценностям (язык, религия, культура, традиции). Однако нынешний статус суверенной государственности Республики Армения требует актуализации и модернизации этого традиционного видения патриотизма социально-правовыми идеями *государственности* и *гражданственности. При этом подчеркивается важность разработки и осуществления целевой эффективной политики по формированию у населения, в первую очередь молодежи, чувства патриотизма, что требует непрерывной кропотливой работы с несколькими поколениями.*

## PATRIOTISM AS A FACTOR FOR PROVIDING THE MILITARY POWER OF THE STATE (SOCIO-PHILOSOPHICAL ANALYSIS)

*A. A. MINASYAN, Lieutenant Colonel (Ret.), PhD in Philosophy, Associate Professor, Head, Center for Research in Military-Humanitarian Sciences, INSS, MOD, RA*

SUMMARY

In the modern world the human factor remains one of the fundamental components of ensuring the national military power and defense capability. In our high-tech era, both the military's unconditional striving to protect their Motherland and compatriots, to win the war, and the readiness and determination of the entire nation to resist the threats to the security of the state retain their significance.

The article herein studies the essence of the phenomenon of patriotism, highlights modern approaches and philosophical concepts of this notion in order to develop an effective policy for the formation of patriotism in contemporary for our state and nation conditions, education of the citizens of the Republic of Armenia, in particular the military, in the spirit of patriotism.

Due to the multilayered nature of the phenomenon of patriotism, a number of aspects of its perception and comprehension are distinguished in philosophical literature, these aspects being closely intertwined, and each is more or less characterized by a *moral dimension*, since patriotism in one way or another implies an awareness of moral duty and responsibility.

The article presents the *emotional and moral, cultural and value, socio-moral, state (statist)* aspects of the perception of patriotism, within which the “nationalistic”, “civic”, “constitutional” and other concepts of patriotism are considered.

The author believes that the starting point for shaping the modern vision of patriotism in our country should be the emotional and moral aspect of the perception of patriotism, anchored on the understanding of the moral duty to the Motherland and compatriots, commitment to national values (language, religion, culture and tradition). However, the present status of the sovereign statehood of the Republic of Armenia requires to actualize and modernize this traditional vision of patriotism via socio-legal ideas of *statehood* and *citizenship*. *With that, the article underlines the significance of developing and implementing the effective target-oriented policy of shaping up the sense of patriotism among the population, and first of all – the youth, which requires continuous painstaking work with a number of generations.*

# ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԵՎ ԶԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՎՐԱ*

*Մ. Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Ռազմական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի գիտնական վերլուծաբան, ԲՊՀ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս*



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային և տարածաշրջանային տերությունների միջև ուղիղ առճակատման հավանականության նվազման պայմաններում պետությունները փնտրում են հակառակորդին հաղթելու կամ ճնշելու այլընտրանքային եղանակներ: Ռազմական արվեստի շարունակական զարգացումը, աշխարհաքաղաքական ճարտարապետության փոփոխությունները, պատերազմի փիլիսոփայության կերպափոխումները պատճառ դարձան պատերազմի ավանդական ընկալման փոփոխության համար՝ նպաստելով հիբրիդային պատերազմների հայեցակարգի ստեղծմանը: Դրանում որպես հիմնական բնութագրիչ գծեր առանձնացվում են տեղեկատվական տեխնոլոգիաների, գերճշգրիտ սպառազինության կիրառումը, ոչ պետական զինված դերակատարների ներգրավվածության և ազդեցության աճումը, հոգեբանական ներազդեցությունը և այլն: Հիբրիդային պատերազմի հայեցակարգն արտացոլում է համընդհանրացման, ռազմական տեխնոլոգիաների տարածման և տեղեկատվական հեղափոխության հետևանքները: Նման պատերազմները մի բարդ ու փոխկապված գործիքների համակցություն են, որոնք ունեն ոչ միայն ռազմական, այլև տնտեսական, հասարակական, տեղեկատվական, քաղաքական և այլ բաղադրիչներ: Այս ոլորտներից բխող հիբրիդային սպառնալիքները *(hybrid threats)* բավական բարդ է նույնականացնել, հետևաբար նաև նույնքան բարդ է դրանց դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմների մշակումը:

## ՀԻԲՐԻԴԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԵՎ ԶԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉ ԳԻԾ

«Հիբրիդային պատերազմ» տերմինն առաջինը գործածել է Ուիլյամ Նեմեթը 2002 թ.: Նա այս տերմինը ներառել է «Ապագա պատերազմը և Չեչնիան. հիբրիդային պատերազմ» վերտառությամբ իր մագիստրոսական թե-

* Հոդվածը նախնական տեսքով ներկայացվել է 15.08.2022: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 24.11.2022: Սույն հետազոտությունը կատարվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ **21T-5B128** ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

զում[1]: Այդ աշխատությունում հիբրիդային պատերազմը բնորոշվում է որպես համաժամանակեցված ռազմական և ոչ ռազմական ջանքերի ու միջոցների ստեղծագործ համակցություն: Ոչ ռազմական ջանքերը կարող են ներառել հոգեբանական և սոցիալական պայքարի տարրեր՝ քարոզչություն, կեղծ լուրերի (ապատեղեկատվության) տարածում, արտաքին միջամտությունն ընտրական գործընթացներին և այլն: Այլ կերպ ասած՝ հիբրիդային պատերազմի նպատակը այլ պետության հասարակության նկատմամբ լիակատար վերահսկողության սահմանումն է, անհատի, հետևաբար նաև հասարակության մտածողության փոփոխությունը՝ նպատակաուղղված ձեռնածությունների միջոցով հակառակորդի գործադիր իշխանությանն իր կամքի պարտադրումը:

Հետագայում ԱՄՆ-ի ծովային հետևակի գեներալ Ջ. Մատիսը, ուսումնասիրելով ԱՄՆ-ի ԶՈՒ-ի արդիականացման խնդիրին, նշել է, որ անհրաժեշտ է ԱՄՆ-ի ԶՈՒ-ն կերպափոխել «հիբրիդային» ուժերի, որոնք պետք է ընդլայնեն իրենց ոչ սովորական *(nonconventional)* միջոցները՝ առանց զոհաբերելու դասական մարտական ունակությունները[2]: Արդեն 2009 թ. Ֆ. Հոֆմանը մշակել է հիբրիդային պատերազմների հայեցակարգը: Ըստ Հոֆմանի՝ հիբրիդային պատերազմներում համատեղվում են ավանդական պատերազմների ու զինված հակամարտությունների մահաբերությունը և անհամաչափ պատերազմի մոլի ու երկարատև բնույթը: Նման հակամարտություններում հակառակորդները (պետություններ, պետության հովանավորած խմբեր կամ ինքնաֆինանսավորվող կազմակերպություններ) կօգտվեն ժամանակակից ռազմական հնարավորություններից՝ դրանով իսկ ապահովելով զինված պայքարի երկարատևությունը[3]:

Հիբրիդային պատերազմներում ուղղակի կամ անուղղակի ազդեցության են ենթարկվում հասարակության ազգային ինքնությունը՝ մի շարք գործոնների ամբողջ համալիրով հանդերձ (լեզու, կրոն, մշակույթ, մտածելակերպ, արժեհամակարգ, պատմություն, հերոսներ և այլն), ինչպես նաև պետության զարգացումը խթանող հիմնական գործոնները, արժեքները, մշակութային հիմքերն ու ռազմավարական ենթակառուցվածքները[4]: Ներգործությունը կատարվում է ինչպես կոշտ, այնպես էլ փափուկ ուժի գործիքակազմի կիրառմամբ՝ համապատասխան տվյալ ազգի ու պետության պատմական, մշակութային առանձնահատկություններին՝ էթնոհոգեբանության հաշվառմամբ: Սա-

---

[1] Տես *W. Nemeth*. Future War and Chechnya: A case for Hybrid Warfare. 2002 (https://calhoun.nps.edu/bitstream/handle/10945/5865/02Jun_Nemeth.pdf?sequence=1&isAllowed=y), (14.04.2022):

[2] Տես *John J. Kruzel.* General Mattis: U.S. Must Prepare for 'Hybrid' Warfare. “Small Wars Journal” 13.02.2009 (https://smallwarsjournal.com/blog/general-mattis-us-must-prepare-for-hybrid-warfare), (16.04.2022):

[3] Տես *F. G. Hoffman.* Hybrid Warfare and Chellenges. “Joint Force Quarterly”, 1st quarter 2009, Issue 52 (https://smallwarsjournal.com/documents/jfqhoffman.pdf), (16.04.2022):

[4] Տես “MCDC Countering Hybrid Warfare Project: Understanding Hybrid Warfare". MCDC, January 2017, PP. 11–13:

կայն հիբրիդային պատերազմի սուբյեկտ կարող է լինել ոչ միայն որևէ էթնիկ խումբ, ազգ կամ պետություն, այլև տարածաշրջանը կամ միջազգային հանրությունն ընդհանրապես: Քանի որ այն հանգամանքը, թե հիբրիդային պատերազմի գործիքակազմը կարող է կիրառվել ռազմական գործողությունների տարբեր թատերաբեմերում ընթացող ռազմական գործողություններին զուգընթաց դրա դեմ պայքարը կամ առհասարակ կիրառվող մեխանիզմների նույնականացումը առավել քան բարդ են դառնում:

Հիբրիդային պատերազմի դինամիկությունը պայմանավորված է նրա ազդեցության ոլորտների (ռազմական, քաղաքական, դիվանագիտական, տնտեսական, իրավական, մշակութային, կիբեռ- և տեղեկատվական, և այլ) բազմազանությամբ, և անհրաժեշտ ճկունություն չցուցաբերելու դեպքում դրա ելքը կլինի կանխորոշված: Միայն պատերազմի վարման համար ավանդական և ոչ ավանդական ոլորտների համակցումն ու մշտական հաշվառումը կկանխորոշեն ժամանակակից պատերազմների և զինված հակամարտությունների ելքը՝ ապահովելով առաջավարություն արագ վերաձևավորվող աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական համատեքստում:

Հիբրիդային պատերազմն ավանդական և ոչ ավանդական բաղադրիչների ռացիոնալ համակցություն է, և մեծ անորոշության պայմաններում բավական բարդ է բացահայտել հակառակորդի ռազմավարական նպատակները: Թեև հիբրիդային պատերազմի պարագայում առաջնային կարևորություն տրվում է ոչ ռազմական մեխանիզմներին, սակայն ռազմական բաղադրիչի համաժամանակյա կիրառումը ապահովում է գործողությունների արդյունավետությունն ու ռազմավարական նպատակների իրագործումը: Նման ռազմական մեխանիզմների շարքն են դասվում.

- օպերատիվ վերահսկողության կարևորումը, ինչի հիմքն իրական ժամանակում ՌԳԹ կառավարումն է և հետախուզության, որոշումների կայացման և դրանց իրագործման, բնագավառներում հակառակորդի նկատմամբ տեղեկատվական գերազանցության ձեռքբերումը,
- ռազմական գործողությունները՝ կիբեռ- և օդատիեզերական տարածություններ տեղափոխելու կարևորությունը,
- ռազմական գործողությունների ռոբոտացումը, գործողությունների հեռավար կատարումը,
- ոչ մահաբեր զենքի լայնածավալ կիրառումը,
- հատուկ նախանշանակման ուժերի զանգվածային կիրառումը,
- ոչ պետական զինված դերակատարների ներգրավումը (ահաբեկչական խմբեր, մասնավոր ռազմական կազմակերպություններ և այլն),
- անհամաչափ մարտավարությունների կիրառումը, անհամաչափ գործողությունների գերակայությունը,
- ռադիոէլեկտրոնային, հոգեբանական և տեղեկատվական պատերազմների վարումը՝ լայնածավալ կիբեռհարձակումների միջոցով[5]:

[5] Տես *Y. Danyk, T. Maliarchuk, Ch. Briggs.* Hybrid war: High tech, Information and Cyber conflicts. “Connesctions” QJ, 2017, Vol. 16, N 2:

Հիբրիդային պատերազմներում ներգրավվում են ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական զինված դերակատարներ, ինչը բնորոշ է չորրորդ սերնդի պատերազմներին[6]: Տարբեր պետություններում ռազմական գործողություններում վարձկանների, ահաբեկիչների կամ առհասարակ ոչ պետական զինված կազմավորումների ներգրավումը պայմանավորված է մի շարք առանցքային գործոններով: Նախ. հնարավոր է լինում ապահովել մարդկային ռեսուրսներով անընդհատ համալրումը, անտեսել կորուստները (հասարակությունը զոհերի թվի պատճառով դժգոհություն չի արտահայտում), միջամտել տարբեր տարածաշրջաններում տեղի ունեցող իրադարձություններին (միջնորդավորված *(proxy)* պատերազմներ) առանց պաշտոնապես պատերազմի մեջ մտնելու և այլն: Ջ. Շրոյֆլը և Ս. Կաուֆմանը, արծարծելով հիբրիդային պատերազմներին ոչ պետական դերակատարների մասնակցության խնդիրը, կատարում են երկու շատ կարևոր պնդում: Մի կողմից՝ նրանք հաստատում են պատերազմների հիբրիդայնության կապը մի շարք ոչ պետական դերակատարների հետ, այդ թվում՝ ապստամբների կամ ահաբեկչական խմբավորումների, կազմակերպված հանցավոր խմբերի, սոցիալական խմբերի, ինչպիսիք են կլանները, ցեղերը կամ էթնիկ խմբերը, և մյուս կողմից՝ նշում են, որ դրանք հիմնականում գաղափարական կամ կրոնական շարժառիթներով առաջնորդվող և ուղղորդվող կազմակերպություններ են[7]:

Ի տարբերություն պատերազմների վարման ավանդական եղանակներից՝ հիբրիդային պատերազմների ծանրության կենտրոնը չի գտնվում ռազմական ոլորտում: Հիբրիդային պատերազմներում ծանրության կենտրոն կարելի է համարել զանգվածների ընկալումները, որոնց վրա կարելի է ազդել ցանցային փոխգործության և անընդհատ վերահսկողության միջոցով: Հետևաբար առանցքային դեր է վերապահվում տեղեկատվական պատերազմին, որի գործիքակազմը շարունակաբար զարգանում է նորագույն տեխնոլոգիաների զարգացման ու կիրառման շնորհիվ: Տեղեկատվական և հիբրիդային պատերազմները տնտեսական-ֆինանսական առումով ավելի շահեկան են, ուստի և դրանք կարող են բավական արդյունավետ ու նպատակային կերպով վարել անգամ տնտեսապես թույլ պետությունները:

Հիբրիդային պատերազմի երեք հիմնական առանձնահատկություններն են. առաջին՝ կարևորվում են ոչ ռազմական ծանրության կենտրոնները, այդ թվում՝ քաղաքական կամքը, տնտեսությունը, ազգային ինքնությունը, մշակույթը և այլն: Հետևաբար միշտ չէ, որ հիբրիդային պատերազմում հաղթելը ենթադրում է նաև հաղթանակ ռազմական ոլորտում: Երկրորդ՝ հիբրիդային պատերազմը վարվում է այնպիսի տարբեր տիրույթների փոխշփման *(interface)* ստվերում, ինչպիսիք են, օրինակ, պատերազմը և խաղաղութ-

[6] Տես *Մ. Պետրոսյան,* Պատերազմի սերունդներ. պատերազմի զարգացումը արդի փուլում: «ՀԲ», 2021, հմ. 1:

[7] Տես *Josef Schroefl and Stuart J. Kaufman.* Hybrid actors, tactical variety: rethinking asymmetric and hybrid war. “Studies in Conflict & Terrorism”, 2014, Vol. 37, Issue 10:

յունը, ներքին և արտաքին անվտանգությունը, քաղաքացիական և ռազմական ոլորտները, պետական և ոչ պետական դերակատարները և այլն: Այս ամենը, վստահաբար, աղավաղում է կարգուկանոնի և պարտականությունների միջև ավանդական սահմանները՝ հակառակորդի որոշումների կայացման գործընթացը կաթվածահար անելու նպատակով ստեղծելով երկիմաստության մթնոլորտ: Եվ երրորդ. հիբրիդային խմբավորումների, քաղաքացիական և ռազմական, կանոնավոր ու ոչ կանոնավոր, բացահայտ և քողարկված միջոցների, մարտավարությունների ու ռազմավարությունների կիրառումն ստեղծում է պայքարի «միշտ նոր», խառը, հիբրիդային ձևեր: Այլ կերպ ասած՝ կոշտ ուժի նպատակային օգտագործումը համատեղվում է փափուկ ուժի տարրերի լայն շրջանի հետ՝ խելացի ուժի ստեղծագործական կիրառման միջոցով[8]:

Չնայած այն հանգամանքին, որ հիբրիդային պատերազմի մասնակիցներն առավել հաճախ հակված են լինում ընտրելու սահմանափակ պատերազմին բնորոշ անուղղակի ռազմավարություններ և զինված ուժերի կիրառումը դիտում են որպես ոչ առաջնային միջոցառում, սակայն տեսականորեն դա չի բացառում նրա ծավալման բոլոր հնարավոր մակարդակները (զինված միջադեպ, սահմանային բախում, զինված հակամարտություն և այլն): Պատերազմի խութի և մշուշի առկայության պայմաններում հիբրիդային պատերազմն ուղղված է ծանրության ոչ ռազմական կենտրոնների դեմ, իսկ ռազմական գործողությունների վարումը քաղաքական նպատակներին հասնելու պարտադիր նախապայման չէ: Այնուամենայնիվ, ռազմական հզորությունը լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում հիբրիդային գործիքակազմի կիրառման համար նույնիսկ առանց ռազմական ուժի ակտիվ կիրառման, հիմք է տալիս ցանկացած տեսակի հիբրիդային գործունեության համար (դիվերսիոն, պարտիզանական, ահաբեկչական և այլ գործողություններ):

Հիբրիդային սպառնալիքներին, հիբրիդային պատերազմների բազմաոլորտ գործիքակազմին արդյունավետ հակազդեցություն ցույց տալու համար օրվա հրամայականն են նպատակաուղղված պետական քաղաքականության մշակումն ու վարումը: Պետության ազգային շահերի իրացման և ազգային անվտանգության ապահովման հիմնական երաշխիքներն են տեղեկատվական և կիբեռ- անվտանգությունների ոլորտում գործուն և ոչ ժամանակավրեպ քաղաքականության մշակումը և դրա իրականացման հաստատուն հիմքերի ստեղծումը, ինչն այսօր դարձել է կենսական անհրաժեշտություն, քանի որ նորագույն տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ապահովելու ինչպես ռազմական, այնպես էլ ոչ ռազմական սպառնալիքներին արդյունավետ հակազդեցությունը՝ նվազագույնի հասցնելով հասարակության ու զինված ուժերի վրա վտանգների և սպառնալիքների ազդեցությունն ու բացասական հետևանքները:

[8] Տես *J. Schmid.* The Hybrid Face of Warfare in the 21st Century, 07.03.2019 (https://www.maanpuolustus-lehti.fi/the-hybrid-face-of-warfare-in-the-21st-century/), (12.04.2022):

## ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ

Հիբրիդային պատերազմների, դրանց վարման առանձնահատկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ պետությունների ազգային անվտանգության ապահովումն այլևս հնարավոր չէ, եթե սպառնալիքները, որոնք կարող են կապված լինել նորագույն տեխնոլոգիաների զարգացման հետ, հաշվի առնված չեն: Պետությունների ազգային անվտանգության ապահովման, բնականոն ու հետևողական զարգացման հիմքը պահանջում է տեխնոլոգիական առաջընթացի դիտարկում և նորամուծությունների համալիր կիրառում: Եթե ավանդական պատերազմի շարժիչ ուժը արդյունաբերական դարաշրջանի տեխնոլոգիաներն են (մեխանիկական-մեքենայացված համակարգերն են պայմանավորում ռազմական հզորությունը)[9], ապա հիբրիդային պատերազմներում մեծ կարևորություն են ստանում նորագույն տեխնոլոգիաները (արհեստական բանականություն, համացանց, կիբեռտարածություն, ռոբոտաշինություն և այլն)՝ արդյունաբերական դարաշրջանի տեխնոլոգիաներին վերապահելով երկրորդական, սակայն ոչ պակաս նշանակալի դեր: Տեխնոլոգիաներն ավանդաբար համարվում են ռազմական ռազմավարության զարգացման շարժիչ ուժը, քանի որ նորագույն տեխնոլոգիական գործիքների կիրառումն է երաշխավորում ռազմավարական նպատակների արագ և արդյունավետ իրագործումը:

Դրանք փոխում են պատերազմների վարման ձևերն ու եղանակները, ինչպես նաև նպաստում են պատերազմի և՛ կինետիկական, և՛ ոչ կինետիկական առումների կերպափոխմանը[10]:

Ժամանակակից զինված ուժերի վրա բարձր տեխնոլոգիաներն ունենում են հեղափոխական ազդեցություն՝ նպաստելով առաջընթացի մի շարք ուղղություններով՝ ինչպիսիք են տվյալների հավաքման ու մշակման ժամանակի կրճատումը, տեղեկույթի փոխանցման արագացումը, ռազմական գործողությունների արդյունավետության մեծացումը, հարվածների ճշգրտության մեծացումը, որոշումների կայացման արագության էական աճումը և այլն[*]:

Հետևաբար հիբրիդային սպառնալիքները կանխելու կամ զսպելու համար կարևոր է, որ պետությունների ռազմաքաղաքական ղեկավարությունները, որոշում կայացնողները, գիտական հանրույթի և արդյունաբերական

---

[9] Տես *R. Thiele, J. Schmid.* Hybrid Warfare – Orchestrating the Technology Revolution. “ISPSW Strategy Series: Focus on Defense and International Security”, January 2020, N 663:

[10] Տես “Science & technology trends 2020-2040: Exploring the S&T edge”. NATO Science & Technology Organization, 2020:

[*] Որոշումների կայացման ժամանակահատվածի կրճատման կարևորությունը ևս մեկ անգամ շեշտվում է ժամանակակից պատերազմների և զինված հակամարտությունների մեկ այլ կարևորագույն բնութագրիչ գծի՝ արագ փոփոխվող և դինամիկ բնույթի համատեքստում: Ռազմական գործողությունների դինամիկությունը պահանջում է բոլոր՝ մարտավարական, օպերատիվ և ռազմավարական, մակարդակներում առաջանցիկության որպես ռազմական գործողություններում հաջողության հասնելու կարևորագույն նախապայմանի ապահովում:

ոլորտի ներկայացուցիչները հստակ պատկերացում ունենան ոչ միայն հիբրիդային սպառնալիքների, այլև դրանց զարգացման և հետևանքների վրա նորագույն տեխնոլոգիաների ազդեցության վերաբերյալ:

Տարբեր մակարդակների տնտեսական զարգացածությամբ պետությունների տեխնոլոգիապես զինվածությունը և ռազմական նպատակով տեխնոլոգիաները կիրառելու կարողությունները գտնվում են մեծ միջակայքում և մեծապես բխում են ռազմական բյուջեի ծավալից: Նոր տեխնոլոգիաների կիրառումն ավելի է խորացնում ռազմական հզորությունների միջև տարբերությունները, իսկ պետությունները, ձեռք բերելով նոր առաջադիմական զենք, ձեռք են բերում նաև նախկինում անլուծելի թվացող խնդիրները կարգավորելու վստահություն, ինչն էլ, իր հերթին, ստեղծում է լարվածության նոր օջախներ կամ նպաստում լարվածության աճմանը:

Միջազգային իրավունքում միջուկային[11], քիմիական[12] կամ կենսաբանական[13] զենքի կիրառման վերաբերյալ կան սահմանափակումներ և նախատեսված են դրա համար պատժման մեխանիզմներ: Սակայն նորագույն տեխնոլոգիաների կիրառման ոլորտում չտարածման սահմանափակումներ չկան, յուրաքանչյուր պետություն ինքն է սահմանում այդ ոլորտում ներդրումների ծավալներն ու տեխնոլոգիաների մշակման ու ներդրման ուղղությունները: Բարձր տեխնոլոգիաներն ավելի էժան են դառնում, հետևաբար տարածվում են դերակատարների ավելի լայն շրջանում[14]: Նման դեպքում կարող են խախտվել նաև բարոյականության և մարդասիրության սահմանները, քանի որ եթե ավանդական զինատեսակների կիրառման համար բարոյական ու իրավական սահմանները քիչ թե շատ հստակորեն են սահմանված[15], ապա, ինչպես նշեցինք, տվյալ պարագայում դրանք չկան:

Հիբրիդային պատերազմների սպառնալիքների սպեկտրը շարունակաբար ընդլայնվում է, քանի որ դրանք մշակվում և կիրառվում են ոչ միայն իրական կյանքում, այլև երևակայական (վիրտուալ) դաշտում: Սակայն եթե իրականության մեջ առկա սպառնալիքները բավական լավ հետազոտված

---

[11] Տես “Treaty on the Prohibition of Nuclear Weapons” (https://www.un.org/disarmament/wmd/nuclear/tpnw/), (10.04.2022):

[12] Տես “Convention on the Prohibition of the Development, Production, Stockpiling and Use of Chemical Weapons and on their Destruction”. Paris, 13 January 1993 (https://ihl-databases.icrc.org/ihl/INTRO/553?OpenDocument), (10.04.2022):

[13] Տես “Biological Weapons Convention” (https://www.un.org/disarmament/biological-weapons/):

[14] Տես “10 Trends for the Future of Warfare”, 3 November 2016 (https://www.weforum.org/agenda/2016/11/the-4th-industrial-revolution-and-international-security/), (10.04.2022):

[15] Տես “What is International Humanitarian Law?” (https://www.icrc.org/en/doc/assets/files/other/what_is_ihl.pdf), (10.04.2022); “Convention (III) relative to the Treatment of Prisoners of War”. Geneva, 12 August 1949 (https://ihl-databases.icrc.org/ihl/full/GCIII-commentary), (10.04.2022); “Convention (IV) relative to the Protection of Civilian Persons in Time of War”. Geneva, 12 August 1949 (https://ihl-databases.icrc.org/applic/ihl/ihl.nsf/INTRO/380), (10.04.2022):

են ու կան նաև դրանց հակազդեցության գործուն մեխանիզմներ, ապա երևակայական տարածությունում այդ սպառնալիքների վերաբերյալ ամբողջական ու համակողմանի ընկալումներ դեռևս ձևավորված չեն[16]: Ավելին. երևակայական տարածությունում հիբրիդային դերակատարների կատարած գործողությունները շատ ավելի անկանխատեսելի են, իսկ անորոշության պայմաններում դրանց հակազդեցությունը գրեթե անհնար գործ է:

Տվյալներն ու հաղորդակցային ցանցերը կիբեռտարածությունը դարձրել են առձակատման նոր և որոշիչ տիրույթ: Կիբեռտարածությունը առավել ևս կրում է թվային դարաշրջանի տեխնոլոգիաների արագ փոփոխման ազդեցությունը՝ տարածաշրջանային և միջազգային քաղաքական գործընթացները դարձնելով մեծապես կախված այդ տիրույթում տեղի ունեցող իրադարձություններից: Որպես արդյունք՝ համաշխարհային քաղաքականությունը, միջազգային հարաբերությունների տիրույթը դառնում են կիբեռտարածությունում տեղի ունեցող իրադարձությունների ազդեցության կրող՝ դրանց բոլոր բացասական և, երբեմն, աղետալի հետևանքներով հանդերձ:

Նորամուծական կերպափոխումների կիզակետը, թերևս, արհեստական բանականությունն է (ԱԲ), որը հեղափոխական ազդեցություն ունի և ապագայում վստահաբար կպայմանավորի պետությունների քաղաքական և ռազմական նպատակների իրագործման արդյունավետությունը: Այն իր կիրառումն ու ազդեցությունն ունի գրեթե բոլոր՝ քաղաքական, տնտեսական, առողջապահական, և այլ ոլորտներում, սակայն ուղիղ և անքակտելի է ԱԲ ազդեցությունը որոշումների կայացման գործընթացների վրա:

Ժամանակակից պատերազմներն ու զինված հակամարտությունները, որոնց հիմնական բնութագրիչ գծերից մեկը, ի թիվս այլոց (ոչ պետական զինված դերակատարների ներգրավում, գերճշգրիտ սպառազինության կիրառում, տեղեկատվական պատերազմ և այլն), արագընթացությունն է, պահանջում են նաև արագընթացություն ինչպես մարտավարական և օպերատիվ, այնպես էլ ռազմավարական որոշումների կայացման գործում: ԱԲ-ն ոչ միայն նպաստում է որոշումների կայացման արդյունավետության բարելավմանը, այլև մեծացնում է ռազմական գործողությունների վարման բարդությունը[17]: Այդ փոփոխությունները առանձնակի ակնառու կլինեն հիբրիդային պատերազմների դեպքում, քանի որ դրանց բնորոշ են գործիքակազմի բազմազանությունն ու արդիականացման սրընթացությունը:

Հիբրիդային պատերազմներում նորագույն տեխնոլոգիաներով ընձեռվող հնարավորություններն ու արհեստական բանականությունը կարող են օգտագործվել ենթակառուցվածքների (տրանսպորտ, մեծ առևտրային կենտրոններ, համերգասրահներ, ժամանցի վայրեր և այլն), ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտների բնականոն գործունեությունը խաթարելու համար՝ որպես նպատակ հետապնդելով վախի, խուճապի մթնոլորտի ստեղծումն ու տարածումը և հասարակության շրջանում անվտանգության ավան-

---

[16] Տես *Ռ. Թիլե, Յ. Շմիդ,* Նշ. աշխ.:

[17] Տես *R. Thiele.* Artificial Intelligence – A key enabler of hybrid warfare. Hybrid CoE Working Paper 6, March 2020:

դական ընկալումների կերպափոխումը: ԱԲ-ի միջոցով հնարավոր կլինի ճշգրիտ կերպով նպատակաուղղելու ազդեցությունն ու պլանավորելու դրա մակարդակը և ծեռնածությունների միջոցով կառավարելու հակառակորդ պետության հասարակության վարքը: Այս գործողությունները հիմնականում կկատարվեն սոցիալական հարթակների միջոցով՝ որպես հիմք ընդունելով այսպես կոչված «սովորույթների», կամ «սովորութային վարքի», վերլուծությունն ու կանխատեսելի վարքագիծը:

ԱԲ-ի տարբեր տեխնոլոգիաներ օգտագործվում են նաև ապատեղեկատվական արշավների ժամանակ: Օրինակ՝ կարող են օգտագործվել տեսանյութեր, որոնք ստեղծվում են ձայնի պատճենմամբ (կլոնավորում, *cloning*), պատկերների ու տեքստերի կեղծմամբ: Ներկայումս տարբեր կայքեր հնարավորություն են տալիս օգտվելու այսպես կոչված «դիփֆեյք» ծրագրերից, մասնավորապես՝ փոխելու դեմքերն արդեն գոյություն ունեցող տեսանյութերում (օրինակ՝ *"Reface")* կամ «կենդանացնելու» մահացած հարազատների նկարները (օրինակ՝ *"MyHeritage")*[18]:

Հիբրիդային պատերազմներում ԱԲ-ն կնպաստի պատերազմների հիբրիդայնության զարգացմանը (էվոլյուցիային). տեղեկատվության գերակայությունը կարող է դառնալ որոշիչ գործոն՝ տեղեկույթի հավաքման, փոխանցման և օգտագործման, սպառազինության ճշգրտության և գործնական կիրառման արդյունավետության մեծացման հաշվին: Հիբրիդային պատերազմների դեպքում ԱԲ-ն հնարավորություն կտա մոդելավորելու, ազդելու և փոխելու խմբերի վարքագիծը՝ կանխորոշելով հիբրիդային հակամարտության սոցիալական և տնտեսական հետևանքները:

Բարդ գործընթացները պարզեցնելու և դրանց արդյունավետությունը մեծացնելու ներուժի շնորհիվ ԱԲ-ն ռազմական և հետախուզական գերատեսչությունների համար դառնում է առանցքային միջոց հիբրիդային պատերազմի չնախատեսված իրավիճակներ առաջացնելու տեսակետից[19]: Հետախուզական տվյալների հավաքման, մշակման և օգտագործման հնարավորությունների ընդլայնումը ավելի նպատակաուղղված է դարձնում հիբրիդային դերակատարների (պետություն, ոչ պետական զինված դերակատար, ահաբեկչական խմբավորում, անհատներ և այլն) դեմ պայքարը[20]:

Այսպիսով՝ հիբրիդային պատերազմներում ԱԲ-ի տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն կտա.

- օպտիմալ կերպով բաշխելու և կիրառելու սահմանափակ ռեսուրսները՝ էականորեն մեծացնելով դրանց օգտագործման արդյունավետությունը սահմանափակ տարածության և ժամանակի մեջ,

[18] Տես *T. Helmus.* Artificial Intelligence, Deepfakes, and Disinformation. Perspective: Expert insights on a timely policy issue, July 2022 (https://www.rand.org/content/dam/rand/pubs/perspectives/PEA1000/ PEA1043-1/RAND_PEA1043-1.pdf), (16.04.2022):

[19] Տես *Michael J. Mazarr, Ryan Michael Bauer, Abigail Casey, Sarah Anita Heintz, Luke J. Matthews.* The emerging risk of virtual societal warfare. "RAND", 2019 (https://pile.sdbs.cz/docs/RAND_RR2714.pdf), (20.04.2022):

[20] Տես *Ռ. Թիլե,* Նշ. աշխ., էջ 1–14:

- կանխորոշելու վնասներն ու բացասական հետևանքները դրանք նվազագույնի հասցնելու համար,
- մեծ ծավալներով տեղեկույթի մշակման միջոցով ընտրելու սահմանափակ թիրախներ և դրանց խոցման առավել արդյունավետ մեխանիզմներ,
- կանխատեսող վերլուծությունը ԱԲ կարևոր հատկանիշներից մեկն է և որը հնարավորություն է տալիս ապահովելու մեծ քանակությամբ տվյալների փոխանակում՝ միաժամանակ համադրելով տվյալների մի քանի բազաներ: ԱԲ-ի միջոցով օրինաչափությունների վերհանումը հնարավորություն է տալիս հավաքելու և վերլուծելու հիբրիդային պատերազմին վերաբերող լայն շրջանով տվյալներ: Օրինաչափությունների վերհանումն ու տրամաբանական շղթաների կառուցումը կարող են հիմք դառնալ հիբրիդային գործողությունների կանխարգելման և դրանց դեմ արդյունավետ պայքարի մեխանիզմների մշակման համար:

Հիբրիդային պատերազմներում ԱԲ-ի կիրառմամբ ստացված գործնական-կիրառական օգուտների թվին կարելի է նաև դասել տարբեր աղբյուրների և մեծաքանակ տվյալների արդյունավետ մշակումը և որոշումների կայացման ժամանակ դրանց կիրառումը, նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսների ներգրավման կրճատումը, ինքնավար համակարգերի ներդրման շնորհիվ ռիսկերի գնահատման արդյունավետ մեխանիզմների մշակումը և այլն[21]:

Ժամանակակից աշխարհում զինված ուժերում ԱԲ-ի ներդրումն ու կիրառումը դարձել են օրվա հրամայական, քանի որ այն նպաստավոր պայմաններ է ստեղծում, որ տվյալներն արագ կերպով և բազմակիորեն ավելի արդյունավետ կերպով հավաքվեն, դասակարգվեն, վերլուծվեն և փոխանցվեն, ինչը կնպաստի որոշումների կայացման ճշգրտությանն ու արագությանը: Այդ նպատակով կիրառվող ԱԹՍ-ները և այլ ինքնավար սարքեր առավել նպատակային են դարձնում տվյալների հավաքումը, քանի որ ապահովում են նաև պատկերների և այլ տեսանյութերի փոխանցումը:

Զինված ուժերում նորագույն տեխնոլոգիաների կիրառումը մեծապես կրում է քաղաքացիական ոլորտում տեխնոլոգիական զարգացումների հետևանքները, քանի որ երկակի նախանշանակման տեխնոլոգիաները նույնքան արդյունավետությամբ կիրառվում են ինչպես քաղաքացիական, այնպես էլ ռազմական նպատակներով: Հետևաբար ժամանակակից միտումներին համընթաց քայլելու համար պետությունները պետք է ոչ միայն խթանեն քաղաքացիական ոլորտում տեխնոլոգիական առաջընթացը, այլև կանխորոշեն դրանց հետագա կիրառումը զինված ուժերում՝ ստեղծելով դրա համար նպաստավոր իրավական հիմքեր, և այդ նպատակով հատկացնեն բավականաչափ ֆինանսական միջոցներ:

---

[21] Տես *Nathan Strout.* Where is the investment in AI oversight, asks inspector general?. “C4ISRNET”, 10 June 2019 (https://www.c4isrnet.com/artificial-intelligence/2019/06/10/where-is-the-investment-in-ai-oversight-asks-inspector-general/), (01.05. 2022):

## ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ

Հիբրիդային պատերազմներում պետությունները բախվում են ոչ միայն նոր դերակատարների, այլև նոր դերակատարների օգտագործած նոր տեխնոլոգիաների հետ: Նոր տեխնոլոգիաները փոխում են պետությունների ու հատկապես՝ ոչ պետական դերակատարների ռազմական հնարավորությունները և ստեղծում նոր սպառնալիքներ ոչ միայն և ոչ այնքան ռազմական հատվածի, որքան քաղաքացիական բնակչության համար՝ վտանգելով նաև տարածաշրջանային կամ համաշխարհային ռազմավարական կայունությունը[22]: Ոչ պետական դերակատարները, կիրառելով նորագույն տեխնոլոգիաներ մարտավարական կամ օպերատիվ մակարդակներում, հասնում են ռազմավարական հանկարծակիության: Եթե նախկինում գաղտնի տեղեկույթի փոխանցումը, բարդ կառավարումը, անօդաչու թռչող ապարատների, հականավային հրթիռների կիրառումը և նմանատիպ այլ գործառույթներ պետության մենաշնորհն էին, ապա այսօր արդեն դրանք մատչելի (հասանելի) են նաև ոչ պետական դերակատարների համար[23]:

Նորագույն տեխնոլոգիաներն ընդլայնել են ոչ պետական դերակատարների գործունեության շրջանը: Օրինակ՝ համացանցը նրանց հնարավորություն է տվել ավելի արդյունավետ կերպով կազմակերպելու և կատարելու ահաբեկչական գործողություններ, կայքերի և տեսախաղերի միջոցով տարածելու ծայրահեղական գաղափարներ, հավաքագրելու մարդկանց և այլն՝ այսպիսով նպաստելով բռնության աճմանը ամբողջ աշխարհում[24]:

Անհերքելի է, որ պետություններն ու տարբեր ռազմաքաղաքական միավորումներ արհեստական բանականության հիմքով սպառազինության ստեղծման ու կիրառման համար ունեն ավելի մեծ ռեսուրսներ ու միջոցներ և բավական ակտիվ կերպով օգտվում են դրանցից: Ոչ պետական դերակատարներն ավելի քիչ ռեսուրսների են տիրապետում, սակայն արհեստական բանականությունը կարող է նրանց հնարավորություն տալ շրջանցելու և հաղթահարելու ուժերի անհավասարությունը:

Ոչ պետական դերակատարները, արհեստական բանականության վրա հիմնված տեխնոլոգիաներ ձեռք բերելով, սպառնում են խաթարել ռազմական գործողությունների տարբեր թատերաբեմերում պետության և ոչ պետական դերակատարների միջև հարաբերությունների դինամիկան ու բնույթը: Ոչ պետական դերակատարների կիրառած կիսաինքնավար անօդաչու թռչող ապարատներն էժան են՝ համեմատած պետականության շատ ավելի բարդ զենքի հետ: Ինքնավար ԱԹԱ-ներն ապահովում են լրացուցիչ առավե-

[22] Տես "Disruptive and Game Changing Technologies in Modern Warfare, Development, Use, and Proliferation". Ed. by Margaret E. Kosal. Springer Nature Switzerland, 2020, P. 4:

[23] Տես *G. Yan.* The impact of Artificial Intelligence on hybrid warfare. "Small Wars & Insurgencies", 2020, Vol. 31, Issue 4:

[24] Տես *B. Jenkins.* The New Age of Terrorism. RAND Corporation, 2006, PP. 117–130:

լություն՝ ոչ պետական խմբավորումներին հնարավորություն տալով նախապես ծրագրելու թիրախները: Լիովին ինքնավար ԱԹԱ-ն ոչ միայն ինքնավար կերպով է թռչում և կառավարման գործում չի պահանջում միջամտություն, այլև ինքնուրույնաբար է որոշում կայացնում հայտնաբերված թիրախները խոցելու վերաբերյալ՝ ապավինելով արհեստական բանականությանը: Սա նաև մի շարք ռիսկեր է պարունակում: Նույնիսկ եթե ալգորիթմները կատարյալ են և ունակ են ճշգրիտ նույնականացնելու ու տարբերակելու քաղաքացիական անձին մարտական գործողությունների մասնակիցներից, մարտադաշտի հանգամանքները կարող են բարդ և իրավիճակային լինել՝ հանգեցնելով քաղաքացիական անձանց նշանառման և քաղաքացիական օբյեկտների խոցման[25]: Արդեն նորություն չէ, որ ոչ պետական դերակատարները կիրառում են ԱԹԱ-ներ: Միայն 2016 թ. օգոստոսից 2020 թ. մարտն ընկած ժամանակահատվածում արձանագրվել է դրանց կիրառման ավելի քան 440 դեպք[26]:

Համացանցում հասանելի արհեստական բանականությունը ոչ պետական ծրագրահենային խմբերին հնարավորություն է տալիս արդյունավետորեն բացահայտելու համացանցի խոցելիությունը և ֆինանսական ռեսուրսներ կորզելու ընկերություններից կամ անհատներից: Տեղեկատվական ոլորտում արհեստական բանականությունը նրանց հնարավորություն է ընձեռում ապատեղեկատվություն տարածելու՝ ազդելով հասարակական տրամադրությունների վրա և դա կիրառելու քաղաքական նպատակներով[27]:

Ոչ պետական դերակատարները ունեն ԱԲ-ի տեխնոլոգիաների ձեռքբերման երկու հիմնական ճանապարհ[28]: Առաջինն այսպես կոչված առևտրային դաշտում հասանելի արհեստական բանականությունն  է, որի վերաբերյալ տեղեկությունները տարածվում են նույնիսկ «Յութուբ»-ի տեսանյութերի միջոցով: Երկրորդ ճանապարհով ոչ պետական դերակատարները կարողանում են ձեռք բերել և կիրառել պետությունների ու պետական դերակատարների մշակած և բավական արդյունավետ արհեստական բանականության տեխնոլոգիաներ:

Հիբրիդային պատերազմներում ոչ պետական դերակատարները բավական արդյունավետ կերպով օգտագործում են նաև կիբեռտարածությունը: Ծրագրահեն գործողությունների միջոցով ոչ պետական զինված խմբավորումները կարողանում են ապատեղեկույթ տարածել՝ օգտագործելով հա-

---

[25] Տես *S. Kreps.* Democratizing Harm: Artificial Intelligence in the Hands of Nonstate Actors. Brookings, Report, November 2021, PP. 1–19:

[26] Տես *H. Haugstvedt, J. Jacobsen.* Taking Fourth-Generation Warfare to the Skies? An Empirical Exploration of Non-State Actors' Use of Weapnoized Unmanned Aerial Vehicles (UAVs — 'Drones'). "Perspectives on Terrorism", 2020, Vol. 14, N 5:

[27] Տես *Ս. Քրեպս,* Նշ. աշխ., էջ 1–19:

[28] Տես *Sarah Kreps and Richard Li.* Cascading chaos: Nonstate actors and AI on the battlefield. "Brookings", 1 February 2022 (https://www.brookings.edu/blog/order-from-chaos/2022/02/01/cascading-chaos-nonstate-actors-and-ai-on-the-battlefield/), (21.02.2022):

մացանցի ընձեռած հնարավորությունները: Սոցիալական ցանցերը հնարավորություն են տալիս ծայրահեղական գաղափարները տարածելու հատկապես երիտասարդների շրջանում՝ արդյունավետ հավաքագրման միջոցով: Նրանք համացանցն օգտագործում են իրենց անհրաժեշտ ընկալման ձևավորման, հավաքագրման ու մոբիլիզացման[29], ֆոնդահայթայթման *(fondrising)*, տվյալների հավաքման, կիբեռհարձակումների, ծրագրային ապահովման (բջջային հավելվածներ, խաղեր) և կեղծ փաստաթղթերի տարածման, կադրերի (օրինակ՝ ահաբեկիչների պատրաստում ճամբարներում) վերապատրաստման նպատակով: Ընդ որում, կիբեռզենքերը երբեմն կարող են ավելի մեծ ազդեցություն ունենալ, քան ֆիզիկական սպառնալիքն ու ոչնչացումը: Ոչ պետական դերակատարները տեխնոլոգիաներն օգտագործում են իրենց ինքնությունը, գտնվելու վայրը, մտադրությունները քողարկելու նպատակով և հնարավորություն են տալիս չբացահայտված մնալու ու մոլորության մեջ գցելու անվտանգության և հետախուզության մարմիններին: Արհեստական բանականության՝ զարմանալիորեն բնականին մոտ ձայների ստեղծման գործառույթի միջոցով ահաբեկիչները կարող են ձախողել լավ պլանավորված գործողությունները: Փաստացի, ամեն օր ու յուրաքանչյուր վայրկյան գեներացվող տվյալների մեծ շտեմարանները բարենպաստ պայմաններ են ստեղծում ահաբեկչական գործողությունների պլանավորման և իրագործման համար:

Ոչ պետական դերակատարները, առաջին հերթին՝ ահաբեկիչները, կարող են ինքնագնաց տրանսպորտային միջոցները, ինչպիսիք են, օրինակ՝ Տեսլայի մշակած մեքենաները, օգտագործել հասարակական վայրերում, հավաքների, երթերի ժամանակ պայթյուններ ձեռնարկելու նպատակով[30]:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տեխնոլոգիական զարգացման արդի միտումները կանխորոշում և պայմանավորում են հիբրիդային պատերազմի գործիքակազմի ընդլայնումը, բարելավում հիբրիդային գործունեության մեկնարկային պայմանները, ընդլայնում հիբրիդային դերակատարների զինանոցը՝ այն դարձնելով ավելի հասանելի և դրանով իսկ նպաստելով նրանց գործունեության արդյունավետության մեծացմանը: Միևնույն ժամանակ, նոր տեխնոլոգիական զարգացումները խթանում են հիբրիդային սպառնալիքներին առավել արագ հակազդելու մեխանիզմների մշակումը:

2. Նորագույն տեխնոլոգիաներն ընդլայնում են պետությունների, դաշինքների և ոչ պետական դերակատարների «զինանոցը»՝ ապահովելով անհամաչափ ազդեցություն այն ոլորտներում, որոնք ավանդա-

[29] Տես *A. Wagner.* Intelligence for Counter Terrorism: Technology and Methods. “Journal of Policing, Intelligence and Counter Terrorism”, 2007, Vol. 2, Issue 2:

[30] Տես *B. Kumar.* Use of Modern Technology to Counter Terrorism. “International and Regional Security”, 2019, PP. 1–10:

բար կրել են ուղղորդված և «համաչափ» ազդեցություն: Հիբրիդային սպառնալիքների հաշվառումն ու դրանց հակազդեցության մեխանիզմները պետք է ամրագրվեն նաև անվտանգային ռազմավարական փաստաթղթերում մի շարք կարևոր գործոնների հաշվառմամբ, ինչպիսիք են պետության զարգացածության մակարդակը, կառավարման ձևը, տեղային, տարածաշրջանային և համընդհանուր անվտանգային միջավայրերի առանձնահատկությունները, հակառակորդների և դաշնակիցների հետ փոխհարաբերությունների բնույթը և այլն:

3. Նորագույն տեխնոլոգիաներն ավելի ու ավելի հաճախ և ավելի մեծ ծավալներով են կիրառվում զինված ուժերում և պայմանավորում պատերազմի կամ զինված հակամարտության ընթացքն ու ելքը, և ըստ այդմ բարձր տեխնոլոգիաների կիրառմանն անցումը երբեք ոչ միայն չի կարող համարվել ավարտված, այլև տվյալ ոլորտում տեղի ունեցող աննախադեպ առաջընթացի հաշվառմամբ, կրելու է արագացող գործընթացի բնույթ:

4. Տնտեսապես թույլ զարգացած պետությունների համար հիբրիդային պատերազմը կարող է լինել պայքարի լավագույն այլընտրանքային տարբերակ՝ տեխնոլոգիական բաղադրիչի շարունակական զարգացմամբ և կիրառմամբ: Այս խնդրի լուծմանը կարող է նպաստել ֆինանսական միջոցների նպատակային ուղղորդումը, երկակի նախանշանակման տեխնոլոգիաների և արտադրության ստեղծումն ու զարգացումը:

5. Օրակարգային խնդիր է զինված ուժերում նորագույն տեխնոլոգիաների կիրառման նպատակով համապատասխան իրավական հիմքերի ստեղծումը, ինչպես նաև իրավական կարգավորումների արդիականացումն ու հստակեցումը:

6. Քանի որ հիբրիդային սպառնալիքների թիրախ կարող են դառնալ պետության շարքային քաղաքացիները, անհրաժեշտ է հասարակությանն իրազեկել հիբրիդային սպառնալիքների մասին, դրա հետ մեկտեղ համապատասխան քայլեր ձեռնարկել հիբրիդային սպառնալիքների գործուն մեխանիզմների մշակման և կիրառման նպատակով: Այս խնդրի իրագործմանը պետք է նպաստի ոչ միայն պետությունն առհասարակ, այլև առանձին կազմակերպությունները, կառույցները, որոնք տեղային մակարդակով կկարողանան մշակել հակազդեցության մեխանիզմներ:

# ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԴՐԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԵՎՄՈՒՏՔ–ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՌՃԱԿԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

*Բ. Մ. ԱՂԱՋԱՆՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Ռազմական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի պետ,*
*Ա. Մ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Ռազմական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս*



**Հիբրիդային պատերազմի հասկացությունը, բնույթը և կիրառման որոշ առանձնահատկություններ**: Այսօր հիբրիդային պատերազմը դարձել է ռազմական ռազմավարության հետազոտությունների ծավալուն և հեռանկարային բնագավառ[1]: Հիբրիդային պատերազմում սիներգետիկ եղանակով միածուլվել են ինչպես կանոնավոր զինված պայքարի, այնպես էլ ոչ կանոնավոր՝ ահաբեկչական, դիվերսիոն, պարտիզանական, ապստամբական պայքարի եղանակները և, դրա հետ մեկտեղ, քաղաքական-դիվանագիտական, տնտեսական, կիբեռ-, տեղեկատվական, հոգեբանական, էկոլոգիական պատերազմների ձևերն ու միջոցները[2]: Դա ուղղակի և անուղղակի գործողությունների ուրույն և հաշվեկշռված համադրում է[3], սովորական և ոչ սովորական պատերազմների ձևերի ու եղանակների համաժամանակյա, հետևողական և շարունակական կիրառություն[4]:

Հիբրիդային պատերազմն ունի ռազմավարական մակարդակ, որի ժամանակ գործողություններն իրականացվում են միասնական կառավարման ներքո[5] և հաճախ հակառակորդի համար ունենում են կործանարար ու անդառնալի հետևանքներ[6]:

---

* Հոդվածը նախնական տեսքով ներկայացվել է 12.09.2022: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 18.11.2022:

[1] Տես *Brian Fleming.* The Hybrid Threat Concept: Contemporary War, Military Planning and the Advent of Unrestricted Operational Art. U. S. Army Command & General Staff College (https://cgsc.contentdm.oclc.org/digital/collection/p4013coll3/id/2752):

[2] Տես *Joshua Ball.* What Is Hybrid Warfare? “Global Security Review”, 10.06.2019 (https://globalsecurityreview.com/hybrid-and-non-linear-warfare-systematically-erases-the-divide-between-war-peace/):

[3] Տես *Генри Бэзил Лиддел Гарт*. Стратегия непрямых действий (https://www.litres.ru/genri-bezil-liddel-gart/strategiya-nepryamyh-deystviy/chitat-onlayn/):

[4] Տես *Arsalan Bilal*. Hybrid Warfare – New Threats, Complexity, and “Trust” as the Antidote. “NATO Review”, 30.11.2021 (https://www.nato.int/docu/review/articles/2021/11/30/hybrid-warfare-new-threats-complexity-and-trust-as-the-antidote/index.html):

[5] Տես *Frank G. Hoffman.* Conflict in the 21st Century: The Rise of Hybrid Wars.

Ի թիվս բազմաթիվ եղանակների, հիբրիդային պատերազմի ժամանակ նաև սատարում են հակառակորդ պետության ընդդիմադիր ուժերին, ապստամբական տրամադրություններով, քրեական հանցավոր խմբերին, ազգային փոքրամասնություններին և այլն:

Հիբրիդային պատերազմի ժամանակ ռազմական գործողություններ կարող են նաև ընդհանրապես չվարվել, և այս տեսանկյունից հիբրիդային պատերազմը կարող է ընթանալ պայմանականորեն խաղաղ ժամանակ՝ հակառակորդ պետության, դրա բնակչության և ԶՈՒ-ի անձնակազմի դեմ, առանց հակառակորդ պետության տարածքի գրավման, օբյեկտների խոցման ու ավերման, այսինքն՝ փաստացի անդառնալի կորուստների:

Հիբրիդային պատերազմը՝ որպես երևույթ, նորություն չէ և դրսևորվել է դեռ հին աշխարհի պատերազմավարության մեջ[7]: Հիբրիդային մարտավարության կիրառում առկա է, օրինակ, դեռ Ասորա-ուրարտական պատերազմներում (մ. թ. ա. 8–6-րդ դարեր)[8], Պելոպոնեսյան պատերազմներում (մ.թ.ա. 431–404 թթ.)[9] և այլն: Այդ ժամանակ ագրեսորը, նախքան պատերազմ սկսելը և հակառակորդի տարածքի որոշակի շրջաններ ներխուժելը, այնտեղ ուղարկում էր գործակալների, որոնք ջանում էին խաթարել այդ շրջանում գործող կառավարման համակարգը, խափանել տնտեսության բնականոն գործունեությունը, հարուցել տեղի բնակչության (առաջին հերթին՝ ստրուկների) դժգոհությունը կենտրոնական իշխանությունից և հրահրել ապստամբություն:

Ռազմական ռազմավարության դասական տեսաբանների հայացքներում ևս հստակ կերպով արտահայտված են հիբրիդային պատերազմավարության տարրեր: Օրինակ՝ չինացի մեծանուն ռազմական տեսաբան և զորավար Սուն Ցզիի «Երկ ռազմարվեստի մասին» աշխատության մեջ հակառակորդի հանդեպ ռազմավարական գերազանցություն և հաղթանակ ապահովելու գլխավոր միջոց են համարվում հիմնականում ուղղակի գործողություններից հրաժարումը և անուղղակի գործողությունների ձեռնարկումը, քանի որ հեղինակը պատերազմը համարում է խաբեության ուղի՝ ապատեղեկատվության ու քարոզչության միջոցով հակառակորդի շարքերում խուճապի ու հուսալքության սերմանմամբ[10]: Պրուսացի գեներալ, հռչակավոր ռազմական

---

Arlington, VA: Potomac Institute for Policy Studies, 2007, P. 8 (https://www.potomacinstitute.org/images/stories/publications/potomac_hybridwar_0108.pdf):

[6] Տես *James N. Mattis, Frank G. Hoffman.* Future Warfare: The Rise of Hybrid Wars. USNI (US Naval Institute) Proceedings Magazine, November 2005, Vol. 132/11/1,233 (http://milnewstbay.pbworks.com/f/MattisFourBlockWarUSNINov2005.pdf):

[7] Տես “Deep Dive: Hybrid Warfare”. DFC Research / Analysis. Digital Forensic Center (https://dfcme.me/en/deep-dive-hybrid-warfare/):

[8] Տես *Б. Б. Пиотровский.* Ванское царство (Урарту). М., 1959, гл. VII: «Поход Саргона против Урарту в 714 году», сс. 98–99:

[9] Տես *А. Боннар.* Греческая цивилизация, т. 2. Ростов-на-Дону, 1994, с. 448:

[10] Տես *Սուն Ցզի,* Երկ ռազմարվեստի մասին: Թարգմանիչ՝ Ռ. Սահակյան (http://ararat-center.org/upload/files/Razm_&_Anvtang_14.pdf):

տեսաբան Կառլ ֆոն Կլաուզևիցը պատերազմը նմանեցնում էր քամելեոնի, քանի որ այն փոփոխում է իր բնույթը, տեսքը, ձևը, ինչպես քամելեոնը[11]:

Ինչպես հայտնի է, ներկայումս բարձրտեխնոլոգիական պատերազմները վարվում են ոչ թե ռազմաճակատի գծով, այլ պետության ամբողջ տարածքով մեկ, ուստի կարելի է ասել, որ ծնվում են քաղաքական, տնտեսական, տեղեկատվական և հոգեբանական պայքարի որակապես ու բովանդակությամբ նոր ռազմաճակատներ, որոնցում հարձակման թիրախ են դառնում ոչ այնքան հակառակորդի զինված ուժերը, որքան նրա բնակչության և ԶՈՒ-ի անձնակազմի ոգին, պայքարելու կամքը, բարոյահոգեբանական վիճակը: Դրանք են այսօր պատերազմների հիմնական թիրախները: Այստեղ հարկ է դարձյալ հիշատակել Կ. Կլաուզևիցին, որը պետությանը զինաթափելու, նրան դիմադրությունն ցուցաբերելու ուժից ու մտադրությունից զրկելու համար առաջ էր քաշում 3 հիմնական թիրախային օբյեկտների կամ բաղադրիչների գաղափարը, այն է՝ հակառակորդի զինված ուժերը, տարածքը և կամքն ու ոգին[12]: Ակնհայտ է, որ առանց հակառակորդի բնակչության ու ԶՈՒ-ի դիմադրությունը հաղթահարելու, նրանց պայքարելու կամքը կոտրելու հնարավոր չէ հասնել լիարժեք հաղթանակի: Այստեղ արժե հիշատակել նաև Սուն Ցզիի կարծիքով պատերազմի ելքը վճռող 5 հիմնական գործոններից առաջինը՝ «Ուղին», երբ ժողովուրդը միակամ է իր առաջնորդի հետ: Ի դեպ, հակառակորդի բնակչության և ԶՈՒ-ի անձնակազմի կամքը կոտրելու կարևորությունն այսօր շեշտվում է այն ակնհայտ միտումով, որ արդի պատերազմներում «ծանրության կենտրոնը» հակառակորդի խմբավորումների ջախջախումից տեղափոխվում է դեպի դրանց բարոյական հյուծումը, բարոյալքումը, անօգնականության զգացումի ձևավորումը: Այսինքն՝ ներկայումս հակառակորդի բնակչության և ԶՈՒ-ի անձնակազմի ոգին ու բարոյահոգեբանական վիճակն են դառնում «ծանրության կենտրոն»:

Պետք է նշել, որ հակառակորդի կամքը կոտրելուն ու բարոյալքելուն են միտված եղել նաև անցյալի բազմաթիվ տեղեկատվական-քարոզչական ու հոգեբանական ձեռնարկումներ (այժմյան լեզվով՝ օպերացիաներ), որոնք երբեմն իրականացվել են նաև իրենց իսկ ժողովրդի նկատմամբ[13]: Նույնպիսի թիրախի էր ուղղված նաև «Դալլեսի պլանը», որի նպատակն էր

[11] Տես «Հատվածներ Կառլ ֆոն Կլաուզևիցի «Պատերազմի մասին» աշխատությունից»: «ՀԲ» ՌԳՀ-ի «Աշխատանքային տետրեր» հավելված, 2020, հմ. 3, էջ 14, նաև՝ *К. ф. Клаузевиц.* О войне. Пер. с нем. М.–СПб., 2007, гл. 7, с. 6:

[12] Տես «Հատվածներ Կառլ ֆոն Կլաուզևիցի «Պատերազմի մասին» աշխատությունից»: «ԱՏ», 2020, հմ. 3, էջ 21:

[13] Տես, օրինակ, *Александр Воронель,* Сионистский заговор (https://lechaim.ru/ARHIV/171/voronel.htm); «Великие подделки: «Протоколы сионских мудрецов». Как бульварная литература породила теорию жидомасонского заговора», 23.07.2015 (https://nauka.tass.ru/sci/6822732); «Нацистская пропаганда – Документальные киноматериалы» (https:// encyclopedia.ushmm.org/ content/ru/gallery/-nazi-propaganda-films); “Reichsgesetzblatt”, 1933, S. 104; «Секретные протоколы Йозефа Геббельса» (https://www.kommersant.ru/doc/3434176):

ԽՍՀՄ-ի փլուզումը՝ նրա գաղափարական հիմքերը սասանելու, ազգային ու սոցիալական խմբերի տրոհելու, ավանդույթները ջնջելու, բարոյական արժեքները քայքայելու և կորստյան մատնելու, բնակչության մեջ դժգոհության, անվստահության մթնոլորտ ստեղծելու միջոցով[14]:

Միջուկային զսպման տարիներին ակնհայտ էր Արևմուտքի, մասնավորապես՝ ԱՄՆ-ի, և ԽՍՀՄ-ի միջև մղվող պայքարը, որը նույնպես պարունակում էր հիբրիդային տարրեր: «Սառը պատերազմի» տարիներին ԽՍՀՄ-ը ներսից քայքայելու ու փլուզելու քաղաքականությունն իրագործվում էր ոչ թե ուղղակի ներխուժմամբ կամ միջամտությամբ, այլ ԽՍՀՄ-ում արևմտյան գաղափարախոսության և արժեքների տարածմամբ (ժողովրդավարական ազատություններ և իրավունքներ)՝ հասարակության արժեհամակարգի, հոգեբանության ու մտածելակերպի նպատակային փոփոխության միջոցով: Այդօրինակ «փափուկ ուժի» կիրառման արդյունավետությանն էին նպաստում նաև խորհրդային փակ հասարակության մեջ զանգվածայնորեն տարածված արտասահմանյան իրերը (նորաձև ջինսե հագուստ, մաստակներ, սննդամթերք, ֆիլմեր, լուսանկարներ, տեսաերիզներ, կենցաղային տեխնիկա, ավտոմեքենաներ և այլն): Ըստ էության, իրականացվում էր ԽՍՀՄ-ին ենթարկեցնելու քաղաքականություն՝ խորհրդային հասարակության գաղափարախոսական այլասերման միջոցով[15]:

Հիբրիդային պատերազմավարության մեկ այլ տարր է այն, որ կարելի է առանց հակառակորդի տարածքը նվաճելու՝ «նվաճել» այն ամբողջովին՝ պետության մեջ ձեռնարկելով որոշակի ներքաղաքական գործընթացներ, ընդհուպ մինչև հեղափոխության հրահրում, ինչպես դա արվեց, այսպես կոչված, «Արաբական գարնան» ձևով[16]: Այս դեպքում հիբրիդային պատերազմի վարման եղանակներից են այնպիսի ոչ պետական կազմակերպությունների, ՀԿ-ների ֆինանսավորումը, որոնք վարում են ապապետական

---

[14] Տես *Н. Саква.* Что такое «План Даллеса» (http://sakva.ru/Nick/DullPlan.html); *Վ. Հ. Մարգարյան,* Զինծառայողների պաշտպանությունը բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից: «ՀԲ», 2002, հմ. 3:

[15] Տես *Аллен Даллес.* Искусство разведки (https://royallib.com/book/dalles_allen/iskusstvo_razvedki.html); «План Даллеса по уничтожению СССР (России)» (https://web.archive.org/web/20100418061156/http://www.russkoedelo.org/mysl/miscellaneous/dulles_plan.php); *Аллен Даллес.* ЦРУ против КГБ. Искусство шпионажа (https://www.litres.ru/allen-dalles/cru-protiv-kgb-iskusstvo-shpionazha/):

[16] Տես “Arab Spring- background, causes, impact, present situation etc” (https://web.archive.org/web/20150209174836/http://www.teluguaspirant.com/arab-spring-background-causes-impact-present-situation-etc/1575/); *Julia Skinner*. Social Media and Revolution: The Arab Spring and the Occupy Movement as Seen through Three Information Studies Paradigms (https://aisel.aisnet.org/cgi/viewcontent.cgi?article=1482&context=sprouts_all); *Uriel Abulof*. What Is the Arab Third Estate? (https://www.huffpost.com/entry/what-is-the-arab-third-es_b_832628); *Malise Ruthven*. How to Understand ISIS: The New Arab Wars’ by Marc Lynch and ‘ISIS: A History’ by Fawaz Gerges. “New York Review of Books”, 23 June 2016 (https://www.nybooks.com/articles/2016/06/23/how-to-understand-isis/):

գործունեություն և պառակտում հասարակությանը, ինչպես նաև տվյալ ժամանակահատվածում իշխող քաղաքական ուժի դեմ գործող ընդդիմադիր կուսակցությունների ու քաղաքական ուժերի ֆինանսավորումը, սատարումն ու հրահրումը, հոգևոր և աշխարհիկ կյանքի պառակտումը[17], օլիգարխիայի ստեղծումն ու դրա ազդեցության մեծացմանը սատարումը և այլն: Հաճախ, այսպես կոչված, «գունավոր հեղափոխությունների» միջոցով հնարավոր է լինում առանց բռնի ուժի կատարել իշխանափոխություն: Արդի աշխարհում նույնիսկ կայուն պետությունները կարող են հանկարծակի հայտնվել ներքին հակամարտության վիճակում: Արագ փլուզվում է նրանց պետական կառավարման համակարգը, և հասարակությունն ընկղմվում է քաոսի մեջ: Ներկայումս պատերազմները երբեմն անվանվում են «կառավարվող քաոսի պատերազմներ» կամ հենց «հիբրիդային պատերազմներ», որոնց ընթացքում ստեղծվում է տարբեր միջոցների կիրառման հիբրիդ[18]:

Հիբրիդային պատերազմի կարևոր և գործուն տարր է տեղեկատվական պայքարը՝ հակառակորդի բնակչության և ԶՈՒ-ի անձնակազմի շրջանում ծնավորելով օբյեկտիվ իրականության աղավաղված պատկեր և ընկալում:

Կարևոր է հիբրիդային պատերազմներն իմաստավորել ու գնահատել ինչպես անցյալի իրողությունների, այնպես էլ արդի գործընթացների համատեքստում: Օրինակ՝ այդպիսի ընդգրկուն նյութ է տալիս ռուս-ուկրաինական հակամարտությունը, որի ելքը կարող է զգալի չափով ազդել նաև Հարավկովկասյան տարածաշրջանի ռազմաքաղաքական-անվտանգային իրադրության ու զարգացումների վրա: Այս գնահատումները կօգնեն վերաիմաստավորելու նաև 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում տեղի ունեցած և հետագա զարգացում ստացած գործընթացներն ու պատերազմի հետևանքները, ինչպես նաև կօգնեն վեր հանել այդ պատերազմի այն խութերը, որոնք կարող են կրկնվել ապագայում՝ առաջ բերելով նոր սպառնալիքներ:

**Ռուսաստան–Արևմուտք առճակատումը:** ժամանակակից աշխարհում Արևմուտքի և Ռուսաստանի միջև առճակատումը շարունակվում է նոր սրացումներով ու զարգացումներով, մասնավորապես՝ ռուս-ուկրաինական հակամարտության ծնով: ԱՄՆ-ի գլխավորությամբ և եվրոպական պետությունների ակտիվ ներգրավմամբ Արևմուտքը ձգտում է սաստելու Ռուսաստանին՝ տնտեսական ու քաղաքական պատժամիջոցներով նրան հյուծելու և թուլացնելու, ինչպես նաև ՈՒկրաինային մշտական նյութական, առաջին հերթին՝ ռազմական, օգնություն տրամադրելու միջոցով: Այնպես որ, արդեն երկար ժամանակ է, ինչ ուրույն հիբրիդային պատերազմ է մղվում ՌԴ-ի և Արևմուտքի միջև[19], որն առավել սրացել է ոչ միայն ռուս-ուկրաինական հակա-

[17] Տես *А. А. Бартош.* Стратегия и контрстратегия гибридной войны. «Военная мысль», 10.10.2018 (https://vm.ric.mil.ru/Stati/item/138034/):

[18] Տես *И. М. Попов, М. М. Хамзатов.* Война будущего: концептуальные основы и практические выводы. Приложение 2: «Гибридная война: проблемы и перспективы постконфликтного урегулирования». М., 2018, с. 670:

[19] Տես «Гибридная война России и Запада». «Carnegie. Endwment for Interna-

մարտության, այլև դեպի Արևելք ՆԱՏO-ի ընդարձակման համատեքստում[20]: ԱՄՆ-ը և եվրոպական մի շարք պետություններ մշտապես մեղադրում են Ռուսաստանին իրենց դեմ հիբրիդային պատերազմ վարելու մեջ[21]: Արևմտյան փորձագիտական և պետական օղակներում մշտապես շրջանառում են կարծիքներ, թե Ռուսաստանն ստեղծել է բազմաթիվ լրատվական ու քարոզչական հարթակներ, հեռուստաալիքներ, ծրագրահեններ թիմեր, որպեսզի կարողանա մեծացնել իր ապատեղեկատվական, քարոզչական և լրտեսական ցանցերի գործունեության արդյունավետությունը[22]: Ռուսաստանին տևական ժամանակ է՝ մեղադրում են նաև ԱՄՆ-ի և արևմտյան այլ պետությունների ներքին գործերին, մասնավորապես՝ ընտրություններին, հիբրիդային պայքարի եղանակներով խառնվելու և ընտրական գործընթացների վրա ազդելու մեջ[23]:

Միևնույն ժամանակ, հստակ կերպով նկատվում են ՌԴ-ի դեմ արևմտյան ռազմաքաղաքական դաշինք ՆԱՏO-ի կիրառած հիբրիդային պատերազմավարության տարրերը, որոնք ամրագրվեցին նաև դաշինքի գործունեության վերջին «արգասիքներում», մասնավորապես՝ 2022 թ. հունիսի 28–30-ը կայացած ՆԱՏO-ի Մադրիդյան գագաթնաժողովում ընդունված որոշումներում[24], հատկապես՝ այդ որոշումների ռազմական-ռազմավարական և ժամանակակից պատերազմավարության չափումներով իմաստավորման տեսանկյունից: Այս գագաթնաժողովի ընթացքում հաստատվեց ՆԱՏO-ի նոր

tional Peace», 28.01.2022 (https://carnegie.ru/commentary/topic/80); “The latest on Russia's war on Ukraine”, “European Parliament Briefing”, 17 May 2022 (https://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2022/729427/EPRS_BRI(2022)729427_E N.pdf); *Jack Detsch*. Russia Wages Winter Information War Against the West, 21 October 2022 (https://foreignpolicy.com/2022/10/21/russia-winter-information-war/); *Jonathan Masters*. Ukraine: Conflict at the Crossroads of Europe and Russia. “Council Foreign Relations”, 11 October 2022 (https://www.cfr.org/backgrounder/ukraine-conflict-crossroads-europe-and-russia):

[20] Տես *Ofer Fridman.* Russian “Hybrid Warfare”: Resurgence and Politicization Russian. “Oxford Academic”, August 2018 (https://academic.oup.com/book/2879/chapter-abstract/143483814?redirected From=%20fulltext):

[21] Տես, օրինակ, *Mathieu Boulègue, Alina Polyakova*. The Evolution of Russian Hybrid Warfare: Executive Summary. “CEPA” (https://cepa.org/wp-content/uploads/2021/01/CEPA-Hybrid-Warfare-1.28.21.pdf):

[22] Տես *Christopher S. Chivvis.* “Understanding Russian “Hybrid Warfare” and What Can be Done About It”. “RAND”, 2017 (https://www.rand.org/content/dam/rand/pubs/testimonies/ CT400/CT468/RAND_CT468.pdf); նաև՝ *Dusan Stojanovic*. Inside Russian “Spy Base” in the Balkans, 6 October 2016 (https://www.apnews.com/03f70a64ec5b48bbb1c2f56bdea9255e):

[23] Տես *Anne Applebaum.* The Dutch Just Showed the World How Russia Influences Western European Elections. “Washington Post”, 8 April 2016 (https://www.washingtonpost.com/opinions/russias-influence-in-western-elections/2016/04/08/b427602a-fcf1-11e5-886f-a037dba38301_story.html):

[24] Տես “2022 NATO Summit” (https://www.nato.int/cps/en/natohq/news_196144.htm):

ռազմավարությունը, կամ, այսպես կոչված, «Մադրիդյան հայեցակարգը», համաձայն որի՝ ՆԱՏՕ-ն իր հավաքական անվտանգությունն ապահովելու է «360 աստիճանի» կոչվող մոտեցման հիման վրա, այն է՝ անվտանգությունն ապահովվում է ցամաքային, օդային, ծովային, կիբեռ- և տիեզերական ոլորտներում հնարավոր բոլոր սպառնալիքների ու մարտահրավերների հետմղմամբ[25]: Նոր մոդելը նախատեսված է ապահովելու ինչպես հիբրիդային պատերազմի ռազմական բաղադրիչը՝ ՆԱՏՕ-ի ռազմական ներկայությունը արևելյան զորաթևում, այդպիսով նաև հավանական հակառակորդների ռազմական (ուժային) զսպման կարողությունների զգալի աճը, այնպես էլ ոչ ռազմական (ոչ ուժային) միջոցների, հատկապես՝ կիբեռզործիքակազմի կիրառման հնարավորությունը ՌԴ-ի դեմ[26]:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա նշենք, որ այսօր հիբրիդային պատերազմի նորովի իմաստավորում և դրա գործիքակազմի հետևողական զարգացում ու կիրառում կարելի է տեսնել նաև ռուսական ռազմագիտության մեջ, ռազմական ռազմավարական հետազոտությունների բնագավառում: 2014 թ. ՌԴ Ռազմական դոկտրինում ժամանակակից զինված հակամարտությունների բնութագրիչ գծերի շարքում, ռազմական ուժի և՛ քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, և՛ այլ՝ ոչ ռազմական, միջոցների համալիր կիրառման, ռազմական գործողություններում անկանոն զինված խմբավորումների օգտագործման մասին դրույթների հետ մեկտեղ, կարևոր տեղ է զբաղեցնում պատերազմում անուղղակի և անհամաչափ գործողությունների ու միջոցների կիրառությունը[27]:

**Ռուս-ուկրաինական համակարտությունը:** Հարկ է նշել, որ հակամարտությանը նախորդած ամբողջ շրջանում և բուն հակամարտության ընթացքում հստակ դրսևորվում են հիբրիդային պատերազմին հատուկ տարրեր: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Հակամարտությունն ընթանում է ընդդիմակա կողմերի բնակչության և ԶՈՒ-ի անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը խաթարող տեղեկատվական-հոգեբանական գործողություններով: Օրինակ՝ ռուս-ուկրաինական առճակատման հենց սկզբից ռուսական շոուբիզնեսի մի շարք անվանի ներկայացուցիչներ ցուցադրաբար լքեցին ՌԴ-ն և իրենց բողոքն ու անհամաձայնության ձայնը բարձրացրին ընդդեմ ՌԴ իշխանությունների վարած օպերացիայի, ինչը միանշանակ կերպով չընդունվեց ռուսական էլիտայի կողմից[28]: Արևմտյան և արևմտամետ ռուսական լրատվամիջոցներն այս հանգամանքը

[25] Տես “NATO 2022 Strategic Concept”. Adopted by Heads of State and Government at the NATO Summit in Madrid 29 June 2022 (https://www.nato.int/nato_ static_fl2014/assets/pdf/2022/6/pdf/290622-strategic-concept.pdf):

[26] Տես “NATO Secretary General press conference previewing the NATO Summit in Madrid”. “NATO News”, 27.06.2022 (https://www.youtube.com/watch?v=C2NsQ_xH3a0):

[27] Տես «Военная доктрина Российской Федерации». «Kremlin.ru», с. 7 (http://static.kremlin.ru/media/events/files/41d527556bec8deb3530.pdf):

[28] Տես, օրինակ, «Что говорят о просьбе Пугачевой сделать ее иноагентом политики, артисты и пропагандисты». «Новости», 19 сентября 2022 (https://republic.ru/posts/105311):

ակտիվորեն շրջանառում են նաև որպես 2022 թ. սեպտեմբերի 21-ին ՌԴ-ում հայտարարված մասնակի զորահավաքի[29], հանուն հայրենիքի զորագրվելու պատրաստ բնակչության տրամադրությունների և, ընդհանրապես, հասարակական կարծիքի վրա ազդեցություն ունեցած գործոն: Դրան գումարվեցին նաև բնակչության շրջանում որոշակի դժգոհությունները պետական կառավարումից: Իրականացվեցին պատերազմի դեմ բողոքի ակցիաներ: Արևմուտքի կողմից համացանցի վրա ներգործելուց ու ռուսական հարթակներին ճնշելուց հետո հազարավոր ռուսաստանցիներ տեղափոխվեցին այլ երկրներ, այդ թվում՝ ՀՀ: Նրանց մեջ կային նաև այնպիսիք, որոնք այդկերպ փորձեցին խուսափել նաև զորահավաքից: Որպես վերոնշյալի արդյունք՝ ՌԴ-ն խնդիր ունեցավ պաշտպանելու իր հասարակությունը արտաքին մեծ քարոզչական ազդեցությամբ պայմանավորված հնարավոր բացասական ներքաղաքական զարգացումներից:

Որպես հիբրիդային պատերազմներին բնորոշ երևույթ՝ ՌԴ-ն կանգնեց ընդդիմակա պետության ներքաղաքական գործերին միջամտելու անհրաժեշտության առջև, երբ դեռ Մայդանի ժամանակ* ուկրաինական հասարակությունը, դժգոհ լինելով սեփական իշխանություններից, ստացավ Արևմուտքի սատարումն ու քաջալերումը: Ընդ որում, Արևմուտքից ազդեցություն էր գործադրվում ուկրաինական հասարակության տրամադրությունների, Ուկրաինայում տեղի ունեցող ընտրությունների ընթացքի, կարևոր քաղաքական ու ռազմավարական առանցքային որոշումներ կայացնող անձանց, օրենքների և օրենսդրական ակտերի ընդունման, արտասահմանյան ներդրումային տրամադրությունների, երկրում տիրող ներդրումային միջավայրի և այլ գործոնների ու գործընթացների վրա: Ռուսաստանը զգաց, որ թուլանում է իր ազդեցությունն Ուկրաինայում և արդեն 2022 թ. դեպքերի ժամանակ ուղղակիորեն հայտարարեց Ուկրաինայի քաղաքական վարչակարգի տապալման անհրաժեշտության մասին՝ որակելով այն հակառուսական, անգամ՝ նացիստական: Արևմուտքի ազդեցության հետևանքով փաստացի տեղի ունեցավ Ուկրաինայի կտրուկ արմատական «անջատում» ավանդական ռուսական ազդեցությունից, ինչը կատարվեց հիբրիդային պայքարի գործիքակազմի ու գործելակերպի կիրառմամբ:

Ռուս-ուկրաինական հակամարտության ամբողջ ընթացքում ցայտուն կերպով է դրսևորվում նաև տեղեկատվական պայքարը: Ակտիվ կերպով կեղծ լուրեր են տարածվում, հատկապես՝ ուկրաինական կողմից, օրինակ դեռ Մայդանի կամ Ղրիմի դեպքերից մնացած լուսանկարների հրապա-

---

[29] Տես «Указ «Об объявлении частичной мобилизации в Российской Федерации»», 21 сентября 2022 г. (http://kremlin.ru/events/president/news/69391):

* Ուկրաինայում 2013 թ. նոյեմբերի վերջից մինչև 2014 թ. փետրվար տեղի ունեցած իրադարձություններն են, որոնք պատմության մեջ մտել են «*Մայդան*», «*Եվրոմայդան*» և «*Արժանապատվության հեղափոխություն*» անուններով, քանի որ բողոքի զանգվածային ցույցերը, որոնք սկսվեցին հիմնականում այն բանից հետո, երբ Ուկրաինայի կառավարությունը հայտարարեց պետության եվրաինտեգրման ուղեգծից հրաժարվելու մասին, գերազանցապես կազմակերպվում էին Կիևի Մայդան (թուրքերեն՝ հրապարակ, բաց տեղ) կոչվող հրապարակում:

րակում, այդ թվում՝ երեխաների դիակներ, որոնք ներկայացվում են իբրև ռուս-ուկրաինական ընթացիկ հակամարտության դրվագներ: Նախկին իրադարձությունների լուսանկարների վերահրապարակումը, միտումնավոր շրջանառումը ապատեղեկատվություն է, տեղեկատվական պայքարի տարր, որը բնորոշ է նաև Ադրբեջանին: Ռուսաստանի ձեռնարկած ռազմական հատուկ օպերացիայի մեկնարկից մի քանի օր անց արևմտյան ԶԼՄ-ները տարածեցին տեղեկույթ ռուսական ուժերի «անթիվ» կորուստների մասին, ինչը, ըստ ՌԴ ՊՆ-ի՝ նպատակաուղղված ապատեղեկատվություն էր: Մի շարք խորայելական ու եվրոպական լրատվամիջոցներ տարածում էին հատուկ դիտավորությամբ մոնտաժված կադրեր՝ «ցույց տալով» ռուսական կողմի ռմբակոծություններով կատարված ավերածությունները: Անգամ օգտագործվել են համակարգչային խաղերի տեսարաններ, ինչպես նաև ուկրաինական տեխնիկան ներկայացվել է ռուսականի փոխարեն: Իր հերթին, ռուսական տեղեկատվական հակապայքարն ընթանում է ոչ այնքան արդյունավետ, քանի որ կրում է գերազանցապես դրվագային, հակազդումային բնույթ: Օրինակ՝ 2022 թ. մարտի սկզբին Արևմուտքը արգելափակեց «Ֆեյսբուք» և «Թվիթեր» սոցիալական ցանցերի Ռուսաստանի հաշիվները, ինչին ի պատասխան՝ ՌԴ-ն մարտի 4–5-ը կայացրեց համապատասխան հակազդող որոշումներ՝ արգելելով այդ ցանցերի գործունեությունը ՌԴ տարածքում[30]: Ռուսաստանի տեղեկատվական-քարոզչական համակարգը հիմնականում սահմանափակվում է ուկրաինական և արևմտյան ապատեղեկատվության ու տեղեկատվական կեղծարարությունների հերքումով[31]:

Ինչպես նշվեց, հիբրիդային պատերազմավարության մեջ, բացի կանոնավոր ուժերից, կիրառվում են նաև ոչ կանոնավոր խմբավորումներ, վարձկաններ, ահաբեկիչներ և այլն: Դա ևս ցայտուն կերպով ի հայտ եկավ ռուս-ուկրաինական առճակատման ժամանակ: 2022 թ. մարտի 3-ին Ուկրաինայի Նախագահ Վ. Զելենսկին հայտարարեց, որ շուրջ 16 հազար արտասահմանցի կամավորներ ու վարձկաններ մուտք են գործելու Ուկրաինա[32]: Այդ հայտարարության ժամանակ Լեհաստանի տարածքից արդեն մի քանի հարյուր խորվաթ վարձկան ժամանել էին Ուկրաինա[33]: Այս փաստին արձագանքեց ՌԴ ԱԳՆ-ն՝ նշելով, որ ՆԱՏՕ-ն շարունակում է աջակցել կիևյան վարչակարգին, այդ թվում՝ սպառազինության մատակարարումներով, իսկ

[30] Տես ««Ռոսկոմնադզորը» արգելափակել է Facebook սոցիալական ցանցը Ռուսաստանի ողջ տարածքում», 04.03.2022 (https://www.24news.am/news/222807):

[31] Տես «Гибридная война Запада против РФ и мирная работа ШОС. О чем говорил Патрушев в Ташкенте». «ТАСС», 19.08.2022 (https://tass.ru/politika/1551 3785?utm_source=google.com&utm_medium=organic&utm_campaign=google.com& utm_referrer=google.com):

[32] Տես «Зеленский заявил, что «Украина встречает первых из 16 тыс. иностранных добровольцев»». «ТАСС», 03.03.2022 (https://tass.ru/mezhduna rodnaya-panorama/139465 29?utm_source=google.com&utm_medium=organic&utm _campaign=google.com&utm_referrer= google.com):

[33] Տես *Andrew R.c. Marshal.* For foreign fighters, Ukraine offers purpose, camaraderie and a cause. “Reuters”, 08.03.2022 (https://www.reuters.com/world/ europe/foreign-fighters-ukraine-offers-purpose-camaraderie-cause-2022-03-07/):

որոշ անդամ երկրներ խրախուսում են ռազմական գործողություններին մասնակցելու համար Ուկրաինա վարձկանների, այդ թվում՝ «նախկին զինվորականների», մեկնումը, ինչը այդ երկրների իշխանություններին դարձնում է ռազմական հանցագործությունների մեղսակիցներ[34]: Վարձկաններ գալիս էին Խորվաթիայից, Գերմանիայում գործող նեոնացիստական, հակասեմիթական, ռասիստական կազմակերպություններից, որոնք վերջին տարիներին անարգել ու ակտիվորեն գործում էին նաև Ուկրաինայում[35]:

Ռուս-ուկրաինական հակամարտությունում դիտվում են նաև հիբրիդային պատերազմավարությանը բնորոշ այնպիսի տարրեր, ինչպիսիք են կապի և ենթակառուցվածքների վնասումը, կարևոր հաղորդակցությունների դադարեցումը: Օրինակ՝ կասեցվել կամ չեղյալ են հայտարարվել «Աերոֆլոտ», «Ռոսիա», «Ավրորա» և այլ ավիաընկերությունների գրեթե բոլոր միջազգային չվերթները ՌԴ-ից Ուկրաինա[36]: Իր հերթին Ուկրաինայի իշխանությունները հայտարարեցին, որ Ուկրաինայի օդային տարածքում ոչ թռիչքային գոտի կստեղծվի ռուսական կործանիչների թռիչքները խափանելու համար, ինչին ռուսական կողմը դարձյալ արձագանքեց սուր ձևով՝ նշելով, որ «Ուկրաինայի վրա ոչ թռիչքային գոտի ստեղծելու այլ երկրների փորձերը Ռուսաստանը որպես ռազմական գործողություններին մասնակցություն կդիտարկի»[37]:

Մեկ այլ օրինակ է 2022 թ. հոկտեմբերի 8-ին Ղրիմը Ռուսաստանի հետ կապող Կերչի կամուրջի պայթեցումը[38], որի կազմակերպման պատասխանատվությունն ստանձնեց ուկրաինական կողմը: Նույնիսկ Կիևի կենտրոնում տեղադրվեց այրվող կամրջի տեսարանով ցուցապաստառ, և մարդիկ դրա առջև լուսանկարվում էին: Հոկտեմբերի 10-ին Ռուսաստանը պատասխանեց

---

[34] Տես «Комментарий официального представителя МИД России М.В.Захаровой по итогам встречи мининдел НАТО 4 марта 2022 года». МИД РФ, 05.03.2022 (https://mid.ru/ru/foreign_policy/news/1803140/); «МИД России: Отправляя наемников на Украину, страны НАТО становятся соучастниками военных преступлений», 05.03.2022 (https://rg.ru/2022/03/05/mid-rossii-otpravliaia-naemnikov-na-ukrainu-strany-nato-stanoviatsia-souchastnikami-voennyh-prestuplenij.html); «ՌԴ ԱԳՆ-ը զգուշացրել է Ուկրաինա վարձկաններ ուղարկող երկրներին», 05.03.2022 (https://news.am/arm/news/690018.html):

[35] Տես *Adrian Karatnycky.* «Ukraine, Anti-Semitism, Racism, and the Far Right», 16.10.2018 (https://www.atlanticcouncil.org/blogs/ukrainealert/ukraine-anti-semitism-racism-and-the-far-right/); նաև՝ *Vyacheslav Likhachev.* Far-right Extremism as a Threat to Ukrainian Democracy. “Freedom House”, “Nations in Transit / brief”, May 2018 (https://freedomhouse.org/sites/default/files/ukraine%20brief%20final.pdf):

[36] Տես ««Աերոֆլոտ»-ը կդադարեցնի բոլոր միջազգային չվերթները, դեպի Մինսկ թռիչքներից բացի». «News.am», 05.03.2022 (https://news.am/arm/news/689997.html):

[37] Տես, օրինակ, «Закрытие неба над Украиной будет расценено как участие в военных действиях – Путин». «Москва 24», 05.03.2022 (https://www.m24.ru/news/vlast/05032022/437646); «Պուտին. Ուկրաինայի վրա ոչ թռիչքային գոտի ստեղծելու փորձերը Ռուսաստանը որպես հակամարտությանը մասնակցություն կդիտարկի»: «News.am», 05.03.2022 (https://news.am/arm/news/690010.html):

[38] Տես «На Крымском мосту произошел подрыв грузового автомобиля». «РИА Новости», 09.10.2022 (https://ria.ru/20221008/most-1822415086.html):

երկրի ամբողջ խորությամբ ուկրաինական խոշոր քաղաքների լայնածավալ ռմբակոծություններով[39]:

Այսպիսով՝ ռուս-ուկրաինական հակամարտությունում հիբրիդային պատերազմի դրսևորումները ցայտուն ու տիպիկ են, և դրանք բնորոշում են տվյալ պատերազմավարության էությունն ու տարբեր շերտերը: Անկախ այս պատերազմի ելքից և հետևանքներից՝ հիբրիդային պատերազմի վարումն արդեն կոնկրետ հետք է թողել երկու երկրների վրա՝ սկսած միջազգային վարկանիշի անկումից մինչև տնտեսական ու սոցիալական վիճակի վատթարացում: Ավելին. այս հակամարտության հետևանքները դեռ երկար ժամանակ իրենց զգացնել կտան:

**Ամփոփում:** Ամփոփելով Ռուսաստան–Արևմուտք երկարամյա առճակատման և, մասնավորապես, Ռուսաստան–Ուկրաինա զինված հակամարտության՝ որպես հիբրիդային պատերազմի սույն համառոտ դիտարկումը՝ նշենք, որ հիբրիդային պատերազմի դրսևորումներն ու հետևանքները մենք նույնպես կրել ենք և շարունակում ենք կրել: Մասնավորապես՝ 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմին Ադրբեջանի կողմից և Թուրքիայի աջակցությամբ վարձկան-գրոհայինների ակտիվ մասնակցությունը, դեռ 2019 թվականից ինտենսիվացող և ամբողջ պատերազմի ընթացքում ու հիմա էլ մղվող տեղեկատվական պատերազմը: Հակառակորդը դրսևորում է երկակի վարք՝ մի կողմից իբր կարևորելով տարածաշրջանում կայունության և խաղաղության հաստատումը, մյուս կողմից՝ շարունակելով ՀՀ-ի հասցեին ուղղված իր ռազմատենչ ու սպառնալից հռետորաբանությունը[40]: Տվյալ իրավիճակը Հայաստանին պարտադրում է անել անհրաժեշտ հետևություններ և զարգացնել իր քաղաքական-դիվանագիտական հակազդեցության գործիքակազմը, մեխանիզմները, տեղեկատվական հակապայքարի ներուժը՝ հակառակորդի հիբրիդային պատերազմ վարելու հատուկ գործիքների կիրառման եղանակներն ու մեթոդները կանխատեսելու կարողությունները, դրանց ոչ միայն արդյունավետ կերպով կասեցնելու, այլև առաջանցիկ կանխարգելիչ գործողություններ ձեռնարկելու տեխնիկատեխնոլոգիական, տեղեկատվական-քարոզչական ու հոգեբանական կարողությունները:

Անգամ հայ-ադրբեջանական հնարավոր խաղաղության պայմանագրի կնքման դեպքում թուրք-ադրբեջանական դաշինքը հավանաբար կշարունակի վարել ոչ բռնի միջոցների կիրառմամբ հիբրիդային պայքար:

---

[39] Տես «С самого утра приходят сообщения о ракетных ударах по Киеву и другим крупным городам Украины». «ОРТ Новости», 10 октября 2022 (https://www.1tv.ru/news/2022-10-10/439330-s_samogo_utra_prihodyat_soobscheniya_o_raketnyh_udarah_po_kievu_i_drugim_krupnym_gorodam_ukrainy):

[40] Տես «Азербайджан угрожает армянской стороне применением силы: депутат - о двух требованиях Баку». «Новости-Армения», 02.08.2022 (https://news armenia.am/news/politics/azerbaydzhan-ugrozhaet-armyanskoy-storone-primeneniem-sily-deputat-o-dvukh-trebovaniyakh-baku/); նաև՝ «Алиев угрожает Армении новой войной – военный эксперт»: «Aysor.am», 17.06.2022 (https://www.aysor.am/ru/news/2022/06/17/военный-эксперт/1977806):

**ВОЕННАЯ СТРАТЕГИЯ**

# ВЛИЯНИЕ НОВЕЙШИХ ТЕХНОЛОГИЙ НА ГИБРИДНЫЙ ХАРАКТЕР СОВРЕМЕННЫХ ВОЙН И ВООРУЖЕННЫХ КОНФЛИКТОВ

*М. А. ПЕТРОСЯН, кандидат политических наук, доцент, ученый-аналитик Центра военных стратегических исследований ИНСИ НИУО МО РА, лектор Кафедры по правам человека, демократии и политологии при ЮНЕСКО ГУБ*

РЕЗЮМЕ

Гибридные войны представляют собой совокупность сложных и взаимосвязанных инструментов, имеющих не только военную, но и экономическую, социальную, информационную, политическую и другие составляющие. Причем наличие военной составляющей не является необходимым условием ведения гибридной войны. Гибридные войны охватывают все физические сферы – наземную, воздушную, океанскую, околоземное космическое пространство, киберпространство, могут вестись как в явной форме, так и скрытно, причем в последнем случае «жертва» бывает очевидной, но «агрессор» порой остается в тайне.

В качестве основных, характерных для гибридных войн черт выделяются применение информационных технологий, высокоточного оружия и боеприпасов, рост вовлеченности и повышение роли негосударственных вооруженных акторов, психологическое воздействие не только на личный состав ВС, но и на высшее руководство и все население противоборствующего государства и др. В гибридных войнах напрямую или косвенно затрагивается национальная идентичность личности и общества в целом, а также в качестве субъекта воздействия избираются основные факторы, обеспечивающие экономическое и военное развитие государства и его стратегических инфраструктур, духовно-нравственные ценности и традиции народа, общественно-культурные устои.

Анализ теоретических изысканий в области гибридных войн и практики их ведения со всей очевидностью свидетельствует о том, что в настоящее время невозможно обеспечивать национальную безопасность без учета угроз, порождаемых с использованием новейших технологий, и разработки эффективных мер для их парирования. При этом в деле обеспечения своей безопасности и устойчивого развития государства должны опираться также на эффективность использования новейших технологий, которые способны не только менять формы и способы ведения войн, но и трансформировать кинетические и некинетические аспекты войны.

Именно новейшие технологии обеспечивают:

– совершенствование и расширение арсенала средств борьбы в

современных войнах, одним из видов которых является гибридная война;
- расширение возможностей государственных и негосударственных акторов по осуществлению асимметричных воздействий в сферах, традиционно подверженных «симметричному» и прямому воздействию;
- постоянно расширяющееся применение в вооруженных силах новейших средств и способов борьбы (как вооруженной, так и невооруженной), вследствие чего этот процесс не может быть доведен до насыщения, а значит и когда-либо завершен;
- для экономически слаборазвитых государств возможность уравновешивания резкого дисбаланса с развитыми государствами путем последовательного развития и применения высокотехнологичных средств и т. д.

## ГИБРИДНАЯ ВОЙНА И ЕЕ ПРОЯВЛЕНИЯ В КОНТЕКСТЕ КОНФРОНТАЦИИ ЗАПАД – РОССИЯ

*Б. М. АГАДЖАНЯН, полковник, начальник Центра военных стратегических исследований ИНСИ НИУО МО РА, А. М. ШАХВЕРДЯН, полковник, соискатель кафедры политологии факультета международных отношений ЕГУ, старший преподаватель Центра военных стратегических исследований ИНСИ НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Гибридная война занимает важное место в ведении современных войн. В настоящее время она рассматривается как синергетическое сочетание инструментариев и способов ведения традиционных (конвенциональных) и нетрадиционных (неконвенциональных) войн – синхронизированные, взаимосогласованные действия с единым замыслом, которые осуществляются в военной, политической, экономической, информационной, информационно-психологической и информационно-пропагандистской сферах, на суше, в воздухе, на море, в космическом и киберпространстве. При этом действия могут охватывать все или некоторые из этих сфер и отнюдь необязательно должны включать военный компонент. Соответственно, зачастую объект этой войны даже не догадывается, что против него ведется война, а еще чаще – кто ее ведет.

Элементы и способы гибридной войны ярко проявляются, в частности, в сфере конфронтации Россия – Запад. Приводимые в статье примеры показывают, что с середины 2000-х годов эта конфронтация приняла характер гибридной борьбы, а в 2014 г. после событий на Украине для противоборствующих сторон превратилась во влиятельный инструмент на арене международных отношений. Элементы гибридной войны отчетливо проявились и в период активной фазы российско-украинского вооруженного конфликта 2022 года. Здесь

вводятся в действие различные формы и способы ведения этого вида войны, включающие как информационно-психологическую борьбу против населения противника и личного состава его вооруженных сил, так и военные, политические и экономические компоненты. Таким образом, российско-украинский конфликт является ярким примером применения различных инструментов гибридной войны. Соответственно, в статье делается попытка освещения некоторых проявлений этой борьбы, которые преимущественно обусловлены применением несиловых средств.

Рассмотрение данного конфликта представляет для нас особый интерес в связи с тем, что как до Арцахской войны 2020 г., так и на всем ее протяжении, а также после нее Азербайджан по сути вел и продолжает вести гибридную войну против Армении и Арцаха, последствия которой проявляются и сегодня.

При этом с окончанием вооруженной фазы она не прекратилась, а просто перешла в политическую, информационно-пропагандистскую и психологическую сферы. Авторы прогнозируют, что развязанная против Армении и Арцаха турецко-азербайджанская гибридная война будет продолжаться даже в случае предпринятых в любом формате посреднических инициатив, направленных на возможное армяно-азербайджанское примирение.

**MILITARY STRATEGY**

## THE IMPACT OF HIGH TECHNOLOGIES ON THE HYBRID CHARACTER OF MODERN WARS AND ARMED CONFLICTS

*M. A. PETROSYAN, PhD in Political Sciences, Associate Professor, Research Fellow, Center for Military Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA, Lecturer, UNESCO Chair in Human Rights, Democracy and Political Science, Brusov State University*

SUMMARY

Hybrid warfare is a set of complex and interrelated tools comprising not only military, but also economic, social, information, political and other components. Moreover, the presence of a military component is not an imperative for waging a hybrid war. Hybrid warfare covers all the physical spheres – ground, air, ocean, near-Earth outer space, cyberspace,– can be waged both explicitly and covertly, and in the latter case, the "victim" is evident, while the "aggressor" sometimes remains concealed.

The following characteristic features of hybrid warfare are highlighted as the main: the use of information technologies, precision-guided weapons and ammunition, the growing involvement and increasing role of non-state armed actors, the psychological impact not only on the personnel

of the Armed Forces, but also on the senior leadership and the entire population of the opposing state, etc. In hybrid warfare, the national identity of the individual and society as a whole is directly or indirectly affected, and the main factors ensuring the economic and military development of the state and its strategic infrastructures, spiritual and moral values and traditions of the people, and socio-cultural principles are chosen as the subject of influence.

The analysis of theoretical research in the sphere of hybrid warfare and practice of waging such wars clearly shows that at present it is impossible to ensure national security without taking into account the threats generated with the use of high technologies and developing effective measures to counter them. At the same time, in ensuring their security and sustainable development the states should also rely on the efficiency of using high technologies that can not only change the forms and ways of warfare, but also transform the kinetic and non-kinetic aspects of war.

It is the high technologies that ensure:

– the improvement and expansion of the arsenal of means of struggle in modern wars, one of them being the hybrid warfare;
– the enhancement of possibilities of state and non-state actors to implement asymmetric impacts in the spheres traditionally subject to “symmetric” and direct impact;
– the ever-expanding use in the armed forces of the latest means and methods of struggle (both armed and unarmed), as a result of which this process cannot be ramped up to saturation, and therefore never accomplished;
– for economically underdeveloped states, the possibility of countering sharp imbalance with developed states through the consistent development and use of high-technology means, etc.

## HYBRID WARFARE AND ITS MANIFESTATIONS IN THE CONTEXT OF THE WEST – RUSSIA CONFRONTATION

*B. M. AGHADJANYAN, Colonel, Head, Center for Military Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA, A. M. SHAHVERDYAN, Colonel, Applicant, Chair of Political Science, Department of International Relations, YSU, Senior Lecturer, Center for Military Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA*

SUMMARY

Hybrid warfare takes an important place in conducting modern wars. At present, it is viewed as a synergic combination of instruments and methods of waging traditional (conventional) and non-traditional (non-conventional) wars – synchronized, mutually coordinated actions under a single concept, which are carried out in military, political, economic,

information, information-psychological and information-propaganda spheres, on land, in the air, at sea, in outer and cyberspace. In addition, the actions may cover all or some of these spheres and do not necessarily have to include the military component. Accordingly, the object of this war does not often even surmise that a war is being waged against them, and even more often – who is waging it.

The elements and methods of hybrid warfare are clearly manifested, in particular, in the sphere of confrontation between Russia and the West. The examples brought in the article show that since the mid-2000s this confrontation has taken on the character of a hybrid struggle, and in 2014, after the events in Ukraine, for the opposing parties it became an influential tool on the arena of international relations. The manifestations of hybrid warfare were also clearly displayed during the active phase of the Russian-Ukrainian armed conflict in 2022. Here, various forms and methods of waging this type of war are applied, including both information and psychological struggle against the adversary's population and personnel of its Armed Forces, as well as the military, political and economic components. Thus, the Russian-Ukrainian conflict is a striking example of applying various tools of hybrid warfare. Accordingly, the article attempts to highlight some of the manifestations of this struggle, which are mainly due to the use of soft power.

The consideration of this conflict is of particular interest to us, since before 2020 Artsakh war and throughout its entire duration, as well as after it, Azerbaijan per se waged and continues to wage a hybrid war against Armenia and Artsakh, the aftermaths of which are still observed today.

At the same time, with the end of the armed phase, it has not ceased, but simply passed into the political, information-propaganda and psychological spheres. The authors predict that the Turkish-Azerbaijani hybrid warfare unleashed against Armenia and Artsakh will continue even in the case of mediation initiatives taken in any format targeted at a possible Armenian-Azerbaijani reconciliation.

# ԼԵՌՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

*Ս. Ա. ՊԱՐԶՅԱՆ, պահեստազորի մայոր, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի համազորային պատրաստության ցիկլի դասախոս,*
*Ա. Ռ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի բժշկական ծառայության կազմակերպման և մարտավարության ամբիոնի ավագ դասախոս,*
*Լ. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պահեստազորի բ/ծ մայոր, բժշկական գիտությունների թեկնածու, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի ռազմադաշտային թերապիայի ամբիոնի դասախոս*



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը լեռնային երկիր է, որն առանձնանում է մեծ ուղղաձիգ գոտիականությամբ՝ 400-ից մինչև 4090 մ բարձրությամբ: Կլիման կրում է գերազանցապես այդ գոտիականության ազդեցությունը: Սահմանների մեծ մասն անցնում է լեռնային հատվածներով[1]:

Հայտնի է, որ լեռնային պայմանները, այդ թվում՝ կլիման, զգալի ազդեցություն են գործում մարդու առողջական վիճակի վրա՝ էապես նվազեցնելով նրա դիմացկունությունը, աշխատունակությունը, զգոնությունը, կողմնորոշվելու ունակությունը, առաջ են բերում «տեսողական խաբկանք» և այլ բացասական երևույթներ[2]: Այս հանգամանքը լուրջ խնդիրներ է դնում ծառայությանը զինծառայողներին (հատկապես՝ նորակոչիկներին) նման պայմաններում պատրաստելու առումով: Ուստի մարդու օրգանիզմի վրա լեռնային

---

* Հոդվածը նախնական տեսքով ներկայացվել է 25.09.2021: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 22.11.2022:

[1] Տես «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 13: Ե., 1987, էջ 29–33, 52–63, նաև՝ «Краткая географическая энциклопедия», т. 1. М. 1960, сс. 133–135:

[2] Տես, օրինակ, *Д. Г. Хачиров.* Исследования НИИ экологии человека горных территорий. «Аккредитация в образовании» (https://akvobr.ru/issledovanija_nii_ekologii_cheloveka_gornyh_territorii.html); *Ж. К. Муратов*. Влияние высокогорных факторов на организм человека (https://interactive-plus.ru/e-articles/201/Action201-16089.pdf); նաև՝ *Lester W. Grau and Hernán Vázquez*. Ground Combat at High Altitude. “Military Review”, January–February 2002 (https://community.apan.org/cfs-file/__key/docpreview-s/00-00-06-19-98/2002_2D00_01_2D00_01-Ground-Combat-at-High-Altitude-_2800_Grau-and-Vazquez_2900_.pdf):

պայմանների ներգործության մեխանիզմների իմացությունը անհրաժեշտ նախադրյալ է դրան հարմարվելու ճիշտ մեթոդաբանությունն ընտրելու (մշակելու) և զինծառայությունն օպտիմալ կերպով կազմակերպելու համար:

Ռազմական բնագավառում ընդունված է լեռների հետևյալ դասակարգումը՝ ցածր (500–1000 մ), միջին (1000–2000 մ), բարձր (2000 մ-ից ավելի): Համապատասխանաբար, առանձնացվում են նախալեռնային, լեռնային և բարձրլեռնային շրջանները:

Նախալեռնային շրջանին բնորոշ են առանձին բլուրներն ու բլրաշարքերը: Անձնակազմը կարող է հետիոտն կարգով տեղաշարժվել ցանկացած ուղղությամբ, հնարավոր է նաև ռազմական տեխնիկայի տեղաշարժը ճանապարհներով և դրանցից դուրս տեղանքով: Կլիմայավարժեցում հարկավոր չէ:

Լեռնային շրջանը բնորոշվում է խոր կիրճերով ու ձորերով, լեռնային գետերով ու հեղեղատներով կտրտված, բազմաթիվ գագաթներով լեռնաշղթաներով ու առանձին լեռներով: Գիշերվա և ցերեկվա ջերմաստիճանները խիստ կերպով տարբերվում են: Անձնակազմը հետիոտն կարգով կարող է տեղաշարժվել ցանկացած ուղղությամբ միայն հատուկ լեռնագնացական հանդերձանքի առկայության դեպքում: Անձնակազմը կարող է ազատ գործել միայն որոշակի կլիմայավարժեցումից հետո:

Բարձրլեռնային շրջանը ներկայանում է որպես խոտածածկ, ձյունածածկ ու սառցապատ զառիթափերով ու ժայռակերտ լանջերով լեռնային գոտի: Ջերմաստիճանը, կախված տարվա և օրվա ժամանակից, խիստ տարբեր է: Ճանապարհների թիվը շատ սահմանափակ է, ընդսմին դրանց զգալի մասը սայլուղիներ և գրաստի արահետներ են: Մարտական տեխնիկան կարող է կիրառվել միայն եղած ճանապարհների երկայնքով, ռազմական բեռները սովորաբար տեղափոխվում են գրաստներով: Անձնակազմը կարող է տեղաշարժվել միայն որոշակի ուղղություններով, եթե տիրապետում է լեռնային խոչընդոտների հաղթահարման տեխնիկային և զինված է հատուկ հարմարանքներով ու հանդերձանքով: Նրան անհրաժեշտ է լուրջ կլիմայավարժեցում[3]:

## ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆԻԶՄԻ ՎՐԱ

Հայաստանի Հանրապետությունը ծովի մակարդակից բարձր է 1830 մ միջին բարձրությամբ: Ձմեռն այստեղ սկսվում է լեռների բարձրադիր գոտում և աստիճանաբար իջնում է դեպի հովիտներ: Բարձրադիր գոտում ձմեռը դաժան է և տևում է տարեկան 5–6 ամիս՝ ուղեկցվելով հաստատուն և լայ-

[3] Տես *А. С. Колтунов, С. П. Черкасов, М. И. Фомичев, В. И. Проценко, В. В. Верпе, А. П. Мельник, А. В. Мельник, О. А. Крамарев.* Характеристика горной, горно-лесистой местности. «Тактика действий подразделений внутренних войск в горах и горно-лесистой местности». «Спецназ.орг» (http://spec-naz.org/preparation/taktiсheskaya_i_spetsialnaya_podgotovka/2459taktika_dejstvij_podrazdelenij_vnutrennih_vojsk_v_gorah_i_gorno_lesistoj_mestnosti/?SHOWALL_1=1):

նաշերտ ձնածածկույթով: Հաճախ են մառախուղները և ձնաբքերը: 2200–3000 մետր բարձրություններում ձմռանը ջերմաստիճանը միջինը –15°C է, ձյան ծածկույթի հաստությունը կարող է հասնել 50–70 սմ-ի: 3000 մետր և ավելի բարձրություններում ջերմաստիճանը կարող է նվազել մինչև –40°C-ի: Ձնածածկույթը կարող է հասնել 2 և ավելի մետրի: Ամենատաք ամիսներին միջին ջերմաստիճանը չի գերազանցում +10°C-ն[4]: Առավելագույն աստիճանի ամպամածություն դիտվում է ամռան սկզբին, իսկ ամենաքիչը՝ ձմռանը: Լեռներում յուրաքանչյուր բացարձակ գոտի ունի իր յուրահատուկ կլիման և եղանակային ռեժիմը: Ընդ որում, որքան բարձր են լեռները, այնքան կլիման խիստ է: Բարձրության համեմատ նվազում է նաև օդի խտությունը:

Թեև Երկիր մոլորակի մակերևույթի մի զգալի մասն զբաղեցնում են լեռները, սակայն հիմնականում մարդը բնակվել և բնակվում է ցածրադիր գոտիներում և նրա օրգանիզմն ընդհանուր առմամբ հարմարված չէ բարձրլեռնային պայմաններում ապրելուն և աշխատելուն: Ավելի բարձր տեղանքներ մարդու տեղափոխվելու դեպքում նրա օրգանիզմում կատարվում են որոշակի ֆիզիոլոգիական փոփոխություններ. նրա մտավոր և ֆիզիկական կարողությունները նվազում են, դիտվում է զանգվածի կորուստ, առաջանում է հոգեկան ընկճվածություն (դեպրեսիա)[5]:

Լեռները լի են կյանքին սպառնացող զանազան վտանգներով: Օրինակ՝ վտանգ են ներկայացնում ցրտահարությունը, մարմնի ջերմաստիճանի նվազումը՝ թերջերմությունը, մարդու օրգանիզմում թթվածնի պակասը: Նոսր մթնոլորտը չի կանխում ուլտրամանուշակագույն ճառագայթների ներթափանցումը մինչև Երկրի մակերևույթ, ինչն առաջացնում է համապատասխան հանդերձավորում չունեցող և պատրաստություն չանցած մարդկանց արևային այրվածքներ և ձյան կուրություն[6]:

Բարձրադիր տեղանքում մարդու օրգանիզմի վրա ազդեցությունը հիմնականում դրսևորվում է սիրտ-անոթային, մկանային, նյարդային համակարգերի գործունեության խանգարումներով[7]:

Մթնոլորտային օդի ճնշումը բարձրության համեմատ համամասնորեն նվազում է, նվազում են նաև օդի բաղադրությունը կազմող գազերի մասնակի ճնշումները[*]: 2000–2500 մ և ավելի բարձրություններում թթվածնի մասնակի ճնշման անկման հետևանքով մարդու օրգանիզմում առաջանում է

[4] Տես «Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն»: Ե., 1971, էջ 9, 30:

[5] Տես *Syed Ishfaq Ali.* Fangs of Ice: The Story of Siachen. Pak American Commercial, 1991:

[6] Տես *Ժ. Կ. Մուրատով,* Նշ. աշխ.:

[7] Տես նույն տեղում:

[*] Եթե նորմալ պայմաններում ծովի մակարդակում մթնոլորտային ճնշումը 760 մմ սնդիկի սյուն է, թթվածնի մասնակի ճնշումը՝ 160 մմ, ապա 5000 մ բարձրության վրա, որտեղ մթնոլորտային ճնշումը հավասար է 405 մմ-ի, թթվածնայինը նվազում է մինչև 85 մմ, այսինքն՝ գրեթե 2 անգամ: Յուրաքանչյուր 100 մ բարձրանալու դեպքում օդի ջերմաստիճանը նվազում է միջինը 0,6°-0,7° C-ով, մթնոլորտային ճնշումը՝ 8-10 մմ-ով, օդի խտությունը՝ 1,2 %-ով:

թերթթվածնություն, կամ այսպես կոչված «թթվածնաքաղց»[8]: Թթվածնաքաղցի հետ մեկտեղ դիտվում են նաև այլ հիվանդագին երևույթներ՝ ֆիզիկական հոգնածություն, ճնշման բարձրացում, օրգանիզմի ջրազրկում, հաճախակի են տարաբնույթ վնասվածքներն ու կոտրվածքները: Եվ եթե պատեհաժամորեն չձեռնարկվեն ֆիզիոլոգիական տեսակետից ճիշտ միջոցներ, մեծ հավանականությամբ կզարգանան բարդություններ, ինչն էլ ավելի կվատթարացնի տուժածի վիճակը: Ի դեպ, 2019 թ. մի խումբ հետազոտողներ այսպես կոչված «մոլեկուլային փոխարկչի» հայտնագործության համար արժանացել են բժշկական գծով գլխավոր գիտական Նոբելյան մրցանակի: Արևմուտքում այդ անվանումն է ստացել թթվածնի հետ բջիջների փոխազդեցությունը, որի շրջանակում դրանք կարողանում են պարզորոշել թթվածինը և հարմարվել դրա մակարդակի փոփոխությանը՝ մեծացնելով (թթվածնի պակասի դեպքում) կամ նվազեցնելով (թթվածնի մեծ քանակության դեպքում) այն հատուկ սպիտակուցների արտադրությունը, որոնք արձագանքում են թերթթվածնությանը[9]: Բարձրություններում արյան մեջ թթվածնի պակասը մարդու օրգանիզմում առաջ է բերում մի շարք փոփոխություններ: Մկանային համակարգի աշխատանքի ազդեցության հետևանքով արագանում են անոթազարկերը: Սիրտը, ինքնաբերական (ռեֆլեկտիվ) կերպով մեծացնելով իր աշխատանքի ռիթմը, կարծես, փորձում է արյան արագընթաց հոսքով փոխհատուցել թթվածնով արյան նվազ հագեցածությունը: Դրա հետ մեկտեղ, շնչառությունը դադարում է հավասարաչափ լինելուց:

Եթե ցածրադիր վայրերում ոչ շատ ծանր ֆիզիկական աշխատանք կատարելիս զարկերակի զարկերի թիվը առաջին րոպեներին աճում է մոտ 6-ով, ապա բարձրություններում այն կարող է ավելանալ 20-ով և ավելի թվով: Թոքերն սկսում են պակաս թթվածին կլանել, ինչի հետևանքով արյան մեջ թթվածնի պակաս է առաջանում: Եվ քանի որ օրգաններին թթվածնի մատակարարումը դառնում է անբավարար, շնչառությունը և սրտի աշխատանքը հաճախակիանում են, որպեսզի համակշռեն այդ պակասը, առաջանում է հիվանդագին վիճակ, այսպես կոչված, «**լեռնային հիվանդություն**»*:

Լեռնային հիվանդությունը մարդկությանը հայտնի է եղել դեռ մեր թվարկությունից առաջ 4–3-րդ դարերում: Այս հիվանդության ախտանշաններն են՝ գլխացավը, տհաճության զգացումը, գլխապտույտը, ախորժակի կորուստը,

[8] Տես *Л. Д. Мальцева.* Гипоксия: механизмы развития (https://ppt-online.org/291441); *О. Д. Константинова, А. Н. Тиньков, С. К. Кшнясева.* Гипобарическая гипоксия в комплексном лечении постовариэктомического синдрома. «Российский вестник акушера-гинеколога», 2010, № 4 (https://www.mediasphera.ru/issues/rossijskij-vestnik-akushera-ginekologa/2010/4/downloads/ru/031726-61222010411):

[9] Տես *Мария Недюк, Анна Урманцева.* Кислородное попадание: нобелевку по медицине дали за изучение гипоксии. «Известия», 7 октября 2019 (https://iz.ru/929557/mariia-nediuk-anna-urmantceva/kislorodnoe-popadanie-nobelevku-po-meditcine-dali-za-izuchenie-gipoksii):

* Ռուսերենում և անգլերենում գործածվում է նաև «բարձունքային հիվանդություն» տերմինը, համապատասխանաբար՝ «высотная болезнь» և “altitude sickness”:

սրտխառնոցը, փսխումը և քնի խանգարումը: Ձեռքերն ու ոտքերը կարող են զգալիորեն ուռչել: Տվյալ ախտանշաններն ի հայտ են գալիս 2000-2500 մետր և ավելի բարձրանալուց 4-6 ժամ անց: Վերելքը դադարեցնելու դեպքում սույն ախտանշանները սովորաբար մեկ կամ երկու օրվա ընթացքում անհետանում են[10]:

Ընդհանուր առմամբ, լեռնային հիվանդության ախտանիշները կախված են մարդու առողջական վիճակից, նրա գտնվելու բարձրությունից, այդ բարձրությանը հասնելու արագությունից և այնտեղ գտնվելու ժամանակից:

Մասնավորապես՝ թույլ կերպով արտահայտված ախտանշանները ի հայտ են գալիս տվյալ բարձրության հասնելուց հետո 12-24 ժամից և անցնում են 1–2 օրից, երբ մարմինը կարգավորվում է ըստ բարձրության և ներառում՝ գլխապտույտ, հոգնածություն և էներգիայի կորուստ, շնչահեղձություն, ախորժակի կորուստ և քնի հետ կապված պրոբլեմներ: Միջին մակարդակի դրսևորումներն ավելի ինտենսիվ են և վիճակը վատթարացնում են ավելի երկար ժամանակով՝ ներառելով ավելի մեծ հոգնածություն, թուլություն և շնչահեղձություն, կողմնորոշման ու քայլելու դժվարացում, տհաճ զգացողություն, սրտխառնոց, փսխում, կրծքավանդակում ծանրության զգացողություն և արյունատար անոթների խցանում, կանոնավոր շարժումներ ու գործողություններ կատարելու դժվարացում, թեև մարդուն թվում է, թե ինքը ազատ կերպով կարող է դա անել: Ծանր դրսևորումները վկայում են, որ ստեղծվել է արտակարգ դրություն, որի պայմաններում ախտանշանները նման են միջին մակարդակի ախտանշաններին, սակայն շատ ավելի ուժեղ և ինտենսիվ են, ուստի պահանջում են անհապաղ բժշկական օգնություն: Դրանք են շնչահեղձությունն անգամ հանգիստ վիճակում, քայլելու անկարողությունը, խունացած ու շփոթությունը, ուղեղի կամ թոքերի այտուցները դրանցում հյուսվածքային հեղուկի կուտակման հետևանքով[11]: Բարձրաբերձության պայմաններում օրգանիզմում տեղի ունեցող ախտաբանական (պաթոլոգիական) կենսընթացների արագությունն զգալիորեն մեծանում է: Օրինակ՝ թոքերի և գլխուղեղի այտուցները արդեն մի քանի ժամ հետո կարող են ավարտվել մահով[12]: Վերելքը շարունակելու դեպքում լեռնային հիվանդությունը մեծ հավանականությամբ կհանգեցնի մահվան:

Լեռնային հիվանդության զարգացումը կախված է՝

- սեռից (կանայք ավելի լավ են դիմանում թերթթվածնությանը),

---

[10] Տես *Т. В. Жучкова.* Горная болезнь: признаки и симптомы, причины. «Видаль. Медицинская энциклопедия» (https://www.vidal.ru/encyclopedia/terapiya/gornaya-bolezn); “Altitude Sickness”. “Cleveland Clinic” (https://my.clevelandclinic.org/health/diseases/15111-altitude-sickness):

[11] Տես “Altitude Sickness” (https://my.clevelandclinic.org/health/diseases/15111-altitude-sickness):

[12] Տես «Горная болезнь – это не шутка!». «АльпИндустрия», 15 октября 2014 (https://alpindustria.ru/articles/gornaya-bolezn.html):

- տարիքից (որքան ավելի երիտասարդ է մարդը, այնքան ավելի վատ է տանում հիվանդությունը),
- ընդհանուր ֆիզիկական պատրաստության աստիճանից և հոգեկան վիճակից,
- բարձրանալու արագությունից,
- նախկինում ունեցած «բարձունքային» փորձից,
- լեռների աշխարհագրական տեղադիրքից (Հիմալայներում 7000 մ բարձրության բացասական ազդեցությունն ավելի փոքր է, քան Էլբրուսի 5000 մ-ը):

Մեծ բարձրություններում գլխուղեղի կամ թոքային այտուցների ամենակարևոր բուժումը պարզ և արդյունավետ է. պետք է կատարել արագ վայրէջք, անհրաժեշտության դեպքում՝ տարահանում առնվազն 1000 մետր բարձրության: Թթվածինը նույնպես կարող է օգտակար լինել[13] (ամեն դեպքում, որոշում պետք է կայացնի բժիշկը):

Սկզբունքորեն, սուր լեռնային հիվանդության և մեծ բարձրություններում ուղեղային ու թոքային այտուցների ռիսկը կարող է նվազեցվել կլիմայավարժեցման և դանդաղ վերելքի շնորհիվ: Վերելքի արագությունը շատ ավելի կարևոր է, քան հաղթահարվող բարձրությունը կամ մարզավիճակը:

## ԼԵՌՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՕՐԳԱՆԻԶՄԻ ՀԱՐՄԱՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Գիտության, հատկապես՝ բժշկագիտության զարգացման շնորհիվ ապացուցվել է, որ մարդու օրգանիզմն ունի շրջակա միջավայրի փոփոխվող պայմաններին հարմարվելու կարողություն: Հարմարումն ընդգրկում է օրգանիզմի բոլոր տեսակների՝ բնածին և ձեռքբերովի, գործունեությունը՝ բջջային, օրգանային, համակարգային և ամբողջ օրգանիզմի մակարդակներում տեղի ունեցող կենսընթացներով հանդերձ[14]:

Սովորաբար բարձրություններին հարմարումը տեղի է ունենում աստիճանաբար: Տվյալ բարձրությունում հինգից յոթ օր մնալուց հետո մարդու օրգանիզմն սկսում է հարմարվել նոր պայմաններին, ինչը հայտնի է որպես կլիմայավարժում: Առաջին հերթին մեծանում է թթվածնի տեղափոխման արդյունավետությունը: Արյան մեջ պարունակող թթվածնի նվազման պատճառով երիկամները արտադրում են էրիտրոպոետին հորմոնը, որը խթանում է էրիթրոցիտների (արյան կարմիր բջիջների) արտադրությունը: Էրիթրոցիտների թիվն աճում է, և ընդհանուր առմամբ աճում է նաև թթվածնի կլանումը:

Բարձրությանը հարմարվելու մեկ այլ երկարաժամկետ միջոց վերաբերում է հիմնաթթվային հաշվեկշռին: Գերօդափոխության (հիպերվենտիլացիա) պատճառով օրգանիզմը կորցնում է ածխաթթու գազը, որն արյան մեջ

---

[13] Տես “Altitude Sickness” (https://my.clevelandclinic.org/health/diseases/15111-altitude-sickness):

[14] Տես *Олег Янчевский.* Проблемы акклиматизации в горах (http://www.mountain.ru/article/article_display1.php?article_id=3777):

գործում է որպես թթու: Դրա հետևանքով արյան հիմնաթթվային հաշվեկշիռը խախտվում է, քանի որ հիմնայնությունը (PH) մեծանում է[15]:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ իրենց կյանքի մի զգալի մասը լեռնային շրջաններում, 2100 մ և ավելի բարձրությամբ, և ցածրադիր գոտիներում ապրած մարդկանց օրգանիզմներում կան մի շարք տարբերություններ, ինչպիսիք են՝ լեռնաբնակների թոքերի ավելի մեծ ծավալը, շնչառության ավելի ցածր հաճախականությունը, նրանց արյան մեջ էրիթրոցիտների բավական մեծ թիվը, որը ավելի ցածր վայրեր տեղափոխվելուց հետո տասն օրվա ընթացքում նվազում է, և քանի որ դրանք արյան մեջ տեղափոխում են թթվածինը, ուրեմն և հեմոգլոբինը, ապա դա հնարավորություն է տալիս, որ թթվածինը ավելի արդյունավետ կերպով հասցվի օրգաններին և հյուսվածքներին[16]: Ընդսմին օրգանիզմում կլիմայավարժվածությունը կարող է պահպանվել մի քանի շաբաթ՝ կախված այդ օրգանիզմի առանձնահատկությունից[17]: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ այն արագությունը, որով օրգանիզմը կորցնում է բարձրլեռնային պայմանների նկատմամբ իր հարմարվողականությունը, խիստ անհատական է, ճիշտ այնպես, ինչպես դժվար է ասել, թե ով կունենա լեռնային հիվանդության ախտանիշ, կամ որքան կտևի լեռնային պայմաններին օրգանիզմի ընտելացած վիճակը, երբ մարդ իջնում է բարձրլեռնային գոտուց: Հարկ է նաև նկատի ունենալ, որ եթե մարդը մեկ-երկու օրից քիչ է գտնվում բարձրլեռնային պայմաններում, ապա նրա օրգանիզմը չի ունենում բարձրությանը հարմարվելու բավականաչափ ժամանակ[18]:

Օրգանիզմում արյան կազմը փոխվում է, երբ մարդը մոտ 2 շաբաթ գտնվում է միևնույն բարձրության վրա: Հարմարման ժամանակը պետք է ավելացվի բարձրության աճման համեմատ: Այսպես. 2000-2500 մ բարձրություններում հարմարումը տևում է 14 օր, 2500–4000 մ բարձրություններում՝ 28 օր, 4000 մ և ավելի բարձրություններում լիարժեք հարմարումը հնարավոր է 14 ամիս այնտեղ շարունակաբար մնալուց հետո[19]: Բարձրլեռնային պայմաններին մարդու օրգանիզմի հարմարումն սկսվում է այնտեղ հասնելուց 3-4 օր անց: Դիտարկումները և փորձը ցույց են տալիս, որ ֆիզիկապես

[15] Տես «Гипервентиляция». «Словарь по естественным наукам. Глоссарий.ру» (http://www.glossary.ru/cgi-bin/gl_exs2.cgi?RAqyoig.o9):

[16] Տես *Дмитрий Лебедев.* Высотная адаптация. Как человеческий организм приспосабливается к жизни в горах, 14.12.2016 (https://nauka.tass.ru/sci/6821550):

[17] Տես *Lawrence E. Armstrong.* Performing in Extreme Environments. University of Connecticut, 2000, PP. 183–195:

[18] Տես *К. К. Платонов.* Человек в полете. М., 1957, сс. 28, 43, 46, 52, 53, 54, 66, 67, 68 (https://bookree.org/reader?file=480520&pg=1); նաև՝ «Жители высокогорий на 12-17 % реже умирают от инсультов», 30.09.2021 (https://nauka.tass.ru/nauka/12542317):

[19] Տես *Dan Graetzer.* High Altitude and its Effects on Exercise Performance (http://www.sumeria.net/oxy/altitude.html):

առողջ մարդու (մեր դեպքում՝ զինծառայողի) օրգանիզմը կարող է հարմարվել ցրտին մոտ 3 շաբաթում, բարձրլեռնային պայմաններին՝ մոտ 2 շաբաթում: Հարմարման փուլում օրգանիզմը կուտակում է լրացուցիչ էրիթրոցիտներ, ինչի շնորհիվ հնարավոր է լինում տեղափոխել անհրաժեշտ քանակով թթվածին[20]: Այստեղ պետք է անպայմանորեն հաշվի առնել հետևյալ հանգամանքը: Քանի որ լեռներում զինծառայությունը տևում է երկար ժամանակ, պետք է անձնակազմի հարմարեցումը կազմակերպել ոչ թե լեռնագնացների՝ կարճ ժամանակում բարձրանալ-իջնելու ժամանակացույցին համապատասխան, այլ ըստ տվյալ փաստի:

Լեռներում զինծառայությանը անձնակազմի նախապատրաստումը պետք է կազմակերպել մարտական գործողությունների ծավալման հնարավորության հաշվառմամբ: Լեռնային պայմաններում ծեռնարկվող մարտական գործողությունները ոչ միայն խիստ պահանջներ են ներկայացնում անձնակազմի ֆիզիկական ու բարոյահոգեբանական վիճակին, այլև բնորոշվում են օպերատիվ-մարտավարական յուրահատկություններով[21]: Բանն այն է, որ նման տարածքում որոշակի փոփոխությունների կարող է ենթարկվել նաև ՍՌՏ-ն: Այսպես. նվազում են ռազմական տեխնիկայի մարտական կարողությունները, զգալի փոփոխություններ են առաջանում սպառազինության բալիստիկական բնութագրերում: Ուստի հրաձգության ժամանակ հրաձիգը պետք է հաշվի առնի նշանառության և կրակոցի ճշգրտության վրա ծովի մակերևույթից իր բացարձակ բարձրությունը, և դրա հետ կապված մթնոլորտային պայմանների փոփոխությունը (օպտիկական խաբկանքը, օդի նոսրությունը և ջերմաստիճանի գործոնները, քամու ուղղությունը և այլն)[22]:

Լեռներում տեղանքի մեծ կտրտվածության և մեծ մակերեսով ռադիոանդրադարձնող բնական խոչընդոտների առկայության պատճառով դժվարանում է անխափան կապի ապահովումը և նվազում է դրա օգտագործման արդյունավետությունը: Լեռնային պայմանները նվազեցնում են ստորաբաժանումների և առանձին զինվորների շարժման արագությունը և սահմանափակում տարաշարժը: Լեռներում մարտը մղվում է ապակենտրոնացման եղանակով՝ ջոկի կամ դասակի մակարդակով: Այս դեպքում մեծ կարևորություն է ստանում կրտսեր հրամանատարական կազմի մասնագիտական պատրաստության որակը:

[20] Տես *А. С. Шаназаров.* Оценка эффективности адаптации к длительной профессиональной деятельности в условиях высокогорного биоклиматического дискомфорта и способы ее оптимизации. Автореферат диссертации на соискание ученой степени доктора медицинских наук. Бишкек, 1999 (https://medical-diss.com/medicina/otsenka-effektivnosti-adaptatsii-k-dlitelnoy-professionalnoy-deyatelnosti-v-usloviyah-vysokogornogo-bioklimaticheskogo-di):

[21] Տես, օրինակ, *Алексей Олейников.* Война в горах и природные явления. «Warspot», 4 июля 2014 (https://warspot.ru/468-voyna-v-gorah-i-prirodnye-yavleniya):

[22] Տես «Մոտոհրաձգային զորքերի դասագիրք», մաս 3, 1996 թ. հուլիսի 25-ի թիվ 307 հրաման, էջ 117, 136:

Ուստի բարձրլեռնային պայմաններում հրամանատարներից պահանջվում են ավելի մեծ զգոնություն, իրենց ենթակաների հոգեկան և ֆիզիկական հոգնածությունը ժամանակին նկատելու ունակություն: Նրանք պետք է իմանան, որ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այնպիսի երևույթների վրա, ինչպիսիք են միայնության ակնհայտ ձգտումը, ընկճախտը, տրամադրության կտրուկ փոփոխությունները: Բարձրլեռնային տեղանքում նկատվող ախորժակի կորուստն ազդում է ստորաբաժանման անձնակազմի մարտունակության, ֆիզիկական վիճակի և մարտական ու բարոյական ոգու վրա:

Տարիներ շարունակ կատարվող ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տվել մշակելու բարձրլեռնային պայմանների բացասական ազդեցությունը նվազեցնելու և դրանց հարմարումն արագացնելու համար որոշ հանձնարարականներ: Այսպես. խորհուրդ է տրվում խմել հնարավորինս շատ հեղուկ՝ բացառությամբ ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև սուրճի, մուգ թեյի և օրգանիզմի տոնուսը բարձրացնող այլ հեղուկների: Ծխելը ևս համարվում է անցանկալի: Սիրտ-անոթային կամ թոքերի հիվանդություններով անձինք պետք է 2000 մետրից ավելի բարձրություններում մնալուց առաջ խորհրդակցեն բժշկի հետ, քանի որ որոշ դեպքերում դա կարող է լինել վտանգավոր: Առանձնակի զգուշավոր պետք է լինեն այն անձինք, որոնք վերջին երեք ամսվա ընթացքում տարել են սրտի կաթված կամ ինսուլտ, անկայուն անգինա պեկտորիս կամ տառապում են թրոմբոզով, սրտի միջին կամ ծանր անբավարարությամբ, ծանր կամ չվերահսկվող ասթմայով և այլ քրոնիկական հիվանդություններով[23]:

Քանի որ լեռներում գտնվելու երկրորդ շաբաթվանից է միայն սկսվում հարմարումը, հատուկ ուշադրության է արժանի սնունդը: Հարկավոր է հետևել նախապես մշակված որոշակի սննդակարգի, թեև լեռնային պայմաններում երկարատև մնալու դեպքում հնարավոր չէ անընդհատ պահպանել դիետիկ սննդակարգ: Մինչդեռ մարդու օրգանիզմում ընդունված սննդի 5 %-ն է միայն վերածվում էներգիայի, որն օգտագործվում է օրգանիզմի կենսագործունեության ապահովման վրա, իսկ 95 %-ը վերածվում է ջերմության: Եթե սովորական պայմաններում օրգանիզմի բնականոն աշխատանքի համար զինծառայողին պետք է լինում օրական 3000–4000 կկալ, ապա լեռներում այդ թիվը հասնում է 5000–6000-ի, քանի որ որքան մեծ ֆիզիկական աշխատանք է կատարվում, այնքան օրգանիզմում արագանում է նյութափոխանակությունը, ուստի և հարկավոր են ավելի շատ կալորիաներ[24]:

Այս ամենը կարևորելով՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների սննդի օրական

[23] Տես *Annemarie Schmitgen.* Anpassung an mittlere und größere Höhen. Institut für Sportwissenschaft Universität Bayreuth, 2007-2008:

[24] Տես *Ахмет Алдашевич Алдашев.* Питание и высокогорье. Алма-Ата, 1983; նաև՝ ՀՀ Կառավարության 2021 թ. հուլիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թ. դեկտեմբերի 3-ի հմ. 1456-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հմ. 1154-Ն որոշումը (https://www.arlis.am/documentview.aspx?docid=154481):

չափաքանակները սահմանելիս առանձին ուշադրության են արժանացել ծովի մակերևույթից 2000 մետր և ավելի բարձր տեղաբաշխված զորամասերի զինծառայողները, որոնց լրացուցիչ հատկացվում են կիսաապխտած կամ ապխտած երշիկեղեն, ճարպ, թխվածքեղեն (բլիթներ), խտացրած կաթ՝ շաքարով[25]:

Որպեսզի արագացվի տեղանքին նոր ժամանած անձնակազմի հարմարումը, անհրաժեշտության դեպքում կարելի է օգտագործել վիտամիններ, ամինաթթուներ, միզամուղ դեղամիջոցներ, ծայրամասային անոթալայնիչներ: Դրանք մեծացնում են լեռներում գտնվող անձնակազմի աշխատունակությունը, արագացնում ուժերի վերականգնումը[26]:

Բարձրլեռնային տարածքում կարևորվում է նաև քնի ռեժիմը: Ընդհանուր առմամբ, քունը բարձունքում չի տարբերվում ցածրադիր վայրերում քնից: Սակայն հանդիպում են նաև քնի ընդհատումներ, որոնց պատճառը շնչառական տպավորությունն է: Խոր քնի համեմատությամբ մեծ է լինում թեթև քնի բաժինը: Բարձր տեղանքում քնին առավելապես բնորոշ է Չեյնե-Ստոքսի շնչառությունը[*]: Միջին և մեծ բարձրություններում խռմփոցը և ապնոէն[**] ուժեղանում են: Սա կարևոր է հաշվի առնել այն մարդկանց դեպքում, որոնք ունեն շնչառական համակարգի և քնի խանգարումներ:

Ցրտի ժամանակ օրգանիզմը ոչ միայն ջերմությունը պահպանում է ջերմափոխանակման նվազեցմամբ, այլև սկսում է արտադրել ավելի մեծ քա-

---

[25] Տես ՀՀ Կառավարության 2021 թ. հուլիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թ. դեկտեմբերի 3-ի հմ. 1456-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հմ. 1154-Ն որոշումը (https://www.arlis.am/documentview.aspx?docid=154481):

[26] Տես *А. С. Солодков, В. П. Ганапольский, А. Н. Ятманов, П. Д. Шабанов, В. Ф. Лопатина.* Фармакологические препараты, способствующие ускорению адаптации спортсменов, в условиях горной местности. «Ученые записки Университета им. П. Ф. Лесгафта». СПБ, 2014, № 11 (http://lesgaft-notes.spb.ru/ru/node/6882):

[*] Շնչառության տարատեսակ, որի դեպքում նկատվում են դրա հաճախականության պարբերական տատանումներ. մի քանի խոր ներշնչումներին հետևում է շնչառության կանգ, որից հետո կրկին ծագում են խոր շնչառական շարժումներ: Նկատվում է գլխուղեղի շնչառական կենտրոնների զգայնությունը կորցրած (հատկապես՝ կոմայում գտնվող) հիվանդների օրգանիզմում, ինչպես նաև թունավորման դեպքում (տես *Սիլվա Ամիրյան, Արտաշես Մարտիրոսյան*, Ֆիզիոլոգիական տերմինների հայերեն-անգլերեն-ռուսերեն բառարան-տեղեկատու: Ե., 2013):

[**] Քնի ապնոէն քնի խանգարում է, որին բնորոշ են քնի ժամանակ շնչառական դադարները կամ անբավարար շնչառական դրվագները (էպիզոդները): Յուրաքանչյուր կանգ տևում է մի քանի վայրկյանից մինչև մի քանի րոպե: Մեկ գիշերվա ընթացքում այդպիսի դրվագները կարող են բազմիցս կրկնվել: Առավել տարածված է շնչականգերի զուգակցումը բարձրաձայն խռմփոցի հետ: Շնչառության վերականգնումն ուղեկցվում է խեղդոցի կամ փնչոցի նման ձայներով: Քանի որ խանգարումը նպաստում է քնի ընդհատումներին, այս խնդրով տառապող հիվանդները, սովորաբար, լինում են քնկոտ կամ ամբողջ օրն ունենում են հոգնածության զգացում (տես “Sleep Apnea: What Is Sleep Apnea?”. “National Heart, Lung, and Blood Institute”, 24 March 2022 (https://www.nhlbi.nih.gov/health/sleep-apnea)):

նակությամբ ջերմություն: Երբ մարդը մրսում է, առաջանում է դող, նա սկսում է ձեռքերով կատարել ինտեսիվ շարժումներ, թռվռալ, տեղում արագ դոփել և այլն` դրանով մեծացնելով մկանների աշխատանքը, ինչն ուղեկցվում է օրգանիզմում լրացուցիչ ջերմության առաջացմամբ` ջերմագոյացմամբ: Սակայն սաստիկ ցրտի, կամ սառնամանիքի, ժամանակ օրգանիզմի տվյալ պաշտպանական գործառույթները բավարար չեն: Աշխատունակությունը չկորցնելու և չցրտահարվելու համար պետք է ցրտից պաշտպանված լինել հատուկ հանդերձանքով, որը նախատեսված է բարձրլեռնային տեղանքի համար:

Զինծառայողների համար նախատեսված հատուկ լեռնային հանդերձանքն ունի բավական երկար տարիների կիրառման պատմություն: Դրան ներկայացվում էին հետևյալ հիմնական պահանջները. այն պետք է լիներ ամուր, փափուկ, ազատ, որ չկաշկանդեր լեռներում մարտիկի տեղաշարժը, և բավականաչափ տաք[27]: Օրինակ` Վերմախտի լեռնային հրաձիգների համապատասխան լեռնային հանդերձանքում կային հատուկ վերնազգեստ` անորակ[*], որին ծնոտը տակից փակցվում էր մորթե բաճկոնակ, ոռմզդեղնի կաշվից և ամուր կտորից կարված հատուկ լեռնային տաբատ` սպիտակ գույնի քողարկիչ զգեստներ, լեռնային կիսաճտքավոր կոշիկներ, որոնց ներբաններին ամրացված էին երկաթե ճանկեր` սառույցի վրայով քայլելու համար նախատեսված երկաթե հարմարանքներ, լեռնացուպ[**] և այլն[28]:

---

[27] Տես «Обмундирование войск для действий в горах». Энциклопедия «Форменная одежда и снаряжение: Forma-Odezhda» (https://forma-odezhda.com/encyclopedia/obmundirovanie-vojsk-dlya-dejstvij-v-gorah/):

[*] Անորակ *(anorak, анорак).* Խիտ գործվածքից կարված թեթև հողմապաշտպան բաճկոն (կուրտկա), որն ուներ գլխանոց (ամրացված ծալովի կնգուղ) և հագնվում էր գլխի կողմից, քանի որ առջևի մասում չկար կտրվածք: – *Խմբ.:*

[**] Լեռնացուպ *(alpenstock (գերմ.); альпеншток).* մոտավորապես 2 մ երկարությամբ ցուպ, որը նախատեսված է լեռներում գործածելու համար. ծայրը պողպատյա է, իսկ բռնակի մոտ հիմնականում ունենում է գոտենման կապիչ, որով լեռնացուպը ամրացվում է ձեռքին: Ժամանակի ընթացքում ալպենշտոկը ենթարկվել է որոշակի արտաքին փոփոխությունների:

[28] Տես *Илья Мощанский, Андрей Каращук.* Горная война. В горах Кавказа. Военные альпинисты СССР и Германии. Июль 1942 – февраль 1943 г. М., 2007, сс. 2–11, նաև` «Брюки, шинели, сапоги и ботинки Вермахта». Энциклопедия «Форменная одежда и снаряжение: Forma-Odezhda» (https://forma-odezhda.com/encyclopedia/bryuki-shineli-sapogi-i-botinki-vermahta/); «Специальное обмундирование горнострелковых войск». «Экспедиционная одежда за рубежом. Исторический обзор» (http://geolmarshrut.ru/expedition_clothing_abroad_historical_review/special_ uniforms_mountain_troops/):

*(շարունակությունը հաջորդ համարում)*

# ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

*Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, պահեստազորի գնդապետ,*
*Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, ավագ լեյտենանտ, Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մայոր,*
*Թ. Դ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, ավագ լեյտենանտ, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր,*
*Ք. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր*

## ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

անձնակազմ – 1. личный состав, 2. экипаж – 1. personnel, 2. crew

ապստամբականություն – повстанчество – rebelliousness

արդյունարարություն – результативность – performance

արտակմախք – экзоскелет – exoskeleton

բաժնաչափություն – дозиметрия – dosimetry

բով – горнило – crucible

գերօդափոխություն – гипервентиляция – hyperventilation

գիտութենակենտրոն պատերազմ – наукоцентричная война, знаниецентричная война – knowledge-centric warfare

զինհաշվառումային մասնագիտական հմտություններ – навыки военно-учетной специальности – military occupational specialty skills

ընկճախտ – психологическая депрессия – mental depression

թերթթվածնություն – гипоксия, кислородное голодание – hypoxia, oxygen lack

թթվածնաքաղց – տես *թերթթվածնություն*

թթվայնություն – кислотность – acidity

ինքնապահպանման բնազդ – инстинкт самосохранения – instinct for self-preservation

խանգարումների արտադիր (հակառակորդի թիկունքում) հաղորդիչ – заброшенный (в тыл противника) передатчик помех – inserted jammer transmitter

ծրագրահեն – хакер – hacker

կապուղու թողունակություն – пропускная способность канала – transmission capacity, channel capacity

կատարողականություն – 1. выполняемость, 2. исполнительство – performance

կարգախոս – девиз – watchword

կարգապահություն – дисциплина – discipline

կարգասիրություն – дисциплинированность – discipline

կլիմայավարժեցում – акклиматизирование – acclimatization

կլիմայավարժվածություն – акклиматизированность – acclimatization

կլիմայավարժում – акклиматизация – acclimatization

կոչում շնորհելու արարողություն – церемония присвоения звания – induction ceremony

հակազդեցություն – противодействие – opposition, counteraction

հակազդում – реагирование, реакция – reaction

համազգեստի պատիվ – честь мундира – esprit de corps

հավատամք – кредо – creed
հարմարվողականություն – адаптируемость – adaptability
հիմնայնություն – основность – basicity
հյուծում – истощение, измор – exhaustion, attrition
մարտարշավ – рейд – raid, foray
միջնորդավորված պատերազմ – опосредованная война, прокси-война – proxy war
միջտեսակային հետախուզախոցող համակարգ – межвидовая разведывательно-поражающая система – interspecific reconnaissance and destruction system
մտածողություն – мышление, менталитет – mentality, mindset
մտային ոլորտ – мыслительная сфера – mental sphere
ներքին մղում – внутренний порыв – internal drive
ոգի – дух – spirit
– բարոյական ոգի – моральный дух – morale
– մարտական ոգի – боевой дух – morale
պատերազմավարություն – տես *ռազմական ռազմավարություն*
պատրաստակամություն – готовность – willingness
պատրաստություն – готовность – readiness
պետության սահմանակարգ – институт государственности – government institution
ռազմական ռազմավարություն – военная стратегия, искусство ведения войны – military strategy
ռազմերթ – марш – march
սերժանտ – сержант – noncommissioned officer, NCO, sergeant
սպառնալիքների որոշարկում – определение угроз, детерминирование угроз – threat identification
ստորաբաժանման հիմնական առաջադրանքների ցանկ – перечень основных заданий подразделения – mission-essential task list
վարքականոն – 1. кодекс, 2. этикет – ethos
վերահաղորդիչ կայան – ретрансляционная станция – radio relay station, retransmission station
տարաշարժուն խումբ – маневренная группа – maneuver group
տեղափակում – локализация – localization, containment
տեղեկատվական ընդդիմամարտություն – информационное противоборство – information confrontation
տեղեկույթի կառուցավորում – структурирование информации – information structuring
տիրույթների փոխշփում – интерфейс диапазонов – interface
ցամաքային մարտական գործողություն – сухопутное боевое действие – ground combat
ուղեվարաժամանակային ապահովում – навигационно-временно́е обеспечение – navigation and timing
ուսման ծախսերի հատուցում – компенсация затрат на обучение – tuition reimbursement
քայլերգ – марш – march
օպտիկաթելքային մալուխ – оптиковолоконный кабель – fiber cable, fiber optic cable
օրինագիրք – кодекс – code

## ՌՈՒՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

адаптируемость – հարմարվողականություն
акклиматизация – կլիմայավարժում
акклиматизирование – կլիմայավարժեցում
акклиматизированность – կլիմայավարժվածություն
внутренний порыв – ներքին մղում
военная стратегия – ռազմական ռազմավարություն, պատերազմավարություն
выполняемость – կատարողականություն
гипервентиляция – գերօդափոխություն
гипоксия – թերթթվածնություն, թթվածնաքաղց
горнило – բով
готовность – 1. պատրաստություն, 2. պատրաստակամություն
девиз – կարգախոս
детерминирование угроз – см. *определение угроз*
дисциплина – կարգապահություն
дисциплинированность – կարգասիրություն
дозиметрия – բաժնաչափություն
дух – ոգի
– боевой дух – մարտական ոգի
– моральный дух – բարոյական ոգի
заброшенный (в тыл противника) передатчик помех – խանգարումների արտադիր (հակառակորդի թիկունքում) հաղորդիչ
знаниецентричная война – см. *наукоцентричная война*
измор – см. *истощение*
инстинкт самосохранения – ինքնապահպանման բնազդ
институт государственности – պետության սահմանակարգ
интерфейс диапазонов – տիրույթների փոխշփում
информационное противоборство – տեղեկատվական ընդդիմամարտություն
искусство ведения войны – см. *военная стратегия*
исполнительство – կատարողականություն
истощение – հյուծում
кислородное голодание – см. *гипоксия*
кислотность – թթվայնություն
кодекс – 1. օրինագիրք, 2. վարքականոն
компенсация затрат на обучение – ուսման ծախսերի հատուցում
кредо – հավատամք
личный состав – անձնակազմ
локализация – տեղափակում
маневренная группа – տարաշարժուն խումբ
марш – 1. ռազմերթ, 2. քայլերգ
межвидовая разведывательно-поражающая система – միջտեսակային հետախուզախոցող համակարգ
менталитет – см. *мышление*
мыслительная сфера – մտային ոլորտ
мышление – մտածողություն
навигационно-временно́е обеспечение – ուղեվարաժամանակային ապահովում
навыки военно-учетной специальности – զինհաշվառումային մասնագիտական հմտություններ
наукоцентричная война – գիտութենակենտրոն պատերազմ
опосредованная война – միջնորդավորված պատերազմ
определение угроз – սպառնալիք-

ների որոշարկում
оптико-волоконный кабель – օպտիկաթելքային մալուխ
основность – հիմնայնություն
перечень основных заданий подразделения – ստորաբաժանման հիմնական առաջադրանքների ցանկ
повстанчество – ապստամբականություն
прокси-война – см. *опосредованная война*
пропускная способность канала – կապուղու թողունակություն
противодействие – հակազդեցություն
психологическая депрессия – ընկճախտ
реагирование – հակազդում
реакция – см. *реагирование*
результативность – արդյունարարություն
рейд – մարտարշավ
ретрансляционная станция – վերահաղորդիչ կայան
сержант – սերժանտ
структурирование информации – տեղեկույթի կառուցավորում
сухопутное боевое действие – ցամաքային մարտական գործողություն
хакер – ծրագրահեն
церемония присвоения звания – կոչում շնորհելու արարողություն
честь мундира – համազգեստի պատիվ
экзоскелет – արտակմախք
экипаж – անձնակազմ
этикет – վարքականոն

## ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

acclimatization – 1. կլիմայավարժեցում, 2. կլիմայավարժում, 3. կլիմայավարժվածություն
acidity – թթվայնություն
adaptability – հարմարվողականություն
attrition – see *exhaustion*
basicity – հիմնայնություն
channel capacity – see *transmission capacity*
code – օրինագիրք
containment – see *localization*
counteraction – see *opposition*
creed – հավատամք
crew – անձնակազմ
crucible – բով
discipline – 1. կարգապահություն, 2. կարգասիրություն
dosimetry – քաժնաչափություն
esprit de corps – համազգեստի պատիվ
ethos – վարքականոն
exhaustion – հյուծում
exoskeleton – արտակմախք
fiber cable – օպտիկաթելքային մալուխ
fiber optic cable – see *fiber cable*
foray – see *raid*
government institution – պետության սահմանակարգ
ground combat – ցամաքային մարտական գործողություն
hacker – ծրագրահեն
hyperventilation – գերօդափոխություն
hypoxia – թերթթվածնություն, թթվածնաքաղց
induction ceremony – կոչում շնորհելու արարողություն
information confrontation – տեղեկատվական ընդդիմամարտություն
information structuring – տեղեկույթի կառուցավորում
inserted jammer transmitter – խան-

գարումների արտադիր (հակառակորդի թիկունքում) հաղորդիչ
instinct for self-preservation – ինքնապահպանման բնազդ
interface – տիրույթների փոխշփում
internal drive – ներքին մղում
interspecific reconnaissance and destruction system – միջտեսակային հետախուզախոցող համակարգ
knowledge-centric warfare – գիտութենակենտրոն պատերազմ
localization – տեղափակում
maneuver group – տարաշարժուն խումբ
march – 1. ռազմերթ, 2. քայլերգ
mental depression – ընկճախտ
mentality – մտածողություն
mental sphere – մտային ոլորտ
military occupational specialty skills – զինհաշվառումային մասնագիտական հմտություններ
military strategy – ռազմական ռազմավարություն, պատերազմավարություն
mindset – see *mentality*
mission-essential task list – ստորաբաժանման հիմնական առաջադրանքների ցանկ
morale – 1. մարտական ոգի, 2. բարոյական ոգի
navigation and timing – ուղեվարաժամանակային ապահովում
NCO – see *noncommissioned officer*
noncommissioned officer – սերժանտ
opposition – հակազդեցություն
oxygen lack – see *hypoxia*
performance – 1. արդյունարարություն, 2. կատարողականություն
personnel – անձնակազմ
proxy war – միջնորդավորված պատերազմ
radio relay station – վերահաղորդիչ կայան
raid – մարտարշավ
reaction – հակազդում
readiness – պատրաստություն
rebelliousness – ապստամբականություն
retransmission station – see *radio relay station*
sergeant – see *noncommissioned officer*
threat identification – սպառնալիքների որոշարկում
transmission capacity – կապուղու թողունակություն
tuition reimbursement – ուսման ծախսերի հատուցում
watchword – կարգախոս
willingness – պատրաստակամություն

## Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 20000 նիշ՝ ներառյալ բացատները), հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները ոչ ավելի, քան 1 (մեկ) էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

## К сведению авторов и читателей

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала (максимально 20000 знаков, включая пробелы), с приложением резюме на русском и английском языках объемом не более одной страницы.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

## For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length (maximum 20000 characters with spaces). Provide Russian and English summaries (no more tham 1 page long).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Ա. Խաչատրյան*
Լեզվական խմբագրման խմբի պետ՝ *Ք. Վ. Փիրոյան*
Տեխնիկական բաժանմունքի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Պատասխանատու խմբագիր՝ *Ա. Զ. Պետրոսյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի*

Թարգմանիչներ՝ *Ա. Ա. Մարտիրոսյան, Ն. Ս. Մկրտչյան,*
*Թ. Դ. Չիլինգարյան*

Համակարգչային ապահովումը՝ *Ս. Ռ. Հակոբջանյանի, Լ. Հ. Պապիկյանի,*
*Տ. Մ. Տիրացույանի*

Ձևավորող նկարիչ՝ *Գ. Վ. Իսկանդարյան*

Սրբագրումը՝ *Ն. Հ. Բաղդասարյանի, Գ. Շ. Հարությունյանի*

Լուսանկարչական ապահովումը՝ *Գ. Վ. Իսկանդարյանի և համացանցային*

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ուլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ http://www.mil.am/arm/index.php?page=105
Պաշտոնական բլոգ-կայքը՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. հասցեն՝ haykakanbanakmod@gmail.com

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2022 թ.

Ստորագրվել է տպագրության 29.11.2022:
Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70×100 1/16:
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր:
Պայմանական տպագրական 10,5 մամուլ:
Տպաքանակը՝ 400: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat»,
«Russian Baltica», «Times»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «ԼԻՄՈՒՇ» տպարանում



ՀՀ ՊՆ, ԶՈՒ-ի և ԶՈՒ-ի ԳՇ ղեկավար կազմի և բարձրաստիճան
սպայական կազմի աշխատանքային խորհրդակցություն
ՀՀ Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի ղեկավարությամբ

Առաջին շարքում. ձախից աջ՝ Գլխավոր շտաբի պետ
գեներալ-մայոր *Էդվարդ Ասրյան*,
Պաշտպանության նախարար *Սուրեն Պապիկյան*,
Պաշտպանության նախարարի տեղակալ *Արման Սարգսյան*

Երևան, 2022 թ. հոկտեմբերի 14



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК HAIKAKAN BANAK 3 (113). 2022